

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ.

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՅԱՅՐԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ,
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝
ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ

Սույն հրապարակումը մշակել է «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն՝ ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ: Դրանում արտահայտված տեսակետները, բացահայտումները, մեկնաբանությունները և առաջարկությունները հեղինակներինն են և անպայամանորեն չէ, որ արտացոլում են ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի տեսակետները:



ԻՐԱՎՈՒՆԵՔԻ
ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ
Europe In Law Association



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

Հեղինակային խումբ՝

Վահե Գրիգորյան, փաստաբան

Տիգրան Եգորյան, փաստաբան

Սիրանույշ Իսկանդարյան, փաստաբան

Լուսինե Հակոբյան, փաստաբան

Գենյա Պետրոսյան, փաստաբան

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	5
Քաղաքացիական գործերը և դրանց վերլուծությունը ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպերի շրջանակներում.....	9
Ռուբեն Հայրապետյանը, Սամվել Ալեքսանյանը և Լևոն Սարգսյանն ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի.....	9
Բելա Քոչարյանն ու Սեդրակ Քոչարյանն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի.....	20
Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ի.....	33
Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի	39
Սուսաննա Բաղդասարյանն ընդդեմ «Հայք» թերթի խմբագրության, թղթակից Արման Գալոյանի և Սվետլանա Առաքելյանի.....	51
Գևորգ Հայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի.....	57
Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշումը	64
«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի (հրատարակիչ՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ)	68
Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի.....	73
Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրության» ՍՊԸ-ի և Աննա Թորոսյանի	79
Տիգրան Տերտերյանն ընդդեմ «168 ժամ» ՍՊԸ-ի և Մարինե Մարտիրոսյանի	85
«Իջևանի ՃՃՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի.....	91
Վանո Եղիազարյանն ընդդեմ Ադրինե Թորոսյանի, երրորդ անձ՝ «Հետք» շաբաթաթերթ.....	100
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի	105
Մարգարիտա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի.....	114
Երևանի պետական համալսարանը և Արա Գաբուզյանն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ, լրագրող Սոնա Հարությունյանի և Սիրելյան Եղիազարյանի	119
«Կյանքի Խոսք» եկեղեցի՝ կրոնական կազմակերպություն, Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն», «Արզումենտի նեղելի վ Առմենիի» շաբաթաթերթի.....	124
Արթուր Սաքունցն ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի և Հայաստանի հանրային հեռուստաընկերության	131
Ֆարաոն Միրզոյանն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի.....	133
Իջևանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության.....	140
Առաջարկություններ	148

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն հետազոտության նպատակն է պարզել, թե զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ քաղաքացիական գործերով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերով որքանով են կիրառվում միջազգային իրավունքով, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային վճիռներով՝ արտահայտվելու ազատության իրավունքի ոլորտում սահմանված հիմնարար սկզբունքները և չափորոշիչները: Հետազոտության համար հիմք են հանդիսացել ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի դատական ակտերը: Ուսումնասիրվել են ոչ բոլոր դատական ակտերը, այլ միայն նրանք, որոնք շոշափում են արտահայտվելու ազատության իրավունքի ոլորտում այնպիսի կարևորագույն հիմնախնդիրներ, ինչպիսիք են խոսքի ազատության, լրագրողի և լրատվամիջոցի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, հանրային շահի խնդիրը, քաղաքական և հասարակական գործիչների կողմից քննադատական խոսքի հանդեպ առավել մեծ հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը, փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակում կատարելու խնդիրը և այլն:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ թեև դատարանները 2010–2011թ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածում շատ քիչ և ոչ միշտ տեղին են կիրառել ՄԻԵԴ–ի նախադեպային վճիռներով սահմանված մի շարք կարևորագույն սկզբունքներ և չափորոշիչներ, 2011թ երկրորդ կեսից սկսած ՀՀ դատարանները դրական առաջընթաց են արձանագրել ՄԻԵԴ–ի նախադեպերի կիրառման հարցում: Այս կապակցությամբ հարկ է առանձնացնել հատկապես *Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ–ի* քաղաքացիական գործով վճիռը, որտեղ Դատարանը միանգամայն ճիշտ և տեղին կիրառել է ՄԻԵԴ–ի՝ տվյալ գործին վերաբերելի համարյա բոլոր կարևորագույն սկզբունքները: Առաջընթացը հատկապես ակնառու է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն դատարանը նույն կազմով *Իջևանի քաղաքապետն ու Իջ-*

ևանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի գործով մինչ այդ կայացրած վճռով ընդհանրապես որևէ անդրադարձ չէր կատարել ՄԻԵԴ-ի նախադեպերով սահմանված և ոչ մի սկզբունքի: 2011թ. երկրորդ կեսից ի վեր դատարանների մեծ մասն անալայմանորեն անդրադարձել են խոսքի ազատության իրավունքի կարևորությունն ամրագրող այնպիսի շրջադարձային նախադեպային վճռի, ինչպիսին Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Handyside v. UK*, 07/12/1976, դիմում թիվ 5493/72) գործով ՄԻԵԴ-ի վճիռն է: Դատարանները վերջին մեկուկես տարիների ընթացքում ավելի ակտիվորեն են սկսել կիրառել քննադատական խոսքի հանդեպ քաղաքական գործիչների կողմից առավել մեծ հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունն ամրագրող *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (*Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82) գործով կայացված վճիռը: Գնալով ավելի ու ավելի են կարևորվում ժողովրդավարական հասարակությունում մամուլի «հանրային հսկիչի» գործառույթի իրականացման մասին նախադեպերը և այլ կարևոր սկզբունքներ ամրագրող նախադեպային վճիռներ:

Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ առաջընթացը լիարժեք չէ և դեռևս կատարելագործվելու և հիշյալ սկզբունքներն առավել ճիշտ ընկալելու և տեղին կիրառելու մեծ խնդիր կա: Դատարանների գերակշիռ մեծամասնությունը դեռևս լիարժեքորեն չի պատկերացնում ՄԻԵԴ-ի նախադեպերով սահմանված մի շարք կարևորագույն սկզբունքներ: ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի մի զգալի մասում ՄԻԵԴ-ի նախադեպերի վկայակոչումները, կարծես, ինքնանպատակ բնույթ են կրում: Դրանցից շատերն ընդհանրապես վերաբերելի չեն քննվող գործերի փաստական հանգամանքներին, շատերն ուղղակի տեղ են գտնում հիշյալ դատական ակտերում՝ դրանց տպավորիչ ծավալներ ապահովելու և եվրոպական իրավունքի իմացություն դրսևորելու նպատակով: Որոշ նախադեպերի արվող հղումներն ուղղակիորեն սխալ են: Մասնավորապես՝ քաղաքական և հասարակական գործիչներ հայցվորների օգտին կայացված վճիռների մեծ մասում որպես դատարանի եզրակացության հիմնավորում նշվում է *Պֆայֆերն ընդդեմ Ավստրիայի* (*Pfeifer v. Austria*, 15/11/2007, դիմում թիվ 12556/03, 35-րդ պարբերություն) գործից մի հատված, որի համաձայն՝ «Երբ մարդու հեղինակությունը վնասված է, խախտվում է անձի մասնավոր կյանքի իրավունքը, եթե ապահովված չէ արդարացի հավասարակշռություն «մրցակցող» շահերի միջև՝ հաշվի առնելով անձի անմեղության և բարեվարքության կանխավարկածը»: Այս գործին հղումն առաջին անգամ հայտնվել է *Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի* գործով Հայցվոր կողմի փաստարկումներում, իսկ դատարանն այնուհետև օգտագործել է այն իր վճռի հիմնավորումներում՝ առանց ստուգելու, թե արդյոք այդ գործով, իրոք, ՄԻԵԴ-ն արտահայտել է նման միտք, թե՛ ոչ: Այս ձևակերպումն այնուհետև լայն շրջանառություն է ստացել այն դատական ակտերում, որոնցով դատարաններն իրենց որոշումը կայացրել են հօգուտ անձի մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի, և նրանցից որևէ մեկը չի փորձել հավաստիանալ, թե արդյոք ՄԻԵԴ-ն իրականում տվել է նման ձևակերպում, թե՛ ոչ:

Դատարանները դեռևս չեն կիրառում նաև ՀՀ սահմանադրության 43-րդ հոդվածի և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի տրամաբանությունից բխող եռաստիճան թեսթը: Դրանով պահանջվում է, որ դատարանը գնահատի, թե արդյոք յուրաքանչյուր գործով միջամտությունն արտահայտվելու ազատության իրավունքին:

1. «սահմանված է օրենքով». դատարանը *Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Silver v. UK, 25/03/1983, դիմում թիվ 5947/72)* վճռով սահմանված չափորոշիչներին համապատասխան պետք է գնահատի, թե արդյոք արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը սահմանված է ներպետական օրենսդրությամբ, արդյոք այդ օրենսդրությունը իրապես մատչելի է քաղաքացու համար և բավարար չափով հասակ՝ քաղաքացուն հնարավորություն տալու համապատասխան իրավական օգնություն ստանալու միջոցով կարգավորելու իր վարքագիծը:
2. «հետապնդում է իրավաչափ նպատակ». ըստ *Կումպանան ընդդեմ Ռումինիայի (Cumpăna v. Romania, 33348/96, դիմում թիվ 17/12/2004, 86-րդ պարբերություն)* գործով ՄԻԵԿ-ի վճռի՝ գրպարտության գործերով իրավաչափ նպատակն այլ անձանց հեղինակության պաշտպանությունն է: Դատարանը սահմանել է, որ անձի հեղինակության պաշտպանության իրավունքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից մեկն է՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի տարր:
3. «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում». թեսթի այս աստիճանը գնահատելիս դատարանը պետք է որոշի, թե արդյոք միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»՝ մտապահելով, որ «անհրաժեշտը հաճախ ավելին է, քան «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին»... և որ այն պետք է բխի «ձնշող հասարակական կարիքից», լինի համաչափ հետապնդող իրավաչափ նպատակին... և որ սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի փաստերով *Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի, (Barthold v. Germany, 25/03/1985, դիմում թիվ 8734/79, 55-րդ պարբերություն)*»:

Թերությունների շարքում հարկ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ առ այսօր չկա միասնական մասնագիտական տերմինաբանություն, և որ ՄԻԵԿ-ի նախադեպերը հաճախ կիրառվում են խիստ տարբեր, հաճախ՝ ոչ ճիշտ թարգմանություններով: Այսպես՝ արտահայտվելու ազատության իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ի կարևորագույն նախադեպերից մեկի՝ (*Հենդիսայդն Միացյալ Թագավորության (Handyside v UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72)*) վճռում տեղ գտած ձևակերպումը դատական ակտերի գերակշիռ մեծամասնության մեջ թարգմանաբար ձևակերպված է հետևյալ կերպ. «Արտահայտվելու ազատությունը...կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ կամ չեզոք, այլ նաև նրանց, որոնք **վիրավորում են**, ցնցում կամ անհանգստություն պատճառում»: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքներ

րի եվրոպական դատարանի օգտագործած եզրերն են «offend, shock or disturb», և առաջինը ոչ մի կերպ չի կարող թարգմանվել որպես «վիրավորել» (insult), այլ լավագույն դեպքում՝ «վրդովեցնել», քանի որ հիշյալ եզրերի տարբերությունը անվանարկման ուժգնության կամ աստիճանի մեջ է:

Հեղինակային խումբը լիահույս է, որ հետազոտությունը կհետաքրքիր լրագրողներին, փաստաբաններին, դատավորներին և արտահայտվելու ազատության իրավունքով հետաքրքրվող յուրաքանչյուր անձի, ինչպես նաև թույլ կտա ընթերցողին առավել ճիշտ պատկերացում կազմել տվյալ ոլորտում առկա հիմնախնդիրների մասին և կատարելագործել արտահայտվելու ազատության հիմնաքարային իրավունքի ոլորտում իր գիտելիքներն ու ընկալումները:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԵԿ-Ի ԵՎ ՄԻԵԴ-Ի ՆԱԽԱԴԵՊԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ, ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ ԵՎ
ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ
(հրատարակիչ՝ «Դարեսկիզբ» ՍՊԸ)**

Գործի հանգամանքները

07.02.2011թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուբեն Հայրապետյանի, Լևոն Սարգսյանի, Սամվել Ալեքսանյանի (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող)՝ պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, վճռեց Հայցվորների հայցը բավարարել մասնակի, պարտավորեցնել «Դարեսկիզբ» ՍՊԸ-ին՝ հերքելու «Հայկական ժամանակ» օրաթերթի համապատասխան համարում հրապարակված «Ութից յոթը ցուցակում են» խորագրով հոդվածում Հայցվորների պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները, և հերքումը տպագրել նույն «Հայկական ժամանակ» օրաթերթում՝ դատարանի կողմից սահմանված բովանդակությամբ և ձևով:

Դատարանը վճռել էր «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից հօգուտ Ս. Ալեքսանյանի, Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի համապատասխանաբար բռնագանձել 2.044.000-ական ՀՀ դրամ յուրաքանչյուրի համար, որից՝ 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես փոխհատուցման գումար, 44.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ներկայացուցչության ծախսերի մասով հայցը մերժվել էր:

Հողվածի բովանդակությունը.

«Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակվել է «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածը, որն ուղեկցվել է հոդվածում հիշատակված ութ անձանց, այդ թվում՝ Հայցվորների լուսանկարներով և ունեցել հետևյալ բովանդակությունը.

«Մեր տեղեկություններով՝ ՌԴ ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը և մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում հիմնականում նարկոթրաֆիքինգի և փողերի լվացման գործերով, պարզել են, որ հանցագործությունների հետ առնչություն ունեն նաև ՀՀ պաշտոնյաներ:

ՌԴ իրավապահները պարզել են, որ ռուսական կրիմինալ խմբավորումները ՀՀ տարբեր

պաշտոնյաների հետ սերտ կապերի մեջ են, և կազմել են տարբեր քրեական գործերի հետ առնչություն կամ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունեցող ՀՀ պաշտոնյաների ցուցակ, որում ընդգրկել են 32 անուն: Մեր տեղեկություններով, այս ցուցակի վերաբերյալ ՌԴ դատախազության ներկայացուցիչները գրուցել են «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ: Ցուցակը ՌԴ դատախազության ղեկավարությունը ոչ պաշտոնական ֆորմատով ցուցադրել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին և ԱԱԾ տնօրեն Գորիկ Հակոբյանին: Ռուսական կողմը ցուցակում նշված անձանց պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացրել: Սակայն, ՀՀ վերը նշված պաշտոնյաներն իրենց ռուս գործընկերներին պատասխանել են, որ այդ խնդիրը լուծելու համար իրենք շատ փոքր մարդիկ են: Մեր տեղեկություններով, ՌԴ իրավապահների կազմած ցուցակի առաջին յոթ հորիզոնականներում հետևյալ անուններն են. Սերժ Սարգսյանի եղբայր, Աժ պատգամավոր Սաշիկ Սարգսյան, Աժ պատգամավորներ Ռուբեն Հայրապետյան (Նեմեց Ռուբո) և Լևոն Սարգսյան (Ալրադացի Լյովիկ), ՀՀ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյան, Աժ պատգամավոր Սամվել Ալեքսանյան (ԼՖիկ Սամո), Աժ նախագահ Հովիկ Աբրահամյան և ԱԺ ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյան: Ըստ մեր տեղեկությունների՝ ՌԴ իրավապահները ցուցակում Սերժ Սարգսյանի անունը չեն ընդգրկել, քանի որ ի սկզբանե բացառել են, որ հնարավոր կլինի նրան պատասխանատվության ենթարկելու հարց բարձրացնել»:

Իրենց՝ 26.10.2010թ. «Դարեսկիզբ» ՍՊԸ–ին ուղղված գրությամբ Հայցվորները հայտնել են, որ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և հանդիսանում է զրպարտություն, ինչը ոտնահարում է իրենց պատիվն ու արժանապատվությունը: Նույն գրությամբ Հայցվորները, ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածով, պահանջել են հերքել իրենց պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները: Հերքման տեքստում ասվում էր հետևյալը. «Ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և տպագրվել է առանց դրա համապատասխանությունը իրականությանը ստուգելու»: 01.11.2011թ. պատասխան գրությամբ հերքման պահանջի մասին գրությունը «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը հրաժարվել է տպագրել՝ պատճառաբանելով, որ, համապատասխան «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի, ներկայացված հերքման տեքստն իր մեջ չի ներառում հերքման ենթակա կոնկրետ փաստական հանգամանքներ: Ի հավելումն այս ամենի՝ նա հայտնել է Հայցվորներին, որ նշված տեղեկատվությունը հաստատել է «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանը, ով տեղեկացվել է այդ ամենի մասին ՌԴ դատախազության ներկայացուցիչների կողմից:

Ընդհանուր իրավասության դատարանի վերլուծությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը սահմանում է, որ տարածված տեղեկությունները կարող են զրպարտություն համարվել, եթե ա) դրանք արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, բ) դրանք չեն համապատասխանում իրականությանը և գ) դրանք հրապարակային ներկայացվել են:

Պատասխանողի կողմից հրապարակված հոդվածում տեղ են գտել «նարկորաֆիք, թրաֆիկինգ և փողերի լվացում» հասկացությունները: Դրանք ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության տեսակներ են, հանրության համար վտանգավոր արարքներ, որոնց հետ ցանկացած անձի, առավել ևս ժողովրդի կողմից ընտրված ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի առնչության փաստը հանրության կողմից դատապարտելի, պարսավելի և արատավորող է: Չնայած դրան՝ Պատասխանողը դատարանին չի ներկայացրել որևէ ապացույց, ինչը կհիմնավորեր այդ տեղեկությունների համապատասխանությունն իրականությանը: Ավելին, չունենալով ապացուցման պարտականություն՝ Հայցվորները Դատարանին են ներկայացրել Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազության գրությունն առ այն, որ Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազությունում Ռուսաստանի տարածքում հանցագործությունների իրագործմանը վերոնշյալ հոդվածում նշված անձանց մասնակցության մասին վկայող որևէ նյութ առկա չէ»:

Հաշվի առնելով ապացուցման պարտականությունը Պատասխանողի կողմից չկատարելու հանգամանքը և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության կողմից տրված տեղեկատվությունը՝ Դատարանը հաստատված է համարել Պատասխանողի տարածած տեղեկությունների մտացածին լինելու և իրականությանը չհամապատասխանելու փաստը:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի 11-րդ կետի՝ նույն հոդվածի 8-րդ կետով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս Դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, զրպարտողի գույքային դրությունը:

Հայցվորները հանդիսանում են Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ, և որպես Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ, ունեն որոշակի ընկալելի դիրք հասարակությունում, ինչը պարտավորեցնում է ունենալ անբասիր վարքագիծ և օրինակելի կեցվածք, այնինչ Պատասխանողի կողմից հոդվածում տարածած տեղեկությունները վերը նշված հանցագործությունների հետ այդ անձանց հնարավոր առնչության փաստի վերաբերյալ, այլ տեղեկատվություն են հաղորդում ընթերցողին՝ վտանգելով Հայցվորների, որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների նկատմամբ հասարակական վերաբերմունքի օբյեկտիվ դրսևորումը: Հանրության կողմից Հայցվորներին տրվող գնահատականը ունի չափազանց կարևոր գործնական նշանակություն, քանի որ բացասական գնահատականը նսեմացնում է Հայցվորների, որպես անձի և ՀՀ ազգային ժողովի պատ-

զամավորի, հեղինակությունը, խոչընդոտներ է ստեղծում հասարակական, տնտեսական հարաբերություններին լիարժեք մասնակցելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, նկատի ունենալով հասարակական կյանքում Հայցվորների՝ որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների զբաղեցրած դիրքը, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ զրպարտող տեղեկությունները տարածվել են 7480 տպաքանակով հրատարակվող օրաթերթում՝ հասու դառնալով հասարակության լայն զանգվածներին՝ Դատարանը փոխհատուցման չափը սահմանում է սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով յուրաքանչյուր Հայցվորի մասով:

Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ինքն է ապացուցում իր վկայակոչած փաստերը, Պատասխանողի կողմից դատարան չներկայացվեց գույքային դրությունը բնութագրող որևէ ապացույց, որպիսի հանգամանքը հիմք կարող էր հանդիսանալ փոխհատուցման չափը նվազեցնելու համար:

Դատարանի կողմից վկայակոչվել են նաև ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպեր. Այսպես, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը պաշտպանում է լրագրողների՝ տեղեկատվություն տարածելու իրավունքը, որ վերջիններս գործեն բարեխղճությամբ և տիրապետեն արժանահավատ փաստական հիմքերի՝ տրամադրելով «հավաստի և ճշգրիտ» տեղեկատվություն լրագրողական էթիկայի նորմերին խիստ համապատասխան» *Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն), Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի (Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37-րդ պարբերություն):*

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը ևս երաշխավորում է խոսքի ազատության իրավունքը, սակայն այդ իրավունքը չի հանդիսանում բացարձակ և ենթակա է սահմանափակումների: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, որը երաշխավորում է խոսքի ազատության իրավունքը, պաշտպանում է նաև անձի հեղինակությունը և այլոց իրավունքները: ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում հստակ նշել է.

«Կասկածից վեր է, որ Կոնվենցիայի 10(2)-րդ հոդվածը պաշտպանում է բոլոր անձանց հեղինակությունը և այդ պաշտպանությունից անգամ օգտվում են քաղաքական գործիչները, երբ նրանք նույնիսկ չեն գործում որպես մասնավոր անձինք»:

«Երբ մարդու հեղինակությունը վնասված է, խախտվում է անձի մասնավոր կյանքի իրավունքը, եթե ապահովված չէ արդարացի հավասարակշռություն «մրցակցող» շահերի միջև՝ հաշվի առնելով անձի անմեղության և բարեվարքության կանխավարկածը» (*Պֆայֆերն ընդդեմ Ավստրիայի/Pfeifer v. Austria, 15/11/2007, դիմում թիվ 12556/03, 35-րդ պարբերություն, ECHR 2007-XII):*

Ընդ որում, այս սկզբունքը վկայակոչվել է ոչ ձիշտ բովանդակությամբ: Ելնելով վե-

րոնշյալ հիմնավորումներից՝ Դատարանը որոշեց Պատասխանողից հոգուտ յուրաքանչյուր Հայցվորի բռնագանձել նվազագույն աշխատավարձի 2000–ապատիկի չափով փոխհատուցում (1000 ՀՀ դրամ):

Վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, որն անփոփոխ է թողել առաջին աստիճանի դատարանի վճիռը: Վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Դատարանը պատշաճ կարգով չի քննարկել ՄԻԵԿ–ից բխող մի քանի էական հիմնահարցեր, որոնք կարող էին ուղղակի ազդեցություն ունենալ սույն գործի ելքի վրա: Դրանք հանրային շահին, կողմերի կարգավիճակին, փաստական հանգամանքների և գնահատողական դատողությունների տարբերակմանը, վնասների փոխհատուցման համաչափությանը վերաբերող հարցերն են:

Հոդվածի հանրային նշանակությունը

ՄԻԵԿ–ի կողմից հետևողականորեն տարբերակվել են այն դեպքերը, երբ առկա է հասարակության տեղեկացված լինելու իրավունքը և երբ հրապարակումը ծառայում է զուտ որոշ ընթերցողների հետաքրքրասիրությունը բավարարելուն (*Ստանդարտ Վերլագս ԳմբԻ–ն ընդդեմ Ավստրիայի/ Standard Verlags GmbH v. Austria*, 04/06/2009, դիմում թիվ 34702/07, 32–րդ պարբերություն, *Թոնսբերգս Բլադ ԱՍ–ն ընդդեմ Նորվեգիայի/ T’nsbergs Blad AS v. Norway*, 01/03/2007, դիմում թիվ 510/04, 87–րդ պարբերություն) գործով ՄԻԵԿ–ը շեշտել է.

«Երբ հանրային գործիչը հնարավոր է խախտած լինի օրենքը, նույնիսկ մասնավոր կարգով, իր պաշտոնական լիազորություններից դուրս, այդ գործողությունները կարող են հանդիսանալ հանրային մտահոգության առարկա և այդպիսով պաշտպանված լինել 10–րդ հոդվածով»:

Կարհուվաարան ընդդեմ Ֆինլանդիայի (Karhuvaara v. Finland, 16/11/2004 դիմում, թիվ 53678/00, 45–րդ պարբերություն) գործով կայացված վճռով ՄԻԵԿ–ը շեշտել է.

«Չնայած խնդրո առարկա հարցը հնարավոր է մեծ հանրային մտահոգության առարկա չի հանդիսանում, եթե այն առնչվում է քաղաքական գործիչների կյանքին և կարող է ազդել քվեարկության վրա, այն կարող է ընկնել ժողովրդավարական հասարակությունում տեղեկացված լինելու հիմնարար իրավունքի շրջանակների մեջ»:

«Թեև մամուլը չպետք է անցնի ընդունված սահմանները, որոնց թվում են «ազգային անվտանգության շահերը», «դատարանի հեղինակության պահպանումը», այն պարտավոր է ներկայացնել հանրային շահին առնչվող տեղեկություններ և գաղափարներ: Հասարակությունն էլ իր հերթին իրավունք ունի դրանք ստանալու: Այլ պարագայում մամուլը կզրկվեր «հանրային հսկիչի» իր առաքելությունից» (*Օբզերվերը և Գարդիանսն ընդդեմ Միացյալ Թագա-*

վորություն/ *Observer and Guardian v the UK*, 26/11/91, դիմում թիվ 13585/88, 59 (բ) պարբերություն):

Վիճահարույց հողվածը վերաբերում է ութ քաղաքական գործիչների: Նրանց շարքում են սույն գործով Հայցվոր հանդիսացող ԱԺ-ի երեք պատգամավորները՝ Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանը: Վիճարկվող հողվածում տեղեկատվություն է ներկայացվում վերոհիշյալ անձանց՝ ՌԴ-ի տարածքում կատարված հանցագործություններին ունեցած առնչության և ռուսական կրիմինալ խմբավորումների հետ ունեցած սերտ կապերի մասին: Պատգամավորների կողմից նման առնչություններին վերաբերող հրապարակման մեջ անկասկած առկա է հանրային շահը:

Այնուամենայնիվ, Դատարանը տվյալ գործում հանրային շահի վերաբերյալ իրավական վերլուծություն չի կատարել, ինչը իր ազդեցությունը կարող էր ունենալ գործի քննության և վնասների հատուցման չափի վրա:

Հայցվորի անձը և կարգավիճակը

ՄԻԵԴ-ի կողմից գրպարտության վերաբերյալ գործերը քննելիս առանձնակի կարևորություն է տրվում նաև կողմերի կարգավիճակին: Թեև Դատարանը վերլուծել է կողմերից մեկի՝ Հայցվորի կարգավիճակը, դատարանի մեկնաբանությունը և դրա հիման վրա արված հետևություններն ամբողջովին հակասում են ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածից բխող սկզբունքներին:

«Այսպես, քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռում պաշտպանելու նաև այլոց, այն է՝ բոլոր անձանց հեղինակությունը, և այս պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է կշռադատվեն՝ քաղաքական հարցերի բաց քննարկման շահերից ելնելով» (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41-42-րդ պարբերություններ, *Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի/ Feldek v. Slovakia*, 12/07/2001, դիմում թիվ 29032/95, 74-րդ պարբերություն, *Քրոն Վերլագն ընդդեմ Ավստրիայի/ Krone Verlag GmbH & Co. KG v. Austria*, 11/12/2003, դիմում թիվ 27306/07, 53-րդ պարբերություններ):

Այս նույն սկզբունքը ճանաչվել է նաև ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի «Ժողովրդավարական հասարակությունում ԶԼՄ-ների չափորոշիչների վերաբերյալ 1636 (2008) բանաձևում», որի համաձայն՝ պետական պաշտոնյաները չպետք է պաշտպանվեն քննադատությունից և վիրավորանքից ավելի բարձր մակարդակով, քան

մասնավոր անձինք, օրինակ՝ քրեական օրենսդրությամբ, որը նախատեսում է ավելի բարձր տուգանքներ:

Այնուամենայնիվ, հակառակ նկարագրված հիմնարար սկզբունքների՝ ընդհանուր իրավասության դատարանը չափից ավելի է կարևորել 3 Հայցվոր պատգամավորների հեղինակության պաշտպանությանը՝ հենց նրանց կարգավիճակից ելնելով, որը վնասների փոխհատուցման առավելագույն չափի սամանման հիմքերից մեկն է հանդիսացել: Հատկանշական է, որ սույն գործով Դատարանի հիշյալ մեկնաբանությունը վկայակոչել է Դիմող կողմը ՀՀ Սահմանադրական դատարանում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելիս: ՀՀ Սահմանադրական դատարանն իր 15.11.2011թ. թիվ 997 որոշմամբ հատուկ անդրադարձել է այդ հարցին հետևյալ կերպ.

«Հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումները օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս»:

Պատասխանողի անձը և կարգավիճակը

Տվյալ գործով Պատասխանողը տպագիր լրատվամիջոց է: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով հաստատվում է, որ գրապարտության գործերով քննարկման ենթակա էական խնդիր է հանդիսանում նաև Պատասխանողի կարգավիճակը: ՄԻԵԴ-ի վերահաստատած սկզբունքի համաձայն՝

«Մամուլը յուրահատուկ պաշտպանություն է վայելում, քանի որ այն ոչ միայն իրավունք, այլև պարտականություն ունի տեղեկություններ և գաղափարներ տարածելու հանրային շահին վերաբերող ցանկացած հարցի շուրջ, իսկ հանրությունն իրավունք ունի դրանք ստանալու» (*Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ/ Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 50 (բ) պարբերություն): «Բացի այդ, լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն» (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 59-րդ պարբերություն, *Դիչանդը և այլք ընդդեմ Ավստրիայի/ Dichand and Others v. Austria*, 26/02/2002, դիմում թիվ 29271/95, 41-րդ պարբերություն, *Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/ Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 38-րդ պարբերություն):

Այնուամենայնիվ, Դատարանի վճռում իրավական վերլուծություն չի կատարվել սույն գործով Պատասխանողի՝ «Հայկական ժամանակ» տպագիր մամուլի միջոցի կարգավիճակի վերաբերյալ, այլ, ընդհակառակը, տպագիր միջոց հանդիսանալու հանգամանքը մեկնաբանվել է սույն սկզբունքին հակառակ իմաստով:

Փաստացի տվյալներ և գնահատողական դատողություններ

Դատարանը չի կատարել հատուկ վերլուծություն վիճահարույց հոդվածի փաս-

տացի տվյալների և գնահատողական դատողությունների որակման և տարբերակման մասով:

Թեև ներկայացված հայտարարությունները առավելապես փաստերի շարադրանքի բնույթ ունեն, քննարկման ենթակա էին նաև հողվածում առկա սահմանումների ձևակերպումները, որոնք բավական անորոշ բնույթի եզրեր էին պարունակում՝ ինչպիսիք են, օրինակ, «առնչություն» և «կապեր» արտահայտությունները: Սակայն, վերոնշյալ ձևակերպումների առկայության պարագայում անգամ հողվածում ներառված հայտարարությունները կարող են դիտվել որպես արատավորող բնույթ ունեցող հայտարարություններ:

Արատավորող բնույթ ունեցող հայտարարություններն ստուգելու՝ լրագրողի պարտականության առնչությամբ ՄԻԵԴ-ի կողմից մշակված մոտեցումները հետևյալն են.

«Կոնվենցիայի 10-րդ հողվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան» (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն, *Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/ Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37-րդ պարբերություն): «ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածի 2-րդ մասին համապատասխան՝ այս ազատության իրականացումը ենթադրում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: Այս պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում **էական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը և խախտվում են «այլոց իրավունքները»:** «Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար» (*Եվրոպայի չեխ ՀՈՕ ընդդեմ Խորվաթիայի/ Europapress Holding D.O.O. v. Croatia*, 22/10/2009, դիմում թիվ 25333/06, 66-րդ պարբերություն:)

Տվյալ պարագայում գործն առնչվում է Հայցվորների կողմից քրեաիրավական բնույթի արարքների կատարմանը կամ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ առնչություններ ունենալու մասին հայտարարություններին, որոնք իրենց բնույթով պահանջում են առավել ամուր փաստական հիմքեր:

Միննույն ժամանակ, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձին արատավորող փաստացի տվյալները /statement of fact/ ստուգելու պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «գրպարտության բնույթից և աստիճանից» և նրանից, թե որքանով են ՋԼՄ-ները ողջամտորեն հուսալի համարում իրենց աղբյուրները, որոնց հիման վրա պնդումներ են արել (*Փեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի/ Pedersen and Baadsgaard v. Denmark*, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78-րդ պարբերություն, *Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66-րդ պարբերություն, *Միսլի-*

քարն ընդդեմ Միացյալ Թագավորության/ *McVICAR v. the United Kingdom*, 07/05/2002, դիմում թիվ 46311/99, 84-րդ պարբերություն):

Սույն գործի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Պատասխանողը բացահայտել է իր տեղեկատվության աղբյուրը դեռևս մինչև Հայցվորների կողմից դատարան դիմելը՝ հերքման պահանջի վերաբերյալ ներկայացված պատասխանով, այնուհետև օրաթերթը հրապարակել է հոդված՝ տեղեկատվության աղբյուրի՝ Ս. Կարախանյանի հետ հարցազրույցի վերաբերյալ, որում վերջինս ընդունում է իր կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրման փաստը, ինչպես նաև ներկայացնում է որոշ մանրամասներ արծարծված թեմայի վերաբերյալ: Ավելի ուշ, «Հայկական ժամանակ» օրաթերթը հրապարակել է ևս մեկ հոդված «Ճշտում» վերտառությամբ, որտեղ նույն տեղեկատվությունը հրապարակվել է տեղեկատվության աղբյուրի հղումով, իսկ նախորդ հոդվածը ներկայացվել է որպես թյուրիմացությամբ չիմբազրված տարբերակի հրապարակում: Հետևաբար, Պատասխանողն ի սկզբանե Հայցվորների առջև բացահայտել է իր տեղեկատվության աղբյուրը, ինչը կարևոր նշանակություն պետք է ունենար տվյալ գործով: Սույն գործով քննարկման ենթակա հարցերից էր հանդիսանում նաև վիճարկվող փաստերը ստուգելու լրագրողի ողջամիտ հնարավորություն ունենալու, վիճարկվող հայտարարությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, տեղեկատվության աղբյուրների հուսալիության հարցերը: Հատուկ ուշադրության է ենթակա նաև ՌԴ-ի դատախազության նամակի բովանդակությունը, որում նշվում էր «համապատասխան անձանց կողմից նշված հանցագործություններին մասնակցության վերաբերյալ նյութերի բացակայության» մասին, մինչդեռ, վիճահարույց հոդվածում խոսվում է նշված անձանց առնչության և կապերի մասին:

Այնուամենայնիվ, Պատասխանողն ըստ էության հնարավորություն չի ունեցել դատարանում բոլոր վերոնշյալ հարցերի շուրջ ներկայացնելու իր դիրքորոշումը, ինչպես նաև այն հիմնավորող նյութեր և ապացույցներ, ինչն ինքնին արդեն իսկ կարող է հանգեցնել ՄԻԵԿ 10-րդ հոդվածի խախտման:

Միջամտության համաչափությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը նախատեսում է զրպարտության համար առավելագույնը նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով, իսկ վիրավորանքի համար՝ 1000-ապատիկի չափով փոխհատուցման հնարավորություն: Համաձայն սույն հոդվածի՝ Դատարանը, վնասի փոխհատուցման չափը սահմանելիս, հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, զրպարտողի գույքային դրությունը:

Այնուամենայնիվ, Դատարանը կիրառել է վնասների փոխհատուցման առավելագույն չափ յուրաքանչյուր Հայցվորի օգտին՝ առանց հաշվի առնելու վերոնշյալ հանգամանքները, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պահանջները: Դատարանի

վերլուծությունը հետագայում հաստատվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից հետևյալ կերպ.

«Հայցվորները սույն գործով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ են, և որպես ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ, ունեն որոշակի ընկալելի դիրք հասարակությունում, ինչը պարտավորեցնում է ունենալ անբասիր վարքագիծ և օրինակելի կեցվածք, այնինչ Պատասխանողի կողմից հողվածում տարածած տեղեկությունները վերը նշված հանցագործությունների հետ այդ անձանց հնարավոր առնչության փաստի վերաբերյալ, այլ տեղեկատվություն են հաղորդում ընթերցողին՝ վտանգելով Հայցվորների, որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների նկատմամբ հասարակական վերաբերմունքի օբյեկտիվ դրսևորումը: Հանրության կողմից Հայցվորներին տրվող գնահատականն ունի չափազանց կարևոր գործնական նշանակություն, քանի որ բացասական գնահատականը նսեմացնում է Հայցվորների՝ որպես անձի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի, հեղինակությունը, խոչընդոտներ է ստեղծում հասարակական, տնտեսական հարաբերություններին լիարժեք մասնակցելու համար: Հաշվի առնելով վերոգրյալը, ընդհանուր իրավասության դատարանը փոխհատուցման չափը սահմանելիս նկատի է ունեցել ինչպես փոխհատուցման չափին վերաբերող օրենսդրորեն սահմանված դրույթները, այնպես էլ հասարակական կյանքում Հայցվորների՝ որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների զբաղեցրած դիրքը, և այն հանգամանքը, որ գրպարտող տեղեկությունները տարածվել են 7.480 տպաքանակով հրատարակվող օրաթերթում՝ հասու դառնալով հասարակության լայն զանգվածներին»:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Հայցվորների կարգավիճակը դրվել է փոխհատուցման առավելագույն չափի սահմանման հիմքում, ինչն ուղղակիորեն հակասում է ՄԻԵԴ-ի կողմից հաստատված չափանիշներին:

ՄԻԵԴ-ի կողմից սահմանված մի շարք նախադեպային վճիռներով ամրագրվել է համաչափության պահանջը վնասների փոխհատուցման կիրառման բնագավառում և շեշտվել է, որ անհամաչափորեն բարձր փոխհատուցման սահմանումը հանգեցնում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտմանը: Այս պահանջը նույնպես ամրագրվել է ԵԽ-ի Նախարարների կոմիտեի 2004թ. փետրվարի 12-ի՝ Ջանգվածային լրատվամիջոցներում քաղաքական բանավեճի ազատության վերաբերյալ հռչակագրում:

Այսպես, *Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/ Romanenko and others v. Russia*, 08/10/2009, դիմում թիվ 11751/03, 48-րդ պարբերություն) գործով ՄԻԵԴ-ը գտել է.

«Դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն է կազմել պահանջվող գումարը և արդյոք դրանով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ-ի կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և, հետևաբար, եղել են խիստ անհամաչափ»: Ըստ այդ՝ ՄԻԵԴ-ը գտել էր. «խախտվել է համաչափության սկզբունքն ու ձանաչել ՄԻԵԿ 10-րդ հոդվածի խախտում»:

Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ ՄԹ/Tolstoy Miloslavsky v. the United Kingdom, 13/07/1995, դիմում թիվ 18139/91, 42-րդ պարբերություն) գործով ՄԻԵԴ-ը, հաշվի առնելով սահմանված վնասների փոխհատուցման չափը, օրենսդրության մեջ անհամաչափորեն բարձր փոխհատուցման դեմ համարժեք և արդյունավետ երաշխիքների բացակայության համատեքստում, ճանաչել է դիմումատուի ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտումը:

Հաջորդ կարևոր հիմնահարցը սույն գործով, որը չի քննարկվել Դատարանի կողմից, սահմանվող փոխհատուցման չափի/2.000.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր Հայցվորի օգտին/ հնարավոր սառեցնող ազդեցություն ունենալու խնդիրն է Հայաստանում մամուլի ազատության վրա, այն դեպքում, երբ ՄԻԵԴ-ը նման դեպքերում քննարկման առարկա է դարձնում մամուլի վրա «սառեցնող ազդեցության» գործոնը, որին կարող է հանգեցնել արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը:

Սանկցիայի նկատմամբ ունեցած վախը «սառեցնող ազդեցություն» ունի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման վրա» (*Ուայլն ընդդեմ Լիխտենշտեյնի/Wille v. Liechtenstein*, 28/10/1999, դիմում թիվ 28396/95, 50-րդ պարբերություն): Այս ազդեցության հանգամանքը գործում է ի վնաս ամբողջ հասարակության, նմանապես այն գործոն է, որը պետք է հաշվի առնվի դիմումատուների նկատմամբ կիրառված սանկցիաների համաչափության և դրանով իսկ դրանց հիմնավորման ժամանակ (*Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալթայի/ Lombardo and others v. Malta*, 24/04/2007, դիմում թիվ 7333/06, 61-րդ պարբերություն):

Դատարանի կողմից սահմանված վնասների փոխհատուցման չափը՝ նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով յուրաքանչյուր Հայցվորի օգտին, ակնհայտորեն հակասում է ՄԻԵԴ-ի կողմից սահմանված միջամտության համաչափության պահանջին:

**ԲԵԼԱ ՔՈՉԱՐՅԱՆՆ ՈՒ ՍԵԴՐԱԿ ՔՈՉԱՐՅԱՆՆ
ԸՆԴԴԵՄ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ
(հրատարակիչ՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ)**

Գործի հանգամանքները

06.06.2011թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ Դատարան) քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Բելա Լևոնի Քոչարյանի և Սեդրակ Ռոբերտի Քոչարյանի (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր և հրատարակիչ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող)՝ Հայցվորների պատիվը, արժանապատվությունը և բարի համբավն արատավորող տեղեկությունները Պատասխանողին հերքել պարտավորեցնելու, վիրավորանքի և զրպարտության միջոցով հասցված՝ 6.000.000 ՀՀ դրամի չափով վնասը Պատասխանողին հատուցել պարտավորեցնելու պահանջների մասին, վճռել է բավարարել հայցը մասնակի՝ զրպարտության և վիրավորանքի համար 3.000.000 ՀՀ դրամ փոխհատուցման պահանջի մասով:

«Ժամանակ» օրաթերթի մի քանի համարներում տպագրվել են հոդվածներ, որոնք, մասնավորապես, պարունակել են հետևյալ տեղեկությունները.

«Արյունը՝ Քոչարյաններից, կայֆը՝ Ծառուկյանից, իսկ հակացնցումը՝ ԼՖիկից» խորագրով հոդվածում կատարվել են հետևյալ արտահայտությունները.

«...Դեղերի շուկայում գրաված իր դիրքով նրան զիջում է նույնիսկ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կինը՝ Բելլա Քոչարյանը:...»

«...Ուշագրավ է, որ այդ ցուցակում բացակայում էր «911» դեղատների ցանցի անունը, որը պատկանում է Քոչարյանների ընտանիքին»:

«...«Քոմսթար» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն հայկական դեղերի շուկայում մեկ երրորդ մասով զբաղեցնում են արյան պատրաստուկների և պլազմայի փոխարինիչների շուկան: Առաջինին պատկանում է շուկայի 55 տոկոսը, իսկ երկրորդին՝ 40 տոկոսը: Այս ընկերություններն էլ, մեր աղբյուրների փոխանցմամբ հովանավորում են Քոչարյանների ընտանիքը»:

«...Հայկական դեղերի շուկայում գերիշխող դիրք է զբաղեցնում նաև «Ֆարմատեքս» ՍՊԸ-ն...: Ընկերության սեփականատերը անզլիացի է, որին ևս Քոչարյանների ընտանիքն է հովանավորում...»:

«Աղամանդե Ռոբը» խորագրով հողվածում կատարվել է հետևյալ արտահայտությունը. «... Այսպես, ինչպես հայտնում են իշխանական մեր աղբյուրները, վերջերս Քոչարյանների ընտանիքը հերթական տնտեսական ձեռքերումն է ունեցել: Մեր տեղեկություններով Ռոբերտ Քոչարյանի ավագ որդին՝ Սեդրակ Քոչարյանը, աղամանդի հանք է ձեռք բերել Հնդկաստանում՝ այդ գործարքը ձևակերպելով որպես ներդրում: Հանքի ձեռքբերման գործարքը կատարվել է «Կոնվերսանկ»-ի միջոցով: Հիշենք, որ ըստ որոշ տեղեկությունների՝ Քոչարյանները աղամանդի հանքեր ունեն նաև Նամիբիայում...»:

«Volvo+Sprayka=Սեդրակ Քոչարյան» խորագրով հողվածում կատարվել է հետևյալ արտահայտությունը. «... բեռնատարների արտադրության հսկա շվեդական Volvo Trucks» ընկերությունը Հայաստանում իր պաշտոնական ներկայացման գործը վստահել է «Սպայկա» ընկերությանը: ... Բանն այն է, որ թեև պաշտոնապես այս ընկերությունը պատկանում է Դավիթ Ղազարյան անուն-ազգանունով մարդուն, սակայն իրականում այդ ընկերության մեջքին կանգնած է Քոչարյանների ընտանիքը և մասնավորապես Ռոբերտ Քոչարյանի որդի Սեդրակ Քոչարյանը...»:

11.10.2010թ. (ուղարկվել է փոստով՝ 13.10.2010թ.–ին) գրությամբ Բելա Քոչարյանի և Սեդրակ Քոչարյանի ներկայացուցիչը (որը հիշյալ գրությունն ուղարկելու ժամանակ դեռևս չուներ լիազորագիր) հայտնել է, որ վերը նշված հողվածներում առկա են եղել անձշտություններ և պահանջել հերքել դրանք:

Պատասխանողը գործի դատաքնության ընթացքում ընդունել է Հայցվոր կողմի հերքման առաջարկը: Հայցվոր կողմից Պատասխանողին է ներկայացվել հերքման տեքստ, որը հրապարկվել է Պատասխանող ԶԼՄ–ի կողմից:

Ըստ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի 08.11.2010թ. գրության՝ «Ֆարմատեքս» ՍՊԸ–ն պետական ռեգիստրում գրանցված չէ: «Լիկվոր» ՓԲԸ–ի, «Թագակ Ֆարմ» ՓԲԸ–ի, «Քոմսթառ» ՍՊԸ–ի, «Ֆարմատեքս» ՓԲԸ–ի գրանցված սեփականատերերի ցանկում, «Սպայկա» ՍՊԸ–ում Բելա Քոչարյանն ու Սեդրակ Քոչարյանն ընդգրկված չեն: Ըստ «Կոնվերսանկ» ՓԲԸ–ի 12.11.2010 թվականի գրության՝ Հնդկաստանի և Նամիբիայի ուղղությամբ Սեդրակ Քոչարյանի հաշիվներով երբևիցե փոխանցում կամ այլ բանկային գործարք չի կատարվել:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 10-րդ հողվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Դատարանը ոչ լիարժեք, որոշ դեպքերում նույնիսկ սխալ հետևության հանգեցնող մեկնաբանությամբ է վերլուծել ՄԻԵԿ–ից բխող մի քանի այնպիսի էական հիմնահարցեր, որոնք ուղղակի ազդեցություն են ունեցել սույն գործի վրա: Դրանք են հողվածի հանրային նշանակության, Հայցվորի կարգավիճակի, փաստական տվյալների և գնահատողական դատողությունների տարբերակման, փոխհատուցման համաչափության հարցերը:

Փաստեր և գնահատողական դատողություններ

Այսպես, վիրավորանքի և զրպարտության հասկացությունների իրավական վերլուծության հատվածում դատարանը կատարում է հետևյալ մեկնաբանությունը

«... վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ օրենսդրի կողմից տրված սահմանմամբ, ու վիրավորանքի և զրպարտության առկայության փաստը հաստատված համարվելու էական նշանակություն ունեցող փաստերի համադրումից հետևում է, որ ի տարբերություն զրպարտության՝ վիրավորանքն ունի դեռ չարատավորող, սակայն այդպիսի նպատակ հետապնդող նշանակություն, մինչդեռ զրպարտության համար էական է, որ տարածված փաստացի տեղեկություններն իրենց բնույթով արդեն իսկ կրեն արատավորող բնույթ (արատավորման փաստի առկայությունը), այսինքն՝ իրավախախտող գործողությունը զրպարտության դեպքում արատավորման միջոցով հանդիսանում է ավարտված, իսկ վիրավորանքի դեպքում՝ այն միայն հետապնդում է արատավորելու նպատակ, այսինքն՝ վիրավորանքի արդյունքում արտահայտած արատավորելու նպատակը կարող է իր ավարտին հասցվել անձին արատավորելով՝ իրականությանը չհամապատասխանող փաստացի տեղեկություններ տարածելու միջոցով, որպիսի պարագայում արդեն իսկ պետք է առաջնորդվել զրպարտության փաստական կազմով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ վիրավորանքը կոնկրետ անձի նկատմամբ կրելով շարունակական բնույթ՝ այն հետագայում միայն կարող է վերածվել զրպարտության, քանի որ արատավորելու նպատակով կատարված վիրավորական արտահայտությունների շարունակական բնույթը արդյունքում հանգեցնում է մարդու պատվի ու արժանապատվության փաստացից արատավորմանը՝ փաստացի ու ոչ իրական տվյալներ հրապարակելով, այսինքն՝ այն տեղի է ունենում նպատակի փաստացի իրագործմամբ, որպիսի պարագայում խոսք կարող է լինել միայն զրպարտության մասին»:

Նման մեկնաբանությամբ Դատարանն ակնհայտորեն հանգել է ոչ ճիշտ հետևության վիրավորանքի և զրպարտության տարբերակման հարցում: Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, այնպես էլ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից ուղղակիորեն բխում է, որ վիրավորանքի և զրպարտության, փաստական տվյալների /statement of fact/ և գնահատողական դատողության /value judgments/ միջև տարբերությունը կայանում է ոչ թե համապատասխան գործողության շարունակական բնույթի, ավարտման պահի հանգամանքներում, այլ, առաջին հերթին, կարծիքի և փաստերի տարբերակման մեջ, մինչդեռ Դատարանը դիտել է զրպարտությունը որպես վիրավորանքի հաջորդական փուլ, երբ փաստացի իրագործվում է վիրավորանքի արատավորման նպատակը:

ՄԻԵԴ-ը հետևողականորեն շեշտել է փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակման անհրաժեշտությունը:

«Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը

10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է» (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46-րդ պարբերություն):

Հաշվի առնելով վիրավորանքի և զրպարտության տարբերակման կարևորությունը յուրաքանչյուր գործով՝ Դատարանի վերլուծությունը պետք է կառուցվեր ոչ թե իրավախախտ գործողության ավարտման պահի շուրջ, այլ գնահատողական դատողության և փաստական տվյալի միջև տարբերակման կատարման և, դրանով պայմանավորված, ապացուցման պահանջվող աստիճանի շուրջ:

«Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց» (*Դիչանդը և այլոք ընդդեմ Ավստրիայի/Dichand and Others v. Austria*, 26/02/2002, դիմում թիվ 29271/95, 41-րդ պարբերություն):

Դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

«Դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ մեկնաբանության իմաստով Հայցվորի կողմից ներկայացված և հոդվածներում տպագրված փաստացի տեղեկություններից միայն «ԱՐՅՈՒՆԸ՝ ՔՈՉԱՐՅԱՆՆԵՐԻՑ...» խորագրի մասում կատարված արտահայտությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ կետի մասի պահանջներով պայմանավորված, համարվում է վիրավորանք, քանի որ այս պարագայում Պատասխանողի կողմից նման խորագրով տարածված տեղեկությունը հանդիսանում է արտահայտություն՝ վերագրվող Հայցվորների ընտանիքին՝ առանց սուբյեկտիվ տարանջատման, այսինքն՝ այն որպես այդպիսին, անկախ հրապարակային բնույթ կրելու հանգամանքից, չի հանդիսանում փաստացի տվյալ, ավելին՝ այստեղ էական չէ այն իրականությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու զրպարտության համար սահմանված էական նախապայմանը, ինչը նշանակում է, որ վերը նշված արտահայտությունը պետք է դատարանի կողմից դիտարկվի «վիրավորական» եզրույթի ներքո:

Այսպես, «Արյուն» բառը իր տառացի շարադրանքով և բառացի պարզ մեկնաբանմամբ վիրավորանքի տարրեր չի պարունակում, և այն գործածվում է այս իմաստով եղելության հետ համահունչ կարգով՝ իր ամբողջ իմաստով, մինչդեռ հոդվածով տպագրված խորագրով «Արյուն» բառը և այն «Քոչարյաններին» վերագրվող արտահայտությունն արդեն իսկ կորցնում է «Արյան» բառացի պարզ մեկնաբանությունը, քանի որ տվյալ նյութը ընթերցելիս՝ ընթերցողի մոտ այն առաջացնում է բացասական տպավորություններ, այսինքն՝ այն կարող է ընկալվել արյունը վերագրվող անձանց տարբեր բացասական ձևերով գնահատելու միջոցով (օրինակ՝ որպես հանցանք կատարած անձի), ուստի այդ արտահայտությունը Պատասխանողի կողմից տարածվել ու հետապնդել է Հայցվորների ընտանիքի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու, այսինքն՝ հասարակության աչքերին վերջիններիս հանդեպ ունեցած օբյեկտիվ կարծիքը նսեմացնելու նպատակ, որի հերքման ու դրանով պատճառված փոխհատուցման իրավունքը պատկանում է նշված ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին:

Դատարանն ընդգծում է, որ բոլորովին այլ հարթության վրա կարող էր քննարկվել և ընդունվել վերոհիշյալ խորագրում տեղ գտած արտահայտությունը, այսինքն՝ այն իր պարզ մեկնաբանությամբ կարող էր ընդունվել որպես ոչ վիրավորական արտահայտություն միայն այն դեպքում, երբ նման խորագրից հնարավոր լինել որոշելու դրա ոչ բացասական իմաստը, մինչդեռ Պատասխանողի կողմից կատարված տվյալ արտահայտությունը որևէ կերպ սովորական ու ուղղակի իմաստով չի հասկացվում, քանի որ սովորաբար նման արտահայտությունն օգտագործվում է բացասական տպավորություն և նման էմոցիաներ ստեղծելու նպատակով, և ընթերցողների՝ հասարակության լայն շրջանակի մոտ այն ինքնին չի կարող առաջացնել Հայցվորների հանդեպ ունեցած հարգանքի ու բարի համբավի դրական հատկանիշներ, հակառակ՝ այն միանգամայն առաջացնում է բացասական տպավորություն ու կարծիք այն անձանց վերաբերյալ, որոնց և վերագրվում է խորագիրը, մինչդեռ նման խորագրով հողվածում անգամ չկան պարզաբանումներ խորագրի ոչ բացասական իմաստի շուրջ, այլ հակառակ՝ տեղեկություն տարածողի կողմից փորձ է կատարվում «Արյան» բացասական իմաստն ավելի արտահայտիչ ու ընդգծվող դարձնել՝ փաստացի իրականությանը, իր կարծիքով, համաՊատասխանող տեղեկություններով այն հաստատելու միջոցով, որն էլ արտահայտվել է Պատասխանողի կողմից խորագրում կատարված և բացասական նպատակ հետապնդող արտահայտության արդեն իսկ որոշակի փաստերով հաստատված գնահատականի ձևով»:

Դատարանի վերոգրյալ մեկնաբանությունից ակնհայտորեն բխում է, որ հողվածի խորագրում տեղ գտած՝ «Արյունը Քոչարյաններից» արտահայտությունը դիտարկվել է հողվածի բովանդակությունից անջատ՝ որևէ ձևով չպայմանավորելով այն հողվածի համատեքստի հետ: Մինչդեռ հողվածն ամբողջությամբ ընթերցելիս պարզ է դառնում, որ նման խորագիրը կապվում է արյան պատրաստուկների և պլազմայի փոխարինիչների շուկայի հետ Քոչարյանների ընտանիքի առնչությունների հետ, մասնավորապես, այդ մասին է վկայում հետևյալ հատվածը.

«...«Քոմսթար» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն հայկական դեղերի շուկայում մեկ երրորդ մասով զբաղեցնում են արյան պատրաստուկների և պլազմայի փոխարինիչների շուկան: Առաջինին պատկանում է շուկայի 55 տոկոսը, իսկ երկրորդին՝ 40 տոկոսը: Այս ընկերություններն էլ, մեր աղբյուրների փոխանցմամբ հովանավորում են Քոչարյանների ընտանիքը» (Հողված 1, 3-րդ պարբերություն, 38-49 տողեր):»:

ՄԻԵԴ-ի վճիռների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ցանկացած վիճարկվող արտահայտություն դիտարկելիս դատարանը հաշվի է առնում ամբողջական հողվածի բովանդակությունը և (*Պերնան ընդդեմ Իտալիայի/ Perna v. Italy/ 06/05/2003*, դիմում թիվ 48898/99, 45-րդ պարբերություն, *Մարոնեքն ընդդեմ Սլովակիայի/ Maronek v. Slovakia/ 19/04/2001*, դիմում թիվ 32686/96, 53-րդ պարբերություն) որևէ բառակապակցության իմաստ չի բացահայտվում հողվածի համատեքստից կտրված: Մինչդեռ տվյալ դեպքում Դատարանի կողմից հատակորեն շեշտվել է, որ «Արյունը Քոչարյաններից» արտահայտությունը իր պարզ մեկնաբանությամբ կարող էր ընդունվել որպես ոչ վիրավորական արտահայտություն միայն այն դեպքում, երբ նման խորագրից հնարավոր լինեք որոշել դրա ոչ բացասական իմաստը, մինչդեռ Պատասխանողի

կողմից կատարված տվյալ արտահայտությունը որևէ կերպ սովորական ու ուղղակի իմաստով չի հասկացվում, քանի որ սովորաբար նման արտահայտությունն օգտագործվում է բացասական տպավորություն և նման էմոցիաներ ստեղծելու նպատակով, և ընթերցողների՝ հասարակության լայն շրջանակի մոտ այն ինքնին չի կարող առաջացնել Հայցվորների հանդեպ ունեցած հարգանքի ու բարի համբավի դրական հատկանիշներ, հակառակ՝ այն միանգամայն առաջացնում է բացասական տպավորություն ու կարծիք այն անձանց վերաբերյալ, որոնց և վերագրվում է խորագիրը, մինչդեռ նման խորագրով հոդվածում անգամ չկան պարզաբանումներ խորագրի ոչ բացասական իմաստի շուրջ:

Այսպիսով, Դատարանը վիճարկվող արտահայտությունը վեր է լուծել հենց հոդվածի վերնագրի շրջանակներում միայն, երկրորդ, անտեսել է հոդվածի բովանդակությունը, որով ըստ էության բացատրվում է խորագրում տեղ գտած նման ձևակերպումը:

Դատարանի կողմից որպես զրպարտություն դիտարկված տեղեկությունների՝ իրականությանը չհամապատասխանելու փաստը Դատարանը հաստատված է համարել որոշակի պաշտոնական փաստաթղթերի և տեղեկատվության հիման վրա, որոնցով հերքվում է այդ ընկերություններին Հայցվորների մասնակցության կամ առնչության փաստը, մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ հոդվածում տեղ գտած տեղեկությունների մեծ մասը վերաբերում են ոչ թե Հայցվորների կողմից համապատասխան ընկերություններին մասնակցելու կամ այլ կերպ պաշտոնապես առնչվելու հանգամանքներին, այլ դրանք հովանավորելու հանգամանքին, ինչը չէր էլ կարող ապացուցվել գործում եղած փաստաթղթերով:

Այս համատեքստում վերոգրյալ տեղեկությունների բնույթը, դրանց իրականությանը համապատասխանելու ապացուցման, արատավորման աստիճանը պարզելիս դատարանը պետք է նախ տարբերակեր դրանք հոդվածում տեղ գտած մյուս տեղեկություններից, որոնք կարող են հերքվել ներկայացված ապացույցներով, և իրավական վերլուծություն իրականացնելիս հաշվի առնել մի շարք սկզբունքներ, որոնք ամրագրված են ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն, *Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37-րդ պարբերություն): ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ այս ազատության իրականացումը ենթադրում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: Այս պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում էական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը և խախտվում են «այլոց իրավունքները»:

Մեկ այլ կարևոր սկզբունք է հանդիսանում հետևյալ՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքում հաստատված սկզբունքը.

«Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար» (*Եվրոպայի Նորվեգիա Հ.Օ.Օ. ընդդեմ Խորվաթիայի/ Europapress Holding D.O.O. v. Croatia*, 22/10/2009, դիմում թիվ 25333/06, 66–րդ պարբերություն): Այս սկզբունքը հատկապես շեշտադրվել է քրեական բնույթի հայտարարությունների համատեքստում:

«Հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձին արատավորող փաստական տվյալները /statement of fact/ ստուգելու պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «գրապարտության բնույթից և աստիճանից» և տեղեկատվությունը տրամադրող աղբյուրների վստահելիությունից» (*Փեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի/Pedersen and Baadsgaard v. Denmark*, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78–րդ պարբերություն, *Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66–րդ պարբերություն):

Լրատվամիջոցն ունի նաև աղբյուրը չբացահայտելու իրավունք, բացառությամբ խիստ անհրաժեշտ դեպքերի: Առանց նման պաշտպանության տեղեկատվության աղբյուրները կարող են ձեռնպահ մնալ մամուլին տեղեկատվություն տրամադրելուց՝ հանրային շահին վերաբերող հարցերով: Որպես հետևանք մամուլի՝ հանրային հսկիչի կենսական դերը կարող է արժեզրկվել և վատ հետևանքներ թողնել ճշգրիտ ու վստահելի տեղեկատվություն տրամադրելու՝ մամուլի ունակության վրա (*Գուդվինն ընդդեմ ՄԹ/ Goodwin v. UK*, 27/03/1996, դիմում թիվ 28957/95, 35–րդ պարբերություն): Այս սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև ԵԽ–ի Նախարարների կոմիտեի թիվ (2000)7 հանձնարարականում, որն առնչվում է տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու՝ լրագրողի իրավունքին:

Բոլոր վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո Դատարանը պետք է առնվազն քննարկեր վերը թվարկված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման հնարավորությունը՝ հաշվի առնելով հայտարարություններում տեղ գտած «հովանավորման» ձևակերպումները, դատարան հայց ներկայացրած սուբյեկտներին, տեղեկատվության աղբյուրի, արված հայտարարությունների արատավորող բնույթի և աստիճանի հարցերը:

Առնվազն ակնհայտ է, որ վերոհիշյալ տեղեկությունները չեն կարող հիմնավորվել կամ հերքվել գործում առկա պաշտոնական փաստաթղթերով: Հողվածում տեղ գտած մյուս հայտարարությունները, որոնք նույնպես դիտվել են որպես գրապարտություն դատարանի կողմից՝ համապատասխան ընկերությունների անմիջական պատկանելության կամ մասնակցության մասով, ենթակա են ապացուցման որոշակի փաստաթղթերի հիման վրա: Առանցքային պետք է լիներ նաև բոլոր թվարկված տեղեկությունների ու հայտարարությունների արատավորող բնույթի և աստիճանի

վերաբերյալ իրավական վերլուծությունը: Դատարանը դիտել է բոլոր այդ տեղեկությունները որպես անձի պատվին, արժանապատվությանն ու բարի համբավին էական վնաս պատճառող, արատավորող տեղեկություններ, ինչը հիմնավորվել է Հայցվորի կարգավիճակի հանգամանքով:

Հայցվորի անձը և կարգավիճակը

Նման եզրահանգման հիմքում դրվել է վնասը կրած սուբյեկտների՝ Հայցվորների կարգավիճակը, որպիսի պայմաններում, ի տարբերություն մյուսների, վերջիններս հանրության մեջ վայելում են ավելի մեծ ուշադրություն ու հարգանք, իսկ փաստացի ու իրականությանը չհամապատասխանող տվյալների հրապարակման, տարածման արդյունքում Հայցվորների բարի համբավին հասցված վնասը վերականգնելը դժվար է: Վճռով շեշտվել է հետևյալը.

«Փաստացի տեղեկություններն իրենց բնույթով հանդիսանում են Հայցվորների արժանիքները՝ պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող տվյալներ, քանի որ դրանց միջոցով փոխվում է հասարակության՝ վերջիններիս որպես ՀՀ երկրորդ նախագահի ընտանիքի անդամների նկատմամբ ունեցած կարծիքը՝ բարոյական բացասական ուղղվածությամբ, քանի որ ՀՀ երկրորդ նախագահը, որպես կանոն, հանդիսանալով երկրի ՀՀ նախկին ղեկավարը՝ նախագահը, նրա ընտանիքը նույնպես հետևում է վերջինիս կարգավիճակից բխող հասարակության մեջ ունեցած դերին ու հեղինակությանը՝ արտահայտված գործարարության ու ձեռնարկատիրության հետ հարաբերություններում չեզոքություն դրսևորելու վարքագծով ...»:

Դատարանի մեկնաբանությունն ու տրամաբանությունը չի բխում ՄԻԵԴ–ի կողմից սահմանված չափանիշներից: *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 42–րդ պարբերություն)* գործով սահմանված սկզբունքի համաձայն՝

«քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ ... ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան»:

Հանրային անձանց նկատմամբ քննադատության շրջանակների առնչությամբ ՄԻԵԴ–ը բազմիցս շեշտադրել է, որ երբ մասնավոր անձինք մտնում են հանրային դաշտ, նրանք բաց են դառնում հասարակական քննարկման համար և հետևաբար պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան քննադատության նկատմամբ (*Բոդրոժիչն ընդդեմ Սերբիայի/Bodrožić v. Serbia, 23/06/2009, դիմում թիվ 38435/05, 34–րդ պարբերություն*): Մինչդեռ, Դատարանը Հայցվորների՝ հանրության մեջ ավելի մեծ ուշադրություն ու հարգանք վայելելու հանգամանքը, ըստ էության, հակադրել է նրանց նկատմամբ քննադատության շրջանակներին՝ դրան տալով միջազգային չափորոշիչներին հակասող իմաստ: Դատարանի կողմից տար-

բերակում չի կատարվել նաև ՀՀ երկրորդ նախագահի կնոջ, որպես հանրային դաշտում լայնածավալ գործունեություն իրականացնող անձի, և Ս. Քոչարյանի միջև, որը զբաղվում էր գործարարությամբ:

Հանրապետության երկրորդ նախագահի տիկինն ուղղակիորեն հանրային ուշադրության կենտրոնում գտնվող անձ է, որի դիրքն ու կարգավիճակը, արտահայտվելու ազատության իրավական կարգավորումների շրջանակում, ուղղակիորեն պետք է հավասարեցվի քաղաքական գործչի կարգավիճակին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Մյուս Հայցվորը, ՀՀ երկրորդ Նախագահի որդին, հողվածների հրապարակման պահին հայտնի գործարար լինելով, կրկին, հանրային ուշադրության կենտրոնում գտնվող անձ էր, միաժամանակ հանդիսանալով նաև Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձի ընտանիքի անդամ, որի գույքի, ունեցվածքի և գործարար կարգավիճակի վերաբերյալ հանրությունն ուներ տեղեկատվություն ստանալու իրավունք: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայցվոր Սեդրակ Քոչարյանի կարգավիճակում նրա՝ ՀՀ երկրորդ Նախագահի որդին լինելու հանգամանքը առավել կարևոր էր, քան նրա՝ գործարար լինելու հանգամանքը հանրային ուշադրության և տեղեկատվական պահանջների առաջադրման տեսանկյունից, ապա սույն գործի շրջանակներում նա նույնպես պետք է դիտվեր քաղաքական գործչին վերապահված դիրքում գտնվող անձ՝ դրանից բխող հետևանքներով:

ՀՀ երկրորդ նախագահի ընտանիքի անդամների կողմից, նույնիսկ պաշտոնավարման ավարտից հետո, գործարարության բնագավառում չեզոքության դրսևորման պահանջը և ընկալումը, ըստ էության, հանդիսանում է դատարանի սուբյեկտիվ մոտեցումը և չի բխում որևէ ներպետական կամ միջազգային իրավական ակտի պահանջներից: Ավելին, ՀՀ երկրորդ նախագահի երկու որդիների (այդ թվում՝ Հայցվորի) կողմից տարբեր բնագավառներում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վերաբերյալ տվյալները հրապարակվել են հենց Ռ. Քոչարյանի ոչ պաշտոնական կայքում և հետևաբար չեն դիտվել որպես գործարարությամբ չզբաղվելու, չեզոքության պահանջների խախտում: Մեկ այլ սկզբունք, որը նույնպես կարևոր է տվյալ գործի շրջանակներում, այն է, թե որքանով է հրապարակումն ազդել քննադատության թիրախ դարձած անձի մասնագիտական կյանքի վրա (*Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/Grinberg v. Russia, 21/07/2005, դիմում թիվ 23472/03, 33-րդ պարբերություն*):

Վերոգրյալի լույսի ներքո, առաջին ատյանի դատարանի կողմից էական պետք է դառնար արված հայտարարությունների արատավորող բնույթի և աստիճանի վերլուծությունը՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո, առավել ևս փոխհատուցման չափի որոշման պարագայում: Մինչդեռ, Հայցվորների հասարակական դիրքը և հանրային ուշադրությունը Դատարանի կողմից մեկնաբանվել է միջազգային չափորոշիչներին հակասող իմաստով:

Պատասխանողի անձը և կարգավիճակը

Նմանապես, դատարանների կողմից անտեսվել էր նաև Պատասխանողի կարգավիճակը. մասնավորապես այն հանգամանքը, որ պատասխանողը լրատվամիջոց էր, որևէ էական գնահատականի չէր արժանացել դատարանների կողմից: Մինչդեռ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին վերաբերող իր վաղ շրջանի նախադեպային վճիռներում (տես, մասնավորապես՝ *Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ-ի/ Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 50 (բ) պարբերություն) ՄԻԵԿ-ը նախանշել էր, որ.

«Լրատվամիջոցների դերը պետք է լիներ հանրության համար մշտահսկող լինելը ... նրա առաքելությունն է տարածել տեղեկություններ և գաղափարներ քաղաքական անցուդարձի և կյանքի, ինչպես նաև հանրային շահին առնչվող այլ թեմաների վերաբերյալ: Բացի այն, որ լրատվամիջոցներն ունեն այսպիսի տեղեկությունների և գաղափարների տարածման խնդիր, հանրությունն իր հերթին ունի այդ տեղեկությունները և գաղափարներն ստանալու իրավունք»:

Պատասխանողի կարգավիճակը հատկապես կարևոր է սույն գործի շրջանակներում նաև ՄԻԵԿ-ի մեկ այլ՝ սույն գործի հանգամանքներին ուղղակիորեն վերաբերելի այն մոտեցման լույսի ներքո, որի համաձայն. «Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցություն և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն» (տես օրինակ՝ *Պրագերն և Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի/ Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/84, 38-րդ պարբերություն):

Կրկին, ինչպես և Հայցվորների կարգավիճակի հարցում, Դատարանը ոչ միայն հաշվի չի առել Պատասխանողի լրատվամիջոց լինելու հանգամանքը, այլ այն օգտագործել է հենց պատասխանատվության խստացման իմաստով՝ հղում կատարելով տեղեկատվության տարածման եղանակի՝ տպագիր մամուլով տարածելու վրա: Այսինքն, ինչպես և Հայցվորների կարգավիճակի դեպքում, Պատասխանողի կարգավիճակին առնչվող մոտեցումները Դատարանի կողմից օգտագործվել են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պահանջներին և նպատակներին ուղիղ հակառակ:

Հոդվածի հանրային նշանակությունը

Դատարանը, վկայակոչելով հանրային հետաքրքրություն ունեցող խնդիրների վերաբերյալ ՄԻԵԿ-ի կողմից մշակված մոտեցումները, հանգել է այն եզրակացության, որ տվյալ դեպքում Պատասխանողի կողմից հրապարակված վերոհիշյալ հոդվածներում պարունակող զրպատիչ և վիրավորական արտահայտությունները որևէ կերպ լրագրողի կողմից հրապարակված՝ քաղաքական ասպարեզում քննարկվող տեղեկություններ ու գաղափարներ չեն, բացի այդ, դրանք հանրային հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտների գաղափարներ չեն: ... Ավելին՝ լրատվական միջոցը տվյալ տեղեկատվությունների տարածմամբ դրանց միջոցով հասարակությանը քաղաքական որևէ քննարկման մասնակից դարձնելու նպատակ չի հետապնդել, և հրապարակված տեղեկատվությունը հասարակությանը մտահոգ հարցի քննարկման արդյունք չի հանդիսացել:

ՄԻԵԿ–ի 10–րդ հողվածի վերաբերյալ ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Դատարանը հանրային նշանակության հարցերի վերաբերյալ իր կողմից սահմանված սկզբունքը կիրառել է բավական ազատորեն, պարզեցված ձևով հաստատելով հանրային շահի առկայությունը՝ նույնիսկ որոշ դեպքերում պաշտպանելով հասարակության տեղեկացված լինելու իրավունքը հանրային նշանակության խնդրի բացակայության պարագայում (*Կարհուվաարան ընդդեմ Ֆինլանդիայի/Karhuvaara v. Finland*, 16/11/2004, դիմում թիվ 53678/00, 45–րդ պարբերություն, *Թոնսբերգս Բլադ ԱՍ–ն ընդդեմ Նորվեգիայի/ T nsbergs Blad AS v. Norway*, 01/03/2007, դիմում թիվ 510/04, 87–րդ պարբերություն): Դատարանը որոշ դեպքերում պայմանավորել է ամուսնու հնարավոր քրեական դատապարտման հարցը քաղաքացիների՝ ընտրելու մտադրությունների հետ և հաստատել է հանրային շահի որոշակի աստիճանի առկայությունը (*Կարհուվաարան ընդդեմ Ֆինլանդիայի/Karhuvaara v. Finland*, 16/11/2004, դիմում թիվ 53678/00, 45–րդ պարբերություն): Եվրոպական դատարանը նշել է նաև քաղաքական քննարկման և հանրային մտահոգության այլ խնդիրների միջև տարբերակման անհրաժեշտության բացակայությունը (*Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի/ Thorgeir Thorgerirson v. Iceland*, 25/06/1992, դիմում թիվ 13778/88, 64–րդ պարբերություն):

Համաձայն թե միջազգային իրավունքի նորմերի (ՄԻԵԿ–ի 10–րդ հողված), թե ներպետական իրավունքի նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1–րդ հողվածի 5–րդ մաս) արատավորող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը կարող էր սահմանափակվել նաև այն դեպքերում, երբ նման տեղեկությունների հրապարակումը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է եղել հանրային գերակա շահով, և դրանք հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցում է, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը: Այն պայմաններում, երբ Հայաստանում բարձրաստիճան պետական պաշտոնատար անձանց գույքային դրության վերաբերյալ տեղեկությունների հրապարակումն ընդհանրապես չի համապատասխանում թափանցիկության և հաշվետվողականության հանրաձանաչ պահանջներին, նման կառուցակարգի առաջադրումը Պատասխանողի կողմից, անտեսելով դատարանների նկատմամբ հանրության անվստահության հանգամանքը և դրանով պայմանավորված և սույն գործով կայացվելիք ակտի կանխորոշվածությունը հիմնավոր պաշտպանություն կարող էր դիտվել: Ինչպես կարող էր լրագրողը տեղեկատվության բացակայության պայմաններում իրականացնել հանրության համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկությունների ձգարտման գործունեություն, եթե պետությունն ինքը չի օժանդակում և միջավայր ստեղծում այդ գործառույթի իրականացման համար:

Միջամտության համաչափությունը.

Դատարանը սահմանել է փոխհատուցման առավելագույն չափ վիրավորանքի և գրպարտության համար՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով:

Փոխհատուցման այս չափը պատճառաբանվել է հետևյալով.

«Ելնելով վերը նշված հողվածով գրապարտության և վիրավորանքի համար սահմանված՝ փոխհատուցման գումարի չափերից՝ հաշվի առնելով օրենսդրի կողմից սահմանված առավելագույն փոխհատուցման չափը՝ դատարանն արձանագրում է, փոխհատուցման պահանջը բավարարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև գործի առանձնահատկությունները՝ կապված վնասը կրած սուբյեկտների՝ **Հայցվորների կարգավիճակի հետ**, որպիսի պայմաններում, ի տարբերություն մյուսների, վերջիններս հանրության մեջ վայելում են ավելի մեծ ուշադրություն ու հարգանք, իսկ փաստացի ու իրականությանը չհամապատասխանող տվյալների հրապարակման, տարածման արդյունքում Հայցվորների բարի համբավին հասցված վնասը վերականգնելը դժվար է, ուստի անհրաժեշտ է, որպեսզի սահմանված փոխհատուցման գումարը լինի **վնասի ծանրության հետ համահունչ**:

Բացի այդ, փոխհատուցման չափի որոշման հարցում դատարանը, ելնելով գործի առանձնահատկությունից, հատուկ կարևորում է այն հանգամանքը, որ իրավախախտ անձը՝ Պատասխանողը, մինչ դատական կարգով վեճի քննությունը որևէ միջոցներ չի ձեռնարկել հարցին՝ արտադատական կարգով լուծում տալու ուղղությամբ՝ պայմանավորված օրենքի պահանջներով, ավելին՝ «Քոչարյանի սիրտը հերքում է ուզում» խորագրով հողվածով ավելի է խորացրել տարածված նյութի վերաբերյալ հանրության հետաքրքրությունը...»:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Հայցվորների կարգավիճակը, նրանց կողմից հանրային ուշադրություն վայելելու հանգամանքները դրվել են փոխհատուցման առավելագույն չափի սահմանման հիմքում, ինչն ուղղակիորեն հակասում է ՄԻԵԴ–ի կողմից հաստատված չափանիշներին:

Միջամտության համաչափության չափանիշի բավարարման նպատակով Դատարանի կողմից հաշվի չի առնվել, մի կողմից դատավարության կողմերի կարգավիճակները, մյուս կողմից նշանակված փոխհատուցման և Պատասխանողի եկամուտների հարաբերակցության հանգամանքները: Ըստ էության, այս հանգամանքները չեն էլ առաջադրվել լուծման Դատարանին, իսկ Դատարանն, իր հերթին, ոչ նախնական դատական նիստի և ոչ էլ դատաքննության ընթացքում որևէ անդրադարձ չի կատարել դրանց: Ավելին, փորձելով հիմնավորել հայցադիմումն օրենքով նախատեսված փոխհատուցման առավելագույն չափով բավարարելու վերաբերյալ իր եզրահանգումը, Դատարանը հղում է կատարել ՄԻԵԴ–ի մի վճռի (*Պետրինասն ընդդեմ Ռումինիայի/Petrina v. Romania*, 14/10/2008, դիմում թիվ 78060/01), որի ոչ փաստական հանգամանքները, ոչ էլ՝ դրանով արձանագրված իրավական դիրքորոշումները կիրառելի չէին սույն գործի նկատմամբ: Սույն գործի հանգամանքների այդ նմանությունն ընդամենը մաթեմատիկական մոտավորությամբ նշված գումարների մոտավոր նմանության մեջ էր:

ՄԻԵԴ–ի կողմից բազմիցս նշվել է, որ թեև որոշված փոխհատուցման չափը հարաբերականորեն չափավոր է եղել ժամանակակից չափանիշների լույսի ներքո, այն էական էր դիմումատուների սահմանափակ եկամուտների և աղքատների համեմատ (*Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ ՄԹ/Tolstoy Miloslavsky v. the United Kingdom*,

13/07/1995, դիմում թիվ 18139/91, 39–րդ պարբերություն, *Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/Romanenko and others v. Russia*, 08/10/2009, դիմում թիվ 11751/03, 48–րդ պարբերություն): Հետևաբար, փոխհատուցման չափը որոշելիս պետք է հաշվի առնվեին ոչ թե այլ գործերով այլ երկրների համար սահմանված փոխհատուցման չափերը, այլ Հայցվորին նման հրապարակմամբ պատճառված վնասը, Պատասխանողի եկամուտները և փոխհատուցման ազդեցությունը վերջինիս գործունեության վրա:

Առաջին ատյանի դատարանի վճիռը վերահաստատվել է Վերաքննիչ դատարանի կողմից, իսկ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Որպես ամփոփում, ներպետական դատարանների կողմից Պատասխանող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության սահմանափակումը չէր կարող որևէ կերպ դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» և հանգեցրել է Սահմանադրության 27–րդ և ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածների խախտումների:

ՏԻԳՐԱՆ ԱՐՁԱՔԱՆՑՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «ԵՐԿԻՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-Ի

2011թ. հունվարի 13-ին «Երկիր» օրաթերթի 3/2326 համարում տպագրվել է հողված Տիգրան Արզաքանցյանի (այսուհետ՝ Հայցվոր) վերաբերյալ «131 դեմք ու դիմակ» խորագիրը կրող հողվածաշարի շրջանակներում: Տիգրան Արզաքանցյանը «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Պատասխանող) ուղարկել է տեքստ և պահանջել, որպեսզի այն, որպես վերոգրյալ հողվածին՝ իր կողմից տրված պատասխան, հրապարակվի «Երկիր» օրաթերթում: Այդ տեքստն օրաթերթը չի հրապարակել՝ դրա փոխարեն հրապարակելով մեկնաբանություն ստացված տեքստի վերաբերյալ: 2011թ. փետրվարի 11-ին Տիգրանը Արզաքանցյանը դիմել է դատարան ընդդեմ ընկերության՝ իր պատիվը և արժանապատվությունն արատավորող տեղեկությունները պատասխանողին հերքել պարտավորեցնելու, վիրավորանքի և զրպարտության միջոցով հասցված վնասի՝ 3.000.000 ՀՀ դրամ գումարի, ինչպես նաև դատական ծախսերի՝ 568.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջներով: Հայցվորը, մասնավորապես, վիրավորանք է համարել հողվածում իբրև թե Հրանտ Բագրատյանի կողմից իր վերաբերյալ արված «էդ լակոտր...» արտահայտությունը, ինչպես նաև «ստիլյագ» և «...առավել հասկանալի խոսում է հայրենի քյավառա բարբառով» արտահայտությունները: Ի լրումն սրանց՝ «... ինքնաթիռով գեղեցկուհիներ բերում ու տանում...», «հայտնի է որպես կազինոների մշտական հաճախորդ», «շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի», «ծեծ է կերել», «ամեն անգամ ծեծվելուց հետո...», «անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երևացել Ազգային ժողովի միջանցքներում» արտահայտությունները Հայցվորը որակել է զրպարտություն՝ պնդելով, որ.

«նման բառերը, արտահայտությունները և նախադասությունները՝ արտահայտված թեկուզև ցանկացած անձի, առավել ևս ժողովրդի կողմից ընտրված ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի հանդեպ, վիրավորական, դատապարտելի, պարսավելի և արատավորող են»:

Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի փոխհատուցման չափին, Հայցվորը նշել է, որ.

«... այդ չափն օրյեկտիվ է գնահատել հաշվի առնելով հասարակական կյանքում հայցվորի, որպես օրենսդիր իշխանության ներկայացուցչի, զբաղեցրած դիրքը, և նկատի ունենա-

լով այն հանգամանքը, որ վիրավորող և զրպարտող տեղեկությունները տարածվել են 2000 տպաքանակով հրատարակվող օրաթերում՝ հասու դառնալով հասարակության լայն զանգվածներին (ինչպես թղթային տարբերակով, այնպես էլ ինտերնետային)»:

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և հետազոտելով ներկայացված ապացույցները, գտել է, որ Տիգրան Արզաքանցյանի հայցն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ի ենթակա է մասնակի բավարարման: Ըստ այդմ, Դատարանը որոշել է, որ իբրև թե Հրանտ Բագրատյանի կողմից արված «...էդ լակոտը» արտահայտության մեջ «լակոտ» բառն ինքնին անձի արժանապատվությունը արատավորելու նպատակով կատարված արտահայտություն է և հանրության կողմից ընկալվում է որպես վիրավորական արտահայտություն: Այդ պատճառով 08.06.2011թ. Դատարանը որոշել է Հայցվորի պահանջը բավարարել մասնակի և Պատասխանողից հոգուտ Հայցվորի բռնագանձել 288.000 ՀՀ դրամ, որից 200.000 ՀՀ դրամը՝ որպես նրա կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում, 80.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրություն և 8000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետտուրքի գումարի մասնակի փոխհատուցում:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Դատարանի վճիռը, բացառությամբ երկու կետի, բավական հիմնավոր և ճիշտ վերլուծված դատական ակտ է, որտեղ հաշվի են առնվել ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված՝ սույն գործին վերաբերելի գրեթե բոլոր կարևորագույն սկզբունքները: Դրանք, մասնավորապես, վերաբերել են խոսքի ազատության կարևորությանը, թեմայի առնչությանը հանրային շահին, Հայցվորի անձին և կարգավիճակին, Պատասխանողի կարգավիճակին և դերին ժողովրդավարական հասարակությունում, պատասխանատու լրագրության չափորոշիչներին և փաստերի և գնահատողական դատողությունների միջև ճիշտ տարբերակում կատարելու անհրաժեշտությանը:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանն իրավացիորեն ընդգծել է խոսքի ազատության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում՝ վկայակոչելով ՄԻԵԴ-ի *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն)*, որտեղ առաջին անգամ ամրագրվել է այն կարևորագույն սկզբունքը՝ համաձայն որի.

«...արտահայտվելու ազատությունը ..., ինչպես այն երաշխավորված է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների պահպանման պարագայում ... ընդգրկում է ոչ միայն «տեղեկատվությունը» կամ «գաղափարները», որոնք լինում են նպաստավոր կամ դիտվում են անվնաս, կամ էլ՝ չեզոք, այլ նաև այնպիսիք, որոնք վիրավորում են (պետք է կարդալ՝ վրդո-

վեցնում են), ցնցում կամ անհանգստություն պատճառում պետությանը կամ բնակչության մի մասին: Այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության և ազատականության պահանջները, առանց որոնց գոյություն չունի ժողովրդավարական հասարակություն»:

Հայցվորի անձը և կարգավիճակը

Դատարանը ճիշտ է կիրառել ՄԻԵԴ–ի *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42–րդ պարբերություն) գործով շրջադարձային վճռով սահմանված այն սկզբունքը՝ համաձայն որի.

«...ինչ վերաբերում է քննադատության շրջանակներին, ապա քաղաքական գործիչների առնչությամբ, որպես այդպիսին, թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի լայն են, քան մասնավոր անձանց առնչությամբ: Ի տարբերություն մասնավոր անձանց, քաղաքական գործիչները գիտակցաբար և անխուսափելիորեն իրենց յուրաքանչյուր խոսքը և արարքը թողնում են բաց լրագրողների և հանրության վերլուծության համար և, հետևաբար, քաղաքական գործիչները պետք է ցուցաբերեն ավելի մեծ հանդուրժողականություն: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10–րդ հոդվածը հնարավորություն է տալիս պաշտպանել այլ այսինքն բոլոր անձանց հեղինակությունը և, հետևաբար, այդ պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա նույնիսկ եթե նրանք չեն գործում իրենց պաշտոնական լիազորությունների շրջաններում, սակայն նման դեպքերում նշված պաշտպանություն տրամադրելու պահանջը պետք է հավասարակշռվի քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճի հանրային շահի հետ»:

Պատասխանողի կարգավիճակը և մամուլի դերը ժողովրդավարական հասարակությունում

Դատարանը միանգամայն ճիշտ է կիրառել ՄԻԵԴ–ի՝ մամուլի դերին, գործառույթներին, իրավունքներին և պարտականություններին վերաբերող նախադեպերը, մասնավորապես՝ ընդգծելով, որ.

«Մամուլը կատարում է էական գործառույթներ ժողովրդավարական հասարակությունում: Թեև այն չպետք է անցնի որոշակի շրջանակներից հատկապես այլ անձանց հեղինակության և իրավունքների առնչությամբ, այդուհանդերձ, մամուլը կրում է հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի վերաբերյալ տեղեկություններ և գաղափարներ՝ իր պարտականությունների և պատասխանատվությունների պահպանմամբ տարածելու պարտավորություն: Ոչ միայն մամուլը կրում է նման տեղեկություններ և գաղափարներ տարածելու պարտավորություն, այլ հանրությունը նույնպես ունի նման (տեղեկություններ և գաղափարներ) ստանալու իրավունք» (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42–րդ պարբերություն):

Միանգամայն տեղին վկայակոչելով մի քանի այլ նախադեպային վճիռներ, այդ թվում՝ *Պրագերը և Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի (Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/84, 38–րդ պարբերություն), *Դե Հայեսն ու Գիյսելսն ընդդեմ Բելգիայի (De Haes and Gijssels v. Belgium*, 24/02/1997, դիմում թիվ

19983/92, 46–րդ պարբերություն)՝ Դատարանը ձիշտ է կիրառել ՄԻԵԴ–ի այն սկզբունքը՝ համաձայն որի.

«Ինչ վերաբերում է լրագրողական ազատությանը, ապա այն ներառում է որոշակի աստիճանի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն և այդ իմաստով Կոնվենցիայի 10–րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունների և գաղափարների բովանդակային մասը, այլ նաև դրանց մատուցման եղանակը»:

Դատարանը միանգամայն տեղին է կիրառել նաև պատասխանատու լրագրությանը վերաբերող՝ ՄԻԵԴ–ի *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02, 40–րդ պարբերություն)* նախադեպը՝ ընդգծելով, որ.

«Տեղեկություն տարածելու լրագրողի ազատության առնչությամբ եվրոպական դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 10–րդ հոդվածը պաշտպանում է համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ տեղեկություն տարածելու լրագրողի իրավունքը, եթե լրագրողը գործում է բարեխղճորեն և ձգրիտ փաստացի հիմքերի վրա ու տրամադրում է «վստահելի ու ձգրիտ» տեղեկություն լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա»:

Փաստական տվյալներն ընդդեմ գնահատողական դատողությունների

Դատարանը ձիշտ է կիրառել նաև ՄԻԵԴ–ի նախադեպերով բազմիցս սահմանված՝ փաստական տվյալները գնահատողական դատողություններից տարանջատելու պահանջը՝ մասնավորապես նշելով, որ.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մատնացույց է արել փաստերի և գնահատիչ դատողությունների միջև ձշտակատար տարբերություն դնելու անհրաժեշտությունը, քանզի փաստերի գոյությունը կարող է ապացուցվել, այն դեպքում, երբ գնահատիչ դատողությունների ձշմարտացիությունը ոչ միշտ է ապացուցման ենթարկվում: Այդ կապակցությամբ, այդպիսի դատողությունների առնչությամբ անհնարին է կատարել սեփական պնդումների ձշմարտացիության ապացուցման վերաբերյալ պահանջները, և այն խախտում է հենց կարծիքի արտահայտման ազատությունը, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 10–րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնական մասը: Այդուհանդերձ, գնահատող դատողությունը, որի հիմքում բացակայում են ինչ–ինչ փաստացի հիմքեր, կարող է լինել չափազանցված: Հետևաբար, խնդիրը կայանում է նրանում, թե արդյոք տվյալ գնահատող դատողության համար առկա են եղել բավարար փաստացի հիմքեր»:

Իր վերլուծության արդյունքում Դատարանը գտել է, որ հոդվածում տեղ գտած «ավելի հասկանալի խոսում է հայրենի քյավառա բարբառով» արտահայտությունն իր բնույթով գնահատող դատողություն է և, որպես այդպիսին, ապացուցման ենթակա չէ: Բացի այդ, ըստ Դատարանի՝ այն զուրկ չէ նաև որոշակի փաստական հիմքից, այն է՝ Հայվորի կողմից մի շարք լրատվամիջոցների հետ ընդգծված կերպով Գավառի բարբառով հաղորդակցվելու հանգամանքը: Դատարանը գնահատողական դատո-

դություն է գնահատել նաև «ստիլյագ» արտահայտությունը՝ համարելով, որ դրանով լրատվամիջոցն իր տեսակետն է հայտնել Հայցվորի հագնվելու ոճի մասին: Ավելին՝ Դատարանն ընդգծել է, որ ժողովրդի ընտրյալների կենսաձևը հանդիսանում է հանրային հետաքրքրություն ներկայացնող նյութ և այդ առումով տեսակետ հայտնելիս թույլատրվում է օգտագործել չափազանցված լեզվառձ:

Դատարանը, սակայն, վիրավորանք է գնահատել Հայցվորի հասցեին օգտագործված «լակոտ» բառը՝ պատճառաբանելով, որ այն ինքնին անձի արժանապատվությունն արատավորելու նպատակով կատարված արտահայտություն է և իր սովորական, առօրյա գործածության իմաստով հանրության կողմից ընկալվում է որպես վիրավորական արտահայտություն: Դատարանը նաև հղում է կատարել Էդ. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանին», որի համաձայն՝ «լակոտ» բառն ունի հայհոյական իմաստ և նշանակում է «ստահակ, գյաղա, ինչպես նաև տհաս և երեխա»: Դատարանն իրավացիորեն գտել է, որ.

«Լրատվամիջոցը պատասխանատվություն չէր կրի նման արտահայտության համար այն դեպքում, եթե հիմնավորեր, որ նշված արտահայտությունը կատարվել էր այլ անձի կողմից և որ լրագրողը զուտ վկայակոչել է այդ արտահայտությունը իրեն բավարար կերպով հեռու պահելով որպես այդ արարտահայտությունն իր սեփականը լինելուց»:

Դատարանը միաժամանակ հաշվի է առել այն հանգամանքը, որ Հայցվորը ներկայացրել է Հրանտ Բագրատյանի ստորագրությամբ գրավոր հայտարարություն, որտեղ վերջինս հերքել է նման հայտարարություն կատարած լինելու փաստը: Ըստ այդմ՝ հայտարարելով, որ առաջնորդվում է համաչափության սկզբունքով և հաշվի է առնում Պատասխանողի գույքային դրությունը՝ Դատարանը գտել է, որ այդ մասով որպես Հայցվորին հասցված վիրավորանք Պատասխանողը պետք է վճարի փոխհատուցում՝ 200.000 ՀՀ դրամ գումարի չափով, որով և կվերականգնվի պատասխանողի խախտված իրավունքը: Այդուհանդերձ, գտնում ենք, որ 200.000 ՀՀ դրամ փոխհատուցումը չի բավարարում համաչափության սկզբունքին և համարժեք չէ արված արտահայտության միջոցով Հայցվորին պատճառված վնասի չափին: Իրականում այն կարող է «սառեցնող ազդեցություն» ունենալ ազատ մամուլի վրա (*Ուայլն ընդդեմ Լիխտենշտեյնի/Wille v. Liechtenstein*, 28/10/1999, դիմում թիվ 28396/95, 50-րդ պարբերություն):

Ինչ վերաբերում է Հայցվորի կողմից զրպարտություն դիտարկած արտահայտություններին, ապա Դատարանը, քննության առնելով դրանք ՄԻԵԴ-ի նախադեպերի վերոգրյալ կարևոր սկզբունքների, այդ թվում՝ քաղաքական գործիչների կողմից հանդուրժողականության առավել բարձր աստիճան դրսևորելու պահանջի լույսի ներքո, գտել է, որ հայցն այդ մասով ենթակա է մերժման: Այդուհանդերձ, գտնում ենք, որ Դատարանը սխալ է գնահատել այն հանգամանքը, թե արդյոք վերոգրյալ արտահայտություններից մասնավորապես՝ «ինքնաթիռով գեղեցկուհիներ է բերում-տանում», «հայտնի է որպես կազինոների մշտական հաճախորդ», «ծեծ է կերել և ամեն անգամ ծեծ ուտելուց հետո ամիսներով բուժվում է և չի հաճախում Ազգային ժողովի

նիստերին», և «անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երևացել Ազգային ժողովի միջանցքներում» արտահայտություններն իրենց բնույթով արատավորող են, թե ոչ: Դատարանը գտել է, որ դրանք արատավորող չեն՝ պատճառաբանելով, որ.

«անկախ դրանց՝ իրականությանը համապատասխանելու փաստից, իրենց բնույթով զրպարտություն չեն հանդիսանում, քանի որ չեն ներառում զրպարտություն համարվելու համար էական նշանակություն ունեցող վերջինս տարրը (էական փաստը), մասնավորապես՝ դրանք չեն արատավորում հայցվորի ոչ պատիվը, ոչ արժանապատվությունը և ոչ էլ գործարար համբավը»:

Գտնում ենք, որ խնդրո առարկա արտահայտություններն իրականում արատավորող են, քանի որ ազգընտիր պատգամավորի կողմից ինքնաթիռներով գեղեցկուհիներ տանել-բերելու, կազմիտների մշտական հաճախորդ լինելու և ծեծ ուտելու սովորություն ունենալու երևույթները չեն կարող դատապարտելի չլինել հասարակության յուրաքանչյուր ողջամիտ անդամի կողմից: Այդուհանդերձ, դրանք չի կարելի զրպարտություն դիտարկել ոչ թե այն պատճառով, որ դրանք արատավորող չեն, այլ այն, որ դրանց վերաբերյալ Պատասխանող կողմը ներկայացրել էր մի շարք հրապարակումներ մամուլով, մինչդեռ Հայցվոր կողմը երբևէ դրանք հերքելու պահանջ չէր ներկայացրել հիշյալ լրատվամիջոցներին և նույնիսկ փորձ չէր արել այդ փաստերը հերքելու դատավարության ընթացքում, ինչը իր վճռում բավական տեղին նկատել էր Դատարանը՝ նշելով, որ.

«... վերոհիշյալ տեղեկատվական աղբյուրների կողմից համապատասխան հողվածներով տեղեկատվության տարածումը նույնպես կրել է հրապարակային բնույթ, մինչդեռ հայցվորը սվյալ լրատվական միջոցների կողմից հրապարակված տեղեկությունների վերաբերյալ որևէ առարկություն նախկինում չի ներկայացրել, իսկ դատաքնության ընթացքում պատասխանողի կողմից ներկայացված փաստերին նույնպես չառարկելու պարագայում կարելի է փաստել, որ տարածված արտահայտությունները՝ փաստացի տեղեկությունները, ըստ էության համապատասխանում են իրականությանը, որպիսի պարագայում զրպարտության մասին խոսք լինել չի կարող»:

Հարկ է ավելացնել նաև, որ թե Հայցվորը և թե Պատասխանողը վերաքննիչ բողոքներ են ներկայացրել առաջին ատյանի դատարանի վճռի դեմ, որոնք վերաքննիչ դատարանը չի բավարարել: Վճռաբեկ դատարանն իր հերթին վերադարձրել է կողմերի վճռաբեկ բողոքները:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ
(հրատարակիչ՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ)

Գործի հանգամանքները

20.09.2011թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Թաթուլ Մանասերյանի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող)՝ գրապարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին վճռեց Թ. Մանասերյանի հայցը բավարարել մասնակի, պարտավորեցնել «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ին հերքել «Ժամանակ» օրաթերթի «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» խորագրով հոդվածում Հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկատվությունը, հօգուտ Թ. Մանասերյանի բռնագանձել 510.000 ՀՀ դրամ, որից 300.000 ՀՀ դրամը՝ որպես փոխհատուցման գումար, 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրություն, 10.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցը մնացած մասով մերժվել է:

Վիճարկվող հրապարակումները

«Ժամանակ» օրաթերթում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ»: Հոդվածում տեղ են գտել հետևյալ ձևակերպումները. «Մեր տեղեկություններով՝ ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրգործ է հարուցվել, և այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում՝ հատուկ կարևորագույն քննիչներից մեկի վարույթում: Նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ: Մեկ այլ քրգործի շրջանակներում որպես վկա հրավիրված անձանցից մեկը միամիտ բերանից թոցրել է, որ Թաթուլ Մանասերյանն իրեն տոկոսով փող է տվել: Ասում են՝ այդպես էլ ծնվել է քրգործը»:

«Ժամանակ» օրաթերթի մեկ այլ համարում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է «Պրն Մանասերյան, \$ 40.000 տոկոսով չեք տվել»: Հոդվածում տեղ են գտել հետևյալ տեղեկությունները.

««Ժամանակ»–ում նախօրեին հրապարակված լուրից («Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդակա- նի ղեմ») անհանգստացած և զայրացած՝ երեկ խմբագրություն էր զանգահարել ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանը և պահանջում էր, որ հերքենք և նե- րողություն խնդրենք ոչ ճիշտ տեղեկատվության համար: Որպես հիմնավորում՝ նշում էր, որ ինքն անձամբ հետաքրքրվել է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի պետ Մաթևոսյանից, թե կա՞ իր ղեմ վաշխառության փաստով հարուցված քրգործ, թե ոչ, Մաթևոսյանն էլ բացասական պա- տասխան էր տվել: Մանասերյանն ասաց, որ ոստիկանությունն էլ է հերքել և մեզ ևս առաջարկեց անձամբ զանգել այդ պաշտոնյային և համոզվել: Բայց մենք զանգահարեցինք ոստիկանության լրատվական ծառայություն, որտեղ այնքան էլ տեղյակ չէին և առաջարկեցին՝ հաջորդ օրը զանգա- հարել մինչև քննիչներից պարզեն: Պարոն Մանասերյանին խնդրեցինք, ամեն դեպքում՝ հերքման տեքստ ուղարկել, սակայն նա ասաց, որ դա կանի, երբ մեզնից տեղեկանա, թե ինչ են պատասխա- նել ոստիկանությունից: Նաև հերքեց, որ ինքը նախօրեին ցուցմունք է տվել: Այնուհանդերձ, մեր աղբյուրները պնդում են, որ կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադ- րյալ անցնում է այլ անձ, ում Թաթուլ Մանասերյանը տվել է 40.000 դոլար՝ 12% տոկոսադրույքով: Նախաքննությունը դեռ շարունակվում է: Այլ մանրամասներ առայժմ չենք հրապարակում և այսօր անպայման կզանգահարենք ոստիկանություն»: 20.10.2010 թվականին Թաթուլ Մանասերյանը հերքման պահանջ է ներկայացրել «Ժամանակ» օրաթերթը հրատարակող ընկերությանը: Հերք- ման պահանջը բավարարելու վերաբերյալ գործում ապացույցներ չկան: Ընկերության միջնորդու- թյան և 09.06.2011 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ Ընկերությունն Ան- տոն Առակելովին վկայակոչել է որպես բացահայտման ենթակա աղբյուր»:

Դատարանը, հաշվի առնելով ապացուցման պարտականությունը Պատասխա- նողի կողմից չկատարելու հանգամանքը և Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչականի բաժնի պետի գրությունն այն մասին, որ Թաթուլ Մա- նասերյանի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ Կենտրոնականի քննչական բաժնում նյութեր չեն նախապատրաստված և քրեական գործ չի հարուցվել, հաս- տատված է համարել «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի ղեմ» վերտառու- թյամբ հողվածում Պատասխանողի տարածած տեղեկությունների մտացածին լինելու և իրականությանը չհամապատասխանելու փաստը: Ելնելով վերոգրյալից՝ առաջին ատյանի Դատարանը հիմնավոր է համարել Հայցվորի հերքման պահանջը:

Դատարանը վկայակոչել է խոսքի ազատությանն առնչվող՝ ՄԻԵԴ–ի մի շարք նա- խադեպեր: Մասնավորապես, վկայակոչվել են *Պեդերսենը և Բադսգարդն ընդդեմ Դանի- ալի (Pedersen and Baadsgaard v Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99)*, *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի, Բլադետ Թրոմսոն ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93)*, *Պրազերն ու Օբերշլիքն ընդդեմ Ավստրի- ալի (Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90)*, *Մաքվիքարն ընդդեմ Միացյալ Թագավորության/McVICAR v. the United Kingdom, 07/05/2002, դի- մում թիվ 46311/99)*, *Պֆայֆերն ընդդեմ Ավստրիայի (Pfeifer v. Austria, 15/11/2007, դի- մում թիվ 12556/03)* գործերով կայացված վճիռները:

Դատարանի վճռի վերլուծությունից բխում է, որ Դատարանն առանձին քննարկ-

ման առարկա չի դարձրել վիճարկվող հրապարակման մեջ հանրային շահի առկայության խնդիրը, ինչպես նաև հնարավորություն չի ընձեռել Պատասխանող կողմին որպես վկա դատարան հրավիրելու իր տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձին, ում կողմից հայտնաձև տեղեկությունները կարող էին նշանակություն ունենալ լրատվամիջոցի կողմից անհրաժեշտ ուսումնասիրության կատարման նպատակով ողջամիտ ջանքերի գործադրման, տեղեկատվության աղբյուրի վստահելիության գնահատման համար:

Դատարանը բավական հիմնավոր կերպով օրաթերթում հրապարակված երկրորդ հոդվածում ներառված տեղեկությունները գնահատել է որպես արատավորող բնույթ չունեցող:

Փոխհատուցման չափը որոշելիս Դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի պահանջներին լիովին համահունչ, հաշվի է առել Պատասխանողի գույքային դրությունը և կարգավիճակը (տպագիր լրատվամիջոց լինելու հանգամանքը և որպես այդպիսին, նրա ունեցած դերը): Վերոգրյալ պատճառաբանություններով Դատարանը փոխհատուցման չափը սահմանել է սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով:

Վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան, որն այն որոշմամբ մերժել է: Այնուհետև, որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը 27.04.2012թ. կայացված որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժել է:

Վճռաբեկ դատարանի որոշման վերլուծությունը

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառման առումով առկա է օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտություն, անդրադարձել է վերոնշյալ հոդվածով կարգավորվող հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը: Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ դատարանների հայեցողական լիազորության ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել ՄԻԵԴ-ի կողմից սահմանված չափորոշիչները խոսքի ազատության իրավունքի և դրա սահմանափակումների վերաբերյալ: Այնուհետև, Դատարանը մեկնաբանել է եռաստիճան թեսթի յուրաքանչյուր պահանջի բովանդակությունը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Թեև համանման մեկնաբանություններով արդեն իսկ հանդես էր եկել ՀՀ սահմանադրական դատարանն իր 15.11.2011թ. թիվ 997 որոշմամբ, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանի որոշմամբ եռաստիճան թեսթի հստակեցմանն ուղղված վերլուծությունը կարևոր գործնական նշանակություն կարող է ունենալ ստորադաս դատարանների համար գրպարտության և վիրավորանքի գործեր քննելիս:

Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կանոնակարգումները, որոնցից հատուկ ուշադրության են ենթակա, մասնավորապես, հետևյալները.

«Դատարանի կողմից մեկնաբանվել է «վիրավորանք» հասկացությունը. Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստը սպացուցելու դատավարական բեռը կրում է Հայցվորը,
2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետսպնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա»:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վիրավորանքը բնորոշվում է որպես պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն: Նորմի սահմանումից բխում է, որ վիրավորանքի հասկացության անհրաժեշտ բաղադրատարր է հանդիսանում արատավորելու նպատակը, այսինքն անձը ոչ միայն պետք է անի համապատասխան արտահայտությունը, այլև գործողությունը կատարելիս ունենա արատավորելու նպատակ: Մինևույն ժամանակ, նշված դրույթի նման ձևակերպումից դուրս է մնում բուն արտահայտության բնորոշումը՝ որպես արատավորողի: Ակնհայտ է, որ անձը համապատասխան հայտարարությունն անելիս կարող է ունենալ արատավորելու նպատակ, սակայն բուն արտահայտությունը, որպես այդպիսին, օբյեկտիվորեն չունենա արատավորող բնույթ:

Վճռաբեկ դատարանի կողմից արված մեկնաբանությամբ հստակեցվել է երկու բաղադրատարրերի/նպատակ, արատավորող բնույթ/ առկայության անհրաժեշտությունը՝ վիրավորանքի որակման համար:

Պետք է նշել նաև, որ իրավակիրառ պրակտիկայում առանձին դեպքերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում վիրավորանքի համապատասխան ձևակերպումը հանգեցրել էր այնպիսի մեկնաբանության և կիրառման, որով արատավորելու նպատակը, ըստ էության, հավասարեցվել է բուն արատավորման գործողությանը, արդյունքում, անտեսվել էր արտահայտության կատարման նպատակը (*Վերաքննիչ քաղաքացիական դատարան. քաղաքացիական գործ՝ ըստ հայցի Բելա և Սեդրակ Քոչարյանների ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր և հրատարակիչ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի*):

Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է նաև վիրավորանքի համատեքստում «հրապարակային» արտահայտությունը. *«հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում»:*

Նման մեկնաբանությունը համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. թիվ 997 որոշմանը, որով նույնպես առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ հասցված վիրավորանքը գնահատել է որպես հրապարակային:

Որպես հրապարակայնության հատկանիշի հետագա հստակեցում կարևորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի հետևյալ մեկնաբանությունը. «Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց»:

Նման մեկնաբանության շրջանակներում ողջամտորեն կարող են տեղավորվել այն դեպքերը, երբ լրագրողը զգուշացնում է հարցվողին հարցազրույցի ձայնագրման հանգամանքի մասին: Թեև այս դեպքում ներկա կարող են լինել միայն լրագրողն ու հարցվողը, սակայն հարցազրույցի ձայնագրման փաստի վերաբերյալ տեղեկացված լինելու հանգամանքը տրամաբանորեն կարող է հարցվողի կողմից արված արտահայտություններին վերագրել հրապարակային բնույթ, քանի որ դրանք ներկայացնող անձը/հարցվողը/, տեղեկացված լինելով հանդերձ, բավականաչափ միջոցներ չի ձեռնարկում դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ: Ձայնագրման փաստի մասին տեղեկացված լինելու պարագայում այլ երրորդ անձի բացակայությամբ արված արտահայտությունների հրապարակային բնույթի վերաբերյալ հետևությունը տրամաբանորեն բխում է վիրավորանքի հրապարակայնության սկզբունքի բովանդակությունից: Գործնական կարևոր նշանակություն կունենար նաև այս ուղղությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հետագա հստակեցումը ու համապատասխան մեկնաբանության ամրագրումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Անդրադառնալով «ստույգ փաստեր» եզրին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող):

Այնուամենայնիվ, գտնում ենք, որ տվյալ ձևակերպման մեկնաբանությունը որպես հրապարակման ժամանակ ապացույցներով հիմնավորվող տեղեկատվություն կամ հանրահայտ փաստերի ներկայացում, խնդրահարույց է: Այս հետևությունը բխում է նույն նորմում առկա հանրային գերակա շահի վերապահումից: Բանն այն է, որ հանրային շահի առկայությունը և գնահատողական դատողության համար հիմք հանդիսացող փաստական հիմքերը հաշվի առնելու անհրաժեշտությունը բխում է ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքից: Ստույգ փաստի առկայությունը ՄԻԵԴ–ի կողմից երբեք

չի պահանջվում գնահատողական դատողությունն արդարացնելու համար: ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի իմաստով գնահատողական դատողությունը չպետք է հիմնված լինի ստույգ փաստերի վրա: Բավական է, որ համապատասխան արատավորող արտահայտության համար լինեն այն պաշտպանող բավարար փաստական հիմքեր: Ընդ որում, որքան ավելի լուրջ է վիճարկվող հայտարարությունը, այնքան ավելի ամուր պետք է լինեն դրա փաստական հիմքերը:

ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածին վերաբերող գործերով ՄԻԵԴ–ը հայցվորի կողմից վիճարկվող արտահայտության ապացուցման վերաբերյալ սահմանել է հետևյալ ընդհանուր մոտեցումը.

«Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10–րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46–րդ պարբերություն): Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն, առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի, կարող է լինել չափազանց: Այդ փաստական հիմքերի և դատողության միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից (*Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի/ Feldeck v. Slovakia*, 12/07/2001, դիմում թիվ 29032/95, 76–րդ պարբերություն)»:

Հետևաբար, բոլոր դեպքերում արտահայտության՝ որպես վիրավորանքի որակման պայմանավորումը ստույգ փաստերի հիմնավորմամբ, չի բխում ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի պահանջներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատողական դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է նաև զրպարտության հասկացությունը: Մասնավորապես, նշվել է.

«Արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսա-

կան կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»։ Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. *անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,*
2. *անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,*
3. *ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,*
4. *ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:*

Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված բոլոր վերոնշյալ չափորոշիչները կարևոր գործնական նշանակություն ունեն դատարանների կողմից զրպարտության և վիրավորանքի գործերի քննության համար:

Կարևորվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արված հետևյալ հստակեցումը.

«Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ (տե՛ս *Դյուլդինը և Կիսլովին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/ Dyuldin and Kislov v. Russia*, 31/07/2007, դիմում թիվ 25968/02., 38–րդ պարբերություն):

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն պայմաններին, որոնց առկայության պարագայում փաստական տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն:

Առանձնակի կարևորություն է ձեռք բերում այս համատեքստում Դատարանի կողմից բարեխղճության եզրի մեկնաբանությունը, որն ունի բավական մեծ գործնական նշանակություն: Այսպես, Դատարանն ընդգծել է, որ համապատասխան դրույթի պարագայում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստական տվյալի

(տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք:

Բարեխիղճ վերարտադրության վերաբերյալ հղումներ պարունակվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասում: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ մեկնաբանությունից բխում է, որ եթե լրագրողի կողմից վերարտադրվել է, օրինակ, այլ լրատվամիջոցում տեղ գտած տեղեկատվությունը շարադրանքի ձևափոխություններով՝ առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման, ապա այն տեղավորվում է բարեխիղճ վերարտադրության սահմանման շրջանակների մեջ:

Դատարանի կողմից մեկնաբանվել է նաև «հավասարակշռված» եզրը, մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստական տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստական տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

Դատարանի այս մեկնաբանությունն արվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համատեքստում, համաձայն որի՝ ներկայացված փաստական տվյալները չեն համարվում զրպարտություն, եթե դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե դրանք հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

Վերոգրյալ նորմով սահմանված պայմաններն առավելապես բխում են ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայից և դրանք համապատասխան հիմք են հանդիսանում լրագրողի կողմից փաստերն ստուգելու ընդհանուր պարտականությունից ազատելու համար, այնուամենայնիվ, «հավասարակշռված» եզրի նման մեկնաբանությունը տարբերվում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում կիրառվող մեկնաբանությունից: «Հավասարակշռված ներկայացման» հասկացությունն այս առումով հնարավոր է ունի առավել հստակեցման և մեկնաբանման անհրաժեշտություն:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն պատասխանատվությունից ազատելու դեպքերին: Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը:

Վերոգրյալ դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերից հետևում է, որ անձն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, տեղեկատվությունը տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին: Տեղեկատվությունը բառացի կամ բարեխիղճ ներկայացնելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում ապահովել բացահայտված աղբյուրում տեղ գտած տեղեկատվության բառացի շարադրանքը կամ հրապարակել այն այնպես, որ չփոխվի ինչպես ամբողջական իմաստը, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Այնուհետև, հաշվի առնելով վերոգրյալը,՝ Վճռաբեկ դատարանը հանդես է եկել հետևյալ խնդրահարույց մեկնաբանությամբ.

«Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերում ամրագրված «տեղեկատվության աղբյուր» եզրույթին: Նշված դրույթների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության աղբյուրներն անձինք են (ֆիզիկական և իրավաբանական), որոնք տարբեր միջոցներով հրապարակում են տեղեկատվությունը: Տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշատակված դրույթներում ամրագրված անձի հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստեղծագործությունները տեղեկատվության աղբյուրների կողմից օգտագործվող միջոցներ են:

Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա

առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից:

Վերոնշյալ պարբերությունից ակնհայտ է Վճռաբեկ դատարանի երկու մեկնաբանությունների միջև առկա հակասությունը: Մասնավորապես, նույն որոշման՝ «բարեխիղճ վերարտադրություն» մեկնաբանությանն առնչվող հատվածում Դատարանը շեշտել է, որ բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստական տվյալի (տվյալների)) ամբողջական, **առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք**, մինչդեռ որոշման այս մասում Վճռաբեկ դատարանը բարեխիղճ վերարտադրություն չի համարում, եթե հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, **ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը)**: Ընդ որում, որևէ հղում չի կատարվում համապատասխան փաստերի էական լինելու, ավելացված փաստերի՝ իրականությանը համապատասխանելու հարցերին:

Մեկ այլ՝ խնդրահարույց մեկնաբանություն է կատարվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տեղեկատվության աղբյուրի հասկացության պարզաբանման համատեքստում: Մասնավորապես, դատարանի կողմից նշվել է.

«Նույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ տարածողը թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն: Վերը նշված երկու դեպքերում էլ տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում գրպարտող կամ վիրավորող»:

Փաստորեն, Դատարանը սահմանափակել է տեղեկատվության աղբյուրների շրջանակն այն անձանցով (Ֆիզիկական և իրավաբանական), որոնք տարբեր միջոցներով հրապարակում են տեղեկատվությունը, այն է հեղինակներով և լրատվական գործակալություններով, ինչը համահունչ չէ ՄԻԵԴ-ի կողմից Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ մշակված նախադեպային պրակտիկային: Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի՝ նման հետևության հանգեցնող մեկնաբանությունը չի բխում ոչ հոդվածի տրամաբանությունից և ոչ էլ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պահանջներից: Պետք է նկատի ունենալ նաև, որ հիշյալ հոդվածի 6-րդ մասը վերաբերում է պատասխանատվությունից ազատելու դեպքերին, իսկ 9-րդ մասն ըստ էության կարգավորում է փոխհատուցման պարտավորության սուբյեկտների փոփոխման, այլ ոչ թե պատասխանատվությունից ազատման հարաբերությունները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տեղեկատվություն հրապարակողը, եթե նույնիսկ հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ և հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ

ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ:

Թեև նման մեկնաբանությունը, որպես այդպիսին, բխում է ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի ընդհանուր տրամաբանությունից, սակայն հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 9–րդ մասին, որպիսի պարագայում գտնում ենք, որ նշված հարցը կարող է լուծվել օրենսդրական իրավակարգավորման ճանապարհով և չի կարող կարգավորվել իրավական նորմին ուղղակիորեն հակասող մեկնաբանության ամրագրմամբ:

ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի, ՄԻԵԴ–ի՝ տեղեկատվության աղբյուրների բացահայտմանն առնչվող նախադեպային սկզբունքների լույսի ներքո առավել խնդրահարույց և հակասական է ՀՀ վճռաբեկ դատարանի հետևյալ մեկնաբանությունը.

«Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ: Տեղեկատվությունը տարածելիս և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումը նպատակ է հետապնդում այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ ապահովել տեղեկացվածություն այն մասին, որ զրպարտությունը կամ վիրավորանքը դուրս է գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Աղբյուրի բացահայտումը, կախված աղբյուրի տեսակից, կարող է ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա: Մինչդեռ տեղեկատվության աղբյուրը դատական վարույթի ընթացքում բացահայտելը լիարժեք չի ապահովում զրպարտող կամ վիրավորող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը»:

Վճռաբեկ դատարանի կողմից հստակեցում է արվել Պատասխանողի գույքային դրության վերաբերյալ ապացույցներ և փաստարկներ ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտների առումով: Այս հստակեցումը դատական պրակտիկայում առավել քան անհրաժեշտ էր, քանի որ դատարանների կողմից նշված հարցի շուրջ հակասական մոտեցումների կիրառման արդյունքում որոշ դեպքերում գույքային դրության վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը դրվում էր Հայցվորի վրա:

Վճռաբեկ դատարանը շեշտել է.

«Նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գումարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր (օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային հաշվետվությունները), հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ

վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով: Ընդ որում, այս հարցի քննարկման ժամանակ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն հայցվոր կողմի՝ նյութական փոխհատուցման պահանջի վերաբերյալ պատասխանող կողմի ներկայացրած փաստարկներին, որոնք, ըստ էության, պետք է պարունակեն նաև տեղեկություններ իրենց բնականոն գործունեության նկատմամբ պահանջվող փոխհատուցման չափի ֆինանսական ազդեցության վերաբերյալ»:

Այսպիսով, դատարանի կողմից միանշանակորեն արձանագրվել է, որ զրպարտության և վիրավորանքի գործերով պատասխանողի գույքային դրության վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է Պատասխանող կողմը:

Մեկ այլ կարևոր դիտարկում է արվել դատարանի կողմից փոխհատուցման չափի որոշման ուղենիշների սահմանման իմաստով:

«...Երբ վիրավորանքը կամ զրպարտությունը շարունակվում են նաև գործի քննության ընթացքում (գործի՝ դատարանում քննության գտնվելու ողջ ժամանակահատվածում), այդ հանգամանքը դատարանները կարող են հաշվի առնել դրամական փոխհատուցման չափ նշանակելու հարցը լուծելիս»:

Այս եզրահանգումը համահունչ է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի և Սահմանադրական դատարանի 15.11.2011թ. թիվ 997 որոշմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման ամբողջական վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի միատեսակ կիրառման նպատակով կատարվել են բավական կարևոր և գործնական նշանակություն ունեցող մեկնաբանություններ և հստակեցումներ, որոնք կարող են էական դեր ունենալ դատարանների համար վիրավորանքի և զրպարտության գործերի քննության համար: Մինևույն ժամանակ, որոշմամբ ամրագրված որոշ մեկնաբանություններ դատական պրակտիկայում կարող են հանգեցնել խոսքի ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումների՝ հանգեցնելով ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտման:

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԸՆԴԴԵՄ «ՀԱՅՔ»
ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ, ԹՂԹԱԿԻՑ
ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ**

Գործի հանգամանքները

27.09.2011թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սուսաննա Բաղդասարյանի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Հայք» թերթի խմբագրության, «Հայք» թերթի թղթակից Արման Գալոյանի, Սվետլանա Առաքելյանի՝ (այսուհետ՝ Պատասխանողներ) «Հայք» թերթի համարում երկրորդ Պատասխանողի հեղինակած «Սպանության հետքերով» հոդվածում հրապարակված, հանգուցյալ որդու հիշատակը պղծող, բարի համբավն ու անունն արատավորող տեղեկությունները հերքելու պահանջի մասին, վճռել է հայցը բավարարել մասնակի: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31–րդ հոդվածի 3–րդ կետի հիմքով՝ որպես Պատասխանող մասնակից է դարձվել նաև գործով վկա հանդես եկած Սվետլանա Առաքելյանը:

2007թ. փետրվարի 21–ին Վայոց Ձոր մարզի Արենի գյուղում, իրենց տան առաջին հարկում, մուտքի մոտ Հայցվորի ամուսնու ծնողները հայտնաբերել են նրա որդուն՝ 28.10.1989 թվականին ծնված Հայկ Բաղդասարյանին՝ մահացած, դեմքին պոլիէթիլեն տոպրակով ինչ–որ նյութ կպցրած վիճակում: Դիակի դատաբժշկական, դատաքիմիական փորձաքննությունների արդյունքներով հերքվել է որդու կողմից թմրանյութեր օգտագործած լինելու հանգամանքը:

Ամուսինը՝ Համլետ Բաղդասարյանը, հիմնավոր կասկածներ ունենալով որդու սպանության մեջ իրենց համագյուղացի Կարեն Մանուկյանի մասնակցության վերաբերյալ՝ 2007թ. օգոստոսի 18–ի երեկոյան պատահականորեն հանդիպելով նրան և զրույցի ընթացքում արդեն համոզվելով դրանում՝ սպանել է վերջինիս: Կատարած հանցագործության համար ամուսինը դատապարտվել է ազատազրկման 10 տարի ժամկետով: Երկու սպանությունների վերաբերյալ հանրության շրջանում տարբեր խոսակցություններ, վարկածներ, մեկնաբանություններ են շրջանառվել:

Հոդվածի հեղինակը գրուցել է սպանված Կարենի կնոջ՝ Սվետլանայի հետ: Վերջինս զրույցի ընթացքում Հայկին ներկայացրել է որպես թմրամոլ: Զրույցին հաջորդել

է «Հայք» թերթի թղթակից Արման Գալոյանի «Սպանության հետքերով» վերնագրով հետևյալ բովանդակությամբ հոդվածը.

«Խոսքը «Ամպրոպ» ՍՊԸ-ին պատկանող Արենի գյուղի հարևանությամբ գտնվող քարհանքի պահակ, այդ գյուղի բնակիչ Կարեն Մանուկյանի սպանության մասին է: Վերջինիս կինը պատմում է, որ 2007 թվականի օգոստոսի 18-ին Կարենը երեկոյան դուրս է եկել տանից ու այլևս չի վերադարձել: ... Մեր հարցին, թե որն է սպանության պատճառը, սպանվածի այրին պատմեց, որ Գեղամ Բաղդասարյանը Կարենին կասկածել է իր թոռան՝ Հայկի մահվան մեջ: Հայկը մահացել էր 2006թ. փետրվարին՝ թմրանյութ օգտագործելիս: Գեղամը համոզված էր, որ Կարենն է նրան սովորեցրել թմրանյութ օգտագործել: Բայց Կարենը կյանքում չգիտեր ինչ բան է թմրանյութը, բացի այդ, երբ Հայկը եկավ Ռուսաստանից, արդեն թմրամոլ էր: Բոլորը դա գիտեին: Նույնիս նրա հայրը, որ եկավ թաղմանը, ասում էր՝ ինքը գիտի, որ իր տղան վաղ թե ուշ մեռնելու է», – ասում է Կարինեն:...

Հոդվածում ներկայացվել է, որ Հայկը մահացել է թմրանյութեր գործածելիս: Հայցվորը պահանջել է հերքել հոդվածում հրապարակված, հանգուցյալ որդու հիշատակը պղծող, բարի համբավն ու անունն արատավորող տեղեկությունները: Հաշվի առնելով արատավորող տեղեկությունները Սվետլանա Առաքելյանի կողմից հայտնած լինելու հանգամանքը՝ Հայցվորը հայցապահանջը հղել է նաև գործով Պատասխանող ներգրավված Սվետլանա Առաքելյանի նկատմամբ:

Դատարանի վճիռը

Սվետլանա Առաքելյանը Դատարանին տված ցուցմունքով հայտնել է, որ տեղեկությունները փոխանցել է իր տուն եկած անձին՝ չիմանալով, որ վերջինս լրագրող է:

Դատարանը, հաստատված է համարել հրապարակված տեղեկությունների արատավորող լինելու հանգամանքը, քանի որ այդ տեղեկությունները հանրության կողմից դատապարտելի և պարսավելի են:

Դատարանը փաստել է, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հաստատվել Հայկ Բաղդասարյանի՝ թմրամիջոցներ օգտագործելիս մահանալու հանգամանքը: Ավելին, չունենալով ապացուցման պարտականություն՝ Հայցվորը, ի դեմս ներկայացուցչի, նախապատրաստական փուլի ընթացքում Դատարանին է ներկայացրել «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկայի փորձագետի եզրակացությունը, որի համաձայն՝ Հայկ Բաղդասարյանի մեզի փորձանմուշում ալկոհոլի և թմրամիջոցների հետքեր չեն հայտնաբերվել, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետի եզրակացությունը, ըստ որի՝ մահվան նախորդող պահին Հ. Բաղդասարյանի դիակից վերցված մեզի և ներքին օրգանների կտորների մեջ, ըստ դատաբիմիական ուումնասիրության եզրակացության, թմրանյութեր, ալկոհոլ և թունաքիմիկատներ չեն հայտնաբերվել: Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ հոդվածում, որպես Կարեն Մանուկյանի կին հիշատակված Կարինեն սույն գործով Պատասխանող Սվետլանա Առաքելյանն է, որի տրամադրած տեղեկատվության բա-

ուացի շարադրանքն էլ զետեղվել է հողվածում, որպիսի փաստը հավաստել է նաև Սվետլանա Առաքելյանը դատաքննությամբ տրված ցուցմունքներով: Ընդ որում, տեղեկատվությունը մեջբերված է որպես ուրիշի (Սվետլանա Առաքելյանի) ուղղակի խոսք՝ չակերտների մեջ: Այսինքն, հողվածում առկա է հղում սկզբնաղբյուրին, որն էլ այդ փաստը չի ժխտում, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը կրում է Սվետլանա Առաքելյանը՝ որպես թերթի միջոցով արատավորող տեղեկությունների տարածող: Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատված համարելով Հայկ Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների տարածման փաստը Սվետլանա Առաքելյանի կողմից, և, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատաքննությամբ չի ապացուցվել արատավորող տեղեկությունների համապատասխանությունն իրականությանը՝ Դատարանը գտել է, որ «Հայք» թերթում հրապարակված հողվածում՝ վերնագրված «Սպանության հետքերով», տեղ գտած տեղեկությունները (այն մասին, որ «Հայկը մահացել էր 2006 թ. փետրվարին՝ թմրանյութ օգտագործելիս», «երբ Հայկը եկավ Ռուսաստանից, արդեն թմրամոլ էր») ենթակա են հերքման:

Վճռով Ս. Առաքելյանը պարտավորեցվել է հերքել հրապարակված «Սպանության հետքերով» խորագրով հողվածում Հայկ Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները և հերքումը տպագրել նույն «Հայք» թերթում: Լրացուցիչ վճիռ կայացնելու Հայցվորի միջնորդությունը (նկատի ունենալով, որ թերթը այլևս լույս չի տեսնում) Դատարանի կողմից մերժվել է:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Հանրային նշանակությունը

Հողվածում, ի թիվս այլ տեղեկությունների, քննարկվում են Հայցվորի որդու՝ Հայկ Բաղդասարյանի մահվան հանգամանքները, նշելով, որ Հայկը մահացել է թմրանյութ օգտագործելիս:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ Դատարանն ընդլայնված պաշտպանություն է տրամադրում խոսքի ազատությանը, եթե համապատասխան հայտարարություններն արվել են հանրային քննարկման համատեքստում (*Ֆլաքսն ընդդեմ Միդոլայի/Flux v. Moldova*, 20/11/2007, դիմում թիվ 28702/03, *Կրասուլյան ընդդեմ ՌԴ/Krasulya v. Russia*, 22/02/2007, դիմում թիվ 12365/03): Հանրային շահի առկայությունը ՄԻԵԴ-ի կողմից տարբերակվում է երկու ասպեկտներով՝ այն սուբյեկտների շրջանակով, որոնց նկատմամբ քննադատության շրջանակներն ավելի լայն են՝ մասնավոր անձանց համեմատ և այն հիմնահարցերի շրջանակով, որոնք առնչվում են հանրային շահին: ՄԻԵԴ-ի կողմից հետևողականորեն տարբերակվել են այն դեպքերը,

երբ առկա է հասարակության տեղեկացված լինելու իրավունքը և երբ հրապարակումը ծառայում է զուտ որոշ ընթերցողների հետաքրքրասիրությունը բավարարելուն (*Ստանդարտ Վերլագս ԳմբԻ-ն ընդդեմ Ակտորիայի/Standard Verlags GmbH v. Austria*, 04/06/2009, դիմում թիվ 34702/07, 32-րդ պարբերություն):

Դատարանի վճռով ընդհանրապես քննարկման առարկա չի դարձել հանրային շահի առկայության հարցը խնդրո առարկա հրապարակման մեջ, որը հողվածի բովանդակությունից առնվազն չի բխում:

Հայցվորի կարգավիճակը

Հայցվորը վիճարկվող հողվածում հիշատակված անձի՝ Հայկ Բաղդասարյանի մայրն է՝ Ս. Բաղդասարյանը, որը վերջինիս մահից հետո հանդես է եկել նրա պատվի և արժանապատվության պաշտպանության պահանջով:

Հողվածի բովանդակությունից բխում է, որ Հ. Բաղդասարյանը մասնավոր անձ է, որի պարագայում ՄԻԵԴ-ն առավելագույն պաշտպանություն է նախատեսում զրպարտչական հայտարարությունների դեպքում, քանի որ նա գիտակցաբար իրեն ենթակա չի դարձրել հանրային մանրակրկիտ քննարկման համար (*Թամմերն ընդդեմ Էստոնիայի/ Tammer v. Estonia*, 06/02/2001, դիմում թիվ 41205/98):

Փաստեր և գնահատողական դատողություններ

Դատարանի կողմից առանձին քննարկման առարկա չի դարձել հրապարակված տեղեկությունների տեսակը (փաստ թե գնահատողական դատողություն): Հողվածի բովանդակությունից բխում է, որ վիճարկվող հայտարարություններն ունեցել են փաստական տվյալների շարադրանք:

Հողվածում մեջ է բերվել որպես Կարինե հիշատակված Կարեն Մանուկյանի կնոջ խոսքը, որում էլ ներկայացված են վիճարկվող հայտարարությունները: Դատաքննությանը հաստատվել է, որ Կարինեն գործով Պատասխանող Սվետլանա Առաքելյանն է, այսինքն՝ հողվածում վերջինիս անունը փոխված է: Թեև Դատարանի վճռով հաստատվել է Ս. Առաքելյանի ինքնությունը՝ որպես վիճարկվող արտահայտությունների աղբյուր, այդ հանգամանքը չի քննարկվել որպես լրագրողի կողմից աղբյուրը հստակ չնույնականացնելու գործոն՝ վիճարկվող հայտարարություններից լրագրողի կողմից պատշաճ հեռավորություն ապահովելու համատեքստում:

Այլ անձանց խոսքի վերարտադրությանն առնչվող ՄԻԵԴ-ի դիրքորոշումները հետևյալն են. հարցագրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչնդոտի՝ հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ (*Ջերսիլդն ընդդեմ Դանիայի/Jersild v Denmark*, 23/09/1994, դիմում թիվ 15890/89, 35-րդ պարբերություն): Լրագրողների նկատմամբ ընդհանուր պահանջը, ըստ որի՝ նրանք պարտավոր են պարբերաբար և ձևականորեն իրենց տարանջատել այլ ան-

ձանց վիրավորող, սադրող կամ նրանց հեղինակությանը վնասող մեջբերման բովանդակությունից, անհամատեղելի է ընթացիկ դեպքերի, կարծիքների և գաղափարների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու մամուլի դերի հետ (*Թոմասն ընդդեմ Լյուքսեմբուրգի/Thoma v. Luxembourg*, 29/03/2001, դիմում թիվ 38432/97, 64–րդ պարբերություն):

Էրլա Հլինսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի (Erla Hlynsdottir v. Iceland, 10/07/2012, դիմում թիվ 43380/10, 70–րդ պարբերություն) գործով կայացված վճռով ՄԻԵԴ–ը շեշտել է, որ.

«...վերարտադրելով ոչ միայն պարոն Բ–ի և պարոն Ը–ի իրադարձությունների տարբերակները, այլ նաև պարոն Ա–ի /մեղադրանքների սուբյեկտի/ տարբերակը՝ դիմումատուն փորձել է հավասարակշռության հասնել իր լուսաբանման մեջ: ... Թեև համապատասխան հայտարարությունները կարող էին վնաս պատճառել պարոն Ա–ի հեղինակությանը, Դատարանը պատճառ չի տեսնում քննադատելու դիմումատուին, այն հարցում, որ վերջինս հեռավորություն չի ապահովել պարոն Բ–ի հայտարարությունների բովանդակությունից»:

Սույն գործով Սվետլանա Առաքելյանը դատարանին տված ցուցմունքով հայտնել է, որ տեղեկությունները փոխանցել է իր տուն եկած անձին՝ չիմանալով, որ վերջինս լրագրող է:

ՄԻԵԴ–ի կողմից սահմանված վերոնշյալ նախադեպային սկզբունքներն այլ անձանց հայտարարությունների տարածմանը լրագրողի աջակցության և դրա համար պատասխանատվության բացառման վերաբերյալ (առանց հիմնավոր պատճառների) դժվար թե կիրառելի լինեին այս գործով, քանի որ դրանք հրապարակային ներկայացնողը եղել է ոչ թե Ս. Առաքելյանը, այլ լրագրողը և լրատվամիջոցը, իսկ Ս. Առաքելյանը այդ տեղեկությունները լրագրողին հայտնել է առանց դրանք տարածելու մտադրության, առանց վերջինիս՝ լրագրող լինելու հանգամանքի իմացության: Բացի այդ, լրագրողը հողվածում պատշաճ կարգով չի նույնականացրել տեղեկատվության աղբյուրը: Նշվածի լույսի ներքո էլ ավելի խնդրահարույց է Ս. Առաքելյանի վրա համապատասխան տեղեկությունները հերքելու պարտականություն դնելը:

Վճիռը խնդրահարույց է նաև այն մասով, որ վճռի կայացման պահին «Հայք» թերթը այլևս լույս չէր տեսնում, հետևաբար հերքումը հնարավոր չէր լինի հրապարակել:

Սույն գործով կիրառելի են նաև ՄԻԵԴ–ի հետևյալ դիրքորոշումները.

«Կոնվենցիայի 10–րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան» (*Բլադետ Թրոմսոն և Ստենսասն ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65–րդ պարբերություն, *Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն): «ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի 2–րդ մասին համապատասխան՝ այս ազատության իրականացումը ենթադրում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մա-

մուլի նկատմամբ: Այս պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում էական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը և խախտվում են «այլոց իրավունքները»: «Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար» (*Եվրոպայի հրեա Հոլդինգ Դ.Օ.Օ. ընդդեմ Խորվաթիայի/Europapress Holding D.O.O. v. Croatia*, 22/10/2009, դիմում թիվ 25333/06, 66-րդ պարբերություն):

Դատարանի կողմից ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպերին որևէ հղում չի կատարվել, չի իրականացվել նաև գործի հանգամանքների՝ վերոնշյալ նախադեպային սկզբունքներով պայմանավորված իրավական վերլուծություն:

**ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԸՆԴԴԵՄ
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-Ի**

Գործի հանգամանքները

«Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի «Կենտրոն» հեռուստաընկերությունը (այսուհետ՝ Պատասխանող) «Հետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում տեսանյութ է հեռարձակել, որում Գևորգ Հայրապետյանը (այսուհետ՝ Հայցվոր) ներկայացվել է որպես լրտեսության ձևով պետական դավաճանություն կատարած անձ: Ներկայացվել է նաև, որ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը Գևորգ Հայրապետյանի վերաբերյալ կայացրել է մեղադրական դատավճիռ: Հրապարակվել է, որ նույն քրեական գործով մեղադրյալ Բաղերիին փոխանցված սկավառակը պահված է եղել նրա պայուսակի ստորին մասի տակդիրում, որը հայտնաբերվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ աշխատակիցների կողմից: Ներկայացված հատվածում Գևորգ Հայրապետյանը, կատարելով լրտեսություն, ակնկալել է ստանալ 60.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ Քելբաջարում տեղադրված ականների տեղակայման վայրերը հայտնելու համար նրան խոստացել են յուրաքանչյուր ականի համար 1000 ԱՄՆ դոլար գումար: Տեսանյութում ցուցադրվել են կադրեր, որոնցում ինչ-որ անձ մեկ այլ անձի գումար է փոխանցում: Տեսանյութի ցուցադրման ժամանակ բացակայել է նշումը, որ ցուցադրվող կադրերն օպերատիվ նկարահանումներ չեն: Տեսանյութը եթեր է հեռարձակվել 2010 թ. նոյեմբերի 14-21-ն ընկած ժամանակահատվածում:

«Կենտրոն» հեռուստաընկերությանն ուղղված 01.12.2010 թվականի գրությամբ Հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ Գևորգ Հայրապետյանի վերաբերյալ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.10.2010 թ. մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտել, հետևաբար, այդ պայմաններում նման տեսանյութի եթեր հեռարձակումը խախտում է Գևորգ Հայրապետյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված անմեղության կանխավարկածի իրավունքը:

Գործի դատավարական նախապատմությունը

28.12.2012թ. Գևորգ Հայրապետյանը (այսուհետ՝ Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատասխանող)՝ իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու նպատակով իրեն անվճար հեռուստաժամ տրամադրելու պահանջով: 17.02.2011թ. դատարան ներկայացված դիմումով Հայցվորի ներկայացուցիչն, ավելացնելով հայցապահանջը, խնդրել է Պատասխանող ընկերությունից հոգուտ Գևորգ Հայրապետյանի գանձել 3.000.000 ՀՀ դրամ գումար՝ որպես պատճառված բարոյական վնասի փոխհատուցում:

16.10.2011թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել, որով մերժել է Գևորգ Հայրապետյանի հայցն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲ ընկերության՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածի խախտման փաստն արձանագրելու, քաղաքացու պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու նպատակով Հայցվորին անվճար հեռուստաժամ տրամադրելու և պատճառված բարոյական վնասի հատուցման պահանջի մասին:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել Գևորգ Հայրապետյանն ու նրա ներկայացուցիչը:

2011թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է Գևորգ Հայրապետյանի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ բողոք է բերել Գևորգ Հայրապետյանի ներկայացուցիչը: ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել Գևորգ Հայրապետյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Իր վճռում Դատարանը հղում է կատարել ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին, որոնք ամրագրում են արտահայտվելու ազատության իրավունքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքին:

Նշված իրավական ակտերին հղումներ կատարելով՝ Դատարանը հետևություն է կատարել, որ ՀՀ-ում երաշխավորված է տեղեկատվության ազատության իրավունքը, և ԶԼՄ-ները հանդիսանում են տեղեկություններ և գաղափարներ փնտրող, ստացող և տարածող սուբյեկտներ:

Դատարանն արձանագրել է, որ Գևորգ Հայրապետյանի վերաբերյալ հարուցված քրեական գործի նյութերն այն իմաստով, որքանով չեն պարունակում պետական գաղտնիք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում են տեղեկատվություն և կարող են հրապարակվել:

Դատարանն արձանագրել է, որ զանգվածային լրատվամիջոցը, հրապարակելով տեսանյութը, ներկայացրել է բացառապես այն եղելությունը, ինչն արտահայտված է քրեական գործի նյութերում՝ չկատարելով որևէ սեփական հետևություն: Դատարանը հաստատված է համարել, որ Պատասխանող ընկերությունը հրապարակել է բացառապես քրեական գործի նյութերում և դատարանի դատավճռում շարադրված տեղեկություններ և հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին:

Դատարանը գտել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածի խախտման փաստն արձանագրելու պահանջը զուրկ է իրավական և օրենսդրական հիմքից և ենթակա է մերժման:

Անդրադառնալով Հայցվորի՝ որպես բարոյական վնասի հատուցում 3.000.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջին՝ Դատարանը փաստել է, որ օրենսդիրն անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ միասին հնարավորություն է ընձեռել նաև վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասի, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար կատարած ողջամիտ ծախսերը, այլ ոչ՝ բարոյական վնասի հատուցում:

Հերքման պահանջի մասով Դատարանը նշել է, որ օրենսդիրը նախատեսել է տեղեկատվության մեջ անձի իրավունքները խախտող փաստացի անձշտությունները հերքելու եղանակները: Օրենսդիրը որպես հերքման եղանակ չի նախատեսել իրավունքը խախտած անձին կամ նրա ներկայացուցչին անվճար հեռուստաեթեր տրամադրելը:

Դատարանը վճռել է հայցը մերժել և Հայցվորից բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով նյութական իրավունքի խախտման վերաբերյալ բողոքի հիմքին, հիշատակել է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը, որը սահմանում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները բարձրագույն արժեքներ են, ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, որի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբալկտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասին, որով սահմանված է, որ քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել

հերքելու իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չսպացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը:

Վերաքննիչ դատարանը վկայակոչել է նաև ՄԱԿ–ի կանոնադրությունը, որը հռչակել է իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, որում ասվում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել իր պատվին և գործարար համբավին ուղղված կամայական ոտնձգությունների:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի համար նշանակություն ունեցող և ընդհանուր իրավասության դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա հաստատված փաստերի վերլուծության արդյունքում ընդհանուր իրավասության դատարանը վեճի վերաբերյալ եկել է իրավացի եզրահանգման: Ուստի Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել բողոքում նշված դատական սխալների վերաբերյալ փաստարկները: Հետևաբար վերաքննիչ բողոքը մերժվել է:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումները՝ վճռաբեկ բողոք քննության ընդունելու մասին, գտել է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «դատաքննությամբ հիմնավորվել է, որ Պատասխանող ընկերությունը հրապարակել է բացառապես քրեական գործի նյութերում և դատարանի դատավճռում շարադրված տեղեկություններ և հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՄԻԵԴ–ը «Մելտեքս» ՍՊԸ–ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04) գործով 17.06.2008թ. վճռով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ, արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ»:

Վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել Գևորգ Հայրապետյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

Ներպետական դատարանները չեն կիրառել ՄԻԵԿ–ի 6–րդ և 13–րդ հոդվածներին վերաբերող ՄԻԵԴ–ի նախադեպերում սահմանված սկզբունքները:

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ար-

դարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Միննույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք»:

ՄԻԵԿ-ը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-ին մասում ամրագրված անմեղության կանխավարկածը դիտարկում է որպես ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատաքննության պայմաններից մեկը: Ըստ այդմ, ներպետական դատարանները պետք է բողոքը քննեն հոդվածի երկու մասերի փոխկապվածության տեսանկյունից՝ այն, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը նման բովանդակությամբ տեսանյութ հեռարձակելը խախտում է Հայցվորի արդար դատաքննության իրավունքը:

ՄԻԵԿ-ն արձանագրել է, որ լրատվամիջոցների կողմից ընթացիկ իրադարձությունների լուսաբանումը ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու դրսևորում է: Սակայն ներպետական դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Գևորգ Հայրապետյանի գործով քրեական դատավարությունն անցկացվել է դռնփակ, գործի նյութերը չեն հրապարակվել «պետական գաղտնիքի տարր» պարունակելու պատճառով: Նման պարագայում գեղարվեստական ձևավորմամբ կադրերի ցուցադրումը հաստատում է ամբաստանյալի մեղավորությունը, ինչն էլ իր հերթին հանդիսանում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում:

Բլադետ Թրոմսո և Ստենասս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն) գործում ՄԻԵԿ-ը հաստատել է հետևյալը.

«ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, այնուամենայնիվ, չի երաշխավորում կատարելապես անսահմանափակ արտահայտվելու ազատություն նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը գնում է մամուլի կողմից հանրության մտահոգության առարկա հանդիսացող լուրջ հարցերի լուսաբանման մասին: Նշված հոդվածի 2-րդ մասի պայմանների համաձայն՝ այս ազատության իրականացումը պայմանավորված է «պարտականություններով և պատասխանատվությամբ», որոնք վերաբերում են նաև մամուլին: Այս «պարտականությունները և պատասխանատվությունը» նշանակություն են ձեռք բերում, երբ խոսքը վերաբերում է մասնավոր անձանց հեղինակության նկատմամբ ոտնձգություններին և «այլ անձանց իրավունքների» խախտումներին: Եվ քանի որ «պարտականությունները և պատասխանատվությունն» արտահայտվելու ազատության իրականացման տարրերից են, համընդհանուր շահին վերաբերող հարցերը լուսաբանելիս 10-րդ հոդվածով լրագրողներին վերապահված երաշխիքը պարտադրում է, որ նրանք

գործեն բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն՝ պահպանելով լրագրողական էթիկայի կանոնները»:

ՄԻԵԴ-ն արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակման մեկ այլ «օրինական նպատակ» է սահմանում «դատական իշխանության հեղինակությունն ու անկողմնակալությունը»:

Այս առումով *Ուորմն ընդդեմ Ավստրիայի/Worm v. Austria*, 29/08/1997, դիմում թիվ 22714/93, 40-րդ պարբերություն) գործում ՄԻԵԴ-ը նշել է.

«Դատական իշխանության հեղինակություն» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, այն, որ դատարաններն են հանդիսանում իրավունքների և պարտականությունների ճանաչման և դրանց վերաբերյալ վեճերի լուծման պատշաճ ատյանը և որպես այդպիսին՝ ընկալվում են հանրության կողմից: Ի լրումն սրա՝ լայն հանրությունը պետք է ունենա հարգանք և վստահություն այդ գործառույթն իրականացնելու՝ դատարանի կարողության նկատմամբ: «Անկողմնակալությունը», որպես կանոն, նշանակում է նախապաշարմունքի կամ կողմնակալության բացակայություն: Այնուհանդերձ, ... դատարանի անկողմնակալությունը պաշտպանելու հարցում խնդիրն այն վստահությունն է, որ դատարանները պետք է ներշնչեն քրեական գործով մեղադրյալներին, ինչպես նաև լայն հանրությանը»:

ՄԻԵԴ-ի կողմից հաստատված սույն սկզբունքից պարզ է դառնում, որ Գևորգ Հայրապետյանը չէր կարող ունենալ վստահություն դատարանի նկատմամբ՝ իր իրավունքների և պարտականությունների ճանաչման գործառույթն իրականացնելու հարցում, եթե մինչև գործով վճռի ուժի մեջ մտնելը լիարժեքորեն չէր կարող օգտվել գործով վճիռը բողոքարկելու ընթացքում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքից:

Ջերսիլդն ընդդեմ Դանիայի/Jersild v Denmark, 23/09/1994, դիմում թիվ 15890/89, 31-րդ պարբերություն) գործում ՄԻԵԴ-ը նշել է.

«Հաշվի առնելով լրագրողի «պարտականություններն ու պատասխանատվությունը», լրատվամիջոցի հավանական ազդեցությունը կարևոր գործոն է: Ընդունված փաստ է, որ հեռարձակող լրատվամիջոցները հաճախ ունեն ավելի անմիջական և հզոր ազդեցություն քան տպագիր լրատվամիջոցները: Հեռարձակող լրատվամիջոցները պատկերների միջոցով հնարավորություն ունեն հաղորդելու այնպիսի մտքեր, որոնք չեն կարող անել տպագիր լրատվամիջոցները»:

Ներպետական դատարանները չեն անդրադարձել անձնական կյանքի պաշտպանության հարցին:

ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը, ապահովվեն իր բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության գաղտնիությունը:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտություն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, կարգուկանոնի պահպանման և հանցագործությունների կանխման համար, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության պահպանման կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատասիրությունների պաշտպանության նպատակով»:

Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany, 07/02/2012, դիմում թիվ 40660/08, 98–99–րդ պարբերություններ) գործում, երբ դիմումատուն փորձել է կանխարգելել իր և իր ընտանիքի լուսանկարների հրապարակումը Եվրոպական մի շարք պետությունների թերթերում, ՄԻԵԴ–ն արձանագրել է հետևյալը.

«Դատարանը կրկնում է, որ չնայած 8–րդ հոդվածի հիմնական նպատակը մարդուն հանրային մարմինների կամայական միջամտություններից պաշտպանության ապահովումն է, այն չի սահմանափակվում միայն այդպիսի միջամտությունից ձեռնպահ մնալով: Ի լրումն այս նեգատիվ պարտավորության՝ պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն անձնական և ընտանեկան կյանքի արդյունավետ պաշտպանության համար: Սակայն այս հոդվածով սահմանված պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների սահմանը հստակ ուրվագծված չէ: Այնուամենայնիվ, կիրառվող սկզբունքները նման են: Երկու դեպքում էլ պետք է հավասարակշռվեն միմյանց հետ մրցակցող իրավունքները՝ մի կողմից մարդու, իսկ մյուս կողմից հանրային շահը: Երկու դեպքում էլ պետությունն ունի որոշակի հայեցողության լուսանցք»:

Այն դեպքերում, երբ դատարանը պետք է հավասարակշռի մարդու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը արտահայտվելու ազատության հետ, նա միշտ ընդգծել է հանրային շահի համատեքստում թերթերում բանավեճ խթանելու տեսանկյունից նկարների և հոդվածների ունեցած ներդրումը:

Այսպիսով ներպետական դատարաններն ուշադրություն չարժանացնելով ՄԻԵԴ–ի 8–րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքի պաշտպանության հարցին, անտեսել են նաև այն հարցը, որ Գևորգ Հայրապետյանի մասին նման տեղեկատվության տարածումը չի նպաստել հանրային բանավեճին, այլ սոսկ նպատակ է ունեցել ազդել լսարանի վրա:

Այսպիսով, ներպետական դատարանների որոշումների վերլուծությունը պարզում է, որ սույն գործում դատարանները չեն կիրառել ՄԻԵԴ–ի դատական նախադեպերով վերահաստատված և ոչ մի սկզբունք:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2011 Թ.
ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ ՍԴՈ-997 ՈՐՈՇՈՒՄԸ**

2011թ. նոյեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրեց թիվ ՍԴՈ-997 որոշումը՝ ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականության հարցը որոշելու մասին 2011թ. հոկտեմբերի 13-ի դիմումի: Որոշումը 37 էջից կազմված մի փաստաթուղթ է, որը մի քանի դրական հստակեցումներից զատ, պարունակում է մի շարք անորոշ սահմանումներ ու ձևակերպումներ, որոնք հաշվի առնվելու դեպքում, էլ ավելի մեծ շփոթ են առաջացնելու առանց այն էլ այս ոլորտի մասին մեղմ ասած սահմանափակ պատկերացում ունեցող դատական պրակտիկայում:

Դրական հստակեցումների շարքում կարելի է առանձնացնել.

1. Այն դիրքորոշումը, որի համաձայն՝ ՀՀ դատարանները պետք է ընդունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած հասարակական ու քաղաքական գործիչների քննադատության առավել լայն սահմանների մասին սկզբունքը (ՍԴՈ-997, 25-րդ էջ),
2. Այն սկզբունքային մոտեցումը, որի համաձայն՝ «անձ» արտահայտությունը չի վերաբերում իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,
3. «Անվանարկում» եզրի ներմուծումը:

Անորոշություններից արժի հատկապես նշել հետևյալը.

1. Անվանարկման իրավունքի (defamation law) ոլորտում կա երկու մոտեցում՝ բրիտանական և մայրցամաքային իրավունքի մոտեցումները: Առաջինի համաձայն՝ գոյություն ունի միայն անվանարկում եզրը (defamation), որը կարող է ունենալ բանավոր (slander) և գրավոր (libel) ձևերը: Անվանարկել, այն է՝ անունը զցել, վարկաբեկել, կարելի է ինչպես տեղեկություններ՝ փաստեր կամ փաստական տվյալներ, այնպես էլ՝ գաղափարներ՝ կարծիք կամ գնահատողական դատողություններ արտահայտելու միջոցով: Առաջինի դեպքում որպես պաշտպանություն անվանարկած անձը, որը քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս Պատասխանողի կարգավիճակով, վկայակոչում է ճշմարտության/հիմնավորման պաշտպանությունը (defence of justification) կամ հանրային շահի պաշտպանությունը (defence of public interest), իսկ երկրորդ դեպքում՝ հանրային շահին վերաբերող հարցի շուրջ ազնիվ կարծիքի արտահայտման պաշտպանու-

թյունը (defence of a fair comment on a matter of public interest): Մայրցամաքային իրավունքի երկրներում գոյություն ունեն երկու հասկացություններ՝ զրպարտություն (defamation)՝ արատավորող տեղեկություններ կամ փաստեր կամ փաստական տվյալներ և վիրավորանք (insult)՝ արատավորող գաղափարներ կամ կարծիք կամ գնահատողական դատողություն հրապարակելը: Այս երկու մոտեցումները հստակ չպատկերացնելու և չտարանջատելու հետևանքով ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ գտնում ենք հետևյալ սահմանումները, որոնք բերելիս Սահմանադրական դատարանը հղում է անում ԵԱՀԿ-ի 2005թ. սահմանած արտահայտություններին՝ «անվանարկում (defamation), զրավոր արտահայտություն, որը վնասում է անձին (libel), ինչպես նաև հայտարարություն կամ գործողություն, որն ասվել կամ արվել է այլ անձի վիրավորելու նպատակով (insult)»:

2. Այս երկու իրավախախտումների առկայությունը դիտավորությամբ պայմանավորելու մասին՝ Սահմանադրական դատարանի որոշման ձևակերպումները նույնպես համապարփակ պատկերացման վկայություն չի կարելի համարել: Ըստ երևույթին այն, ինչ Սահմանադրական դատարանը նկատի ունի «դիտավորության» տակ, նույն բրիտանական անվանարկման իրավունքի չարամտություն (malice) հասկացությունն է, որն ունի երկու տարատեսակ. իրավական չարամտություն (legal malice), որը ենթադրում է, որ տեղեկությունները կամ գաղափարները հրապարակվել են անազնվորեն (dishonesty) կամ չմտածված կերպով ճշմարտությունն անտեսելով (reckless disregard for truth) և իրական չարամտություն (actual malice), որը ենթադրում է չարացածություն կամ անձնական շահ: Այսպիսով՝ չարամտություն հասկացությունն՝ իրավական իմաստով, ենթադրում է ոչ միայն դիտավորության, այլև անզգուշության տարրեր: Ամեն դեպքում չարամտությունն ապացուցելու բեռը կրում է հայցվորը: Մնում է հասկանալ, թե դիտավորություն ասելով իրականում ինչ է նկատի ունեցել ՀՀ սահմանադրական դատարանը և թե ինչպես է նա հաշտեցրել իր այս մոտեցումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի այն ընդհանուր կանոնի հետ, որի համաձայն՝ այս տիպի գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:
3. Սահմանադրական դատարանի համար վիրավորանք չի համարվում գնահատողական դատողությունը, քանի որ «գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլև պարտականությունն է»: Իսկ թե ինչու փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում, լրագրողը չի կարող արտահայտել անազնիվ գնահատողական դատողություն, այս հարցին Սահմանադրական դատարանը չի պատասխանում թերևս այն պատճառով, որ իր որոշմամբ անհասկանալի տարանջատում է կատարում կարծիքի ու գնահատողական դատողությունների միջև այն դեպքում, երբ սրանք, ըստ էության, նույն բանն են:

4. Սահմանադրական դատարանի որոշման մեջ սխալ են թարգմանված նաև ոլորտի մի շարք կարևոր եզրեր: Այսպես՝ արտահայտվելու ազատության իրավունքի ոլորտում ՄԻԵԴ-ի կարևորագույն նախադեպի՝ *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն)* ձևակերպումը Սահմանադրական դատարանի որոշման մեջ թարգմանաբար ձևակերպված է հետևյալ կերպ. «Արտահայտվելու ազատությունը...կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ կամ չեզոք, այլ նաև նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն պատճառում»: Մի կողմ թողնելով այն փաստը, որ որոշման մեջ որևէ հղում չկա հենց այս վճռին, որով առաջին անգամ սահմանվել է այս կարևոր սկզբունքը ու նաև այն փաստը, որ այս վերջին երեք բառերն ամբողջ որոշման մեջ նույնիսկ հետևողական կիրառություն չեն գտնում՝ հայտնվելով միանգամայն տարբեր համակցություններում, ինչը ևս անթույլատրելի է իրավական տեքստի համար, հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ի օգտագործած եզրերն են «offend, shock or disturb», և առաջինը ոչ մի կերպ չի կարող թարգմանվել որպես «վիրավորել» (insult), այլ լավագույն դեպքում՝ «վրդովեցնել», քանի որ հիշյալ եզրերի տարբերությունը անվանարկման ուժգնության կամ աստիճանի մեջ է:
5. Մեկ այլ լուրջ սխալ, որ առկա է Սահմանադրական դատարանի որոշման մեջ, ոչ նյութական վնասի փոխհատուցում (compensation for non-pecuniary damage) հասկացության մասին թյուր պատկերացումն է: Վերցնելով ոչ նյութական վնասի փոխհատուցում արտահայտությունը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից («Փաստերի քննադատական գնահատականը...չի կարող բարոյական վնասի փոխհատուցման պահանջի բավարարման հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ արատավորող հայտարարությունը գնահատողական դատողություն է, դատարանը կարող է սահմանել ոչ նյութական վնասի հատուցում» (*Ուկրաինական Մեդիա Գրուպն ընդդեմ Ուկրաինայի/ Ukrainian Media Group v. Ukraine, 29/03/2005, դիմում թիվ 72713/01, 61-րդ պարբերություն*), ՄԴՈ-997 որոշում, 33-րդ էջ)՝ Սահմանադրական դատարանը հստակորեն չի պատկերացնում դրա բովանդակությունը: Այդ մասին է վկայում որոշման 29-րդ էջի վերջին պարբերության վերջին նախադասությունը, որով Սահմանադրական դատարանն առանձնապես կարևորում է այն հանգամանքը, որ «վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման նյութական ձևի, նախատեսում են նաև փոխհատուցման ոչ նյութական ձևեր»: Այս եզրահանգումն ամրապնդվում է նաև որոշման 35-րդ էջի 5-րդ կետի ձևակերպումն ընթերցելիս. «արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևեր...»: Մինչդեռ ըստ ՄԻԵԴ-ի՝ ոչ նյութական փոխհատուցումը դարձյալ նույն դրամական փոխհատուցումն է, որը հատկացվում

է իրավախախտման հետևանքով անձի կրած ցավը, տառապանքը, վիշտը, իսկ մեր դեպքում՝ հեղինակության կորուստը, փոխհատուցելու նպատակով: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը նախատեսում են ոչ նյութական վնասի փոխհատուցում մինչև սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի և 2000-ապատիկի չափով, համապատասխանաբար: Մնացածը խախտված իրավունքի պաշտպանության եղանակներ են, այլ ոչ թե՛ ոչ նյութական փոխհատուցում:

Եվ վերջապես ՍԴ-ն չի պատասխանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականության մասին հարցադրումներին: Առնվազն երկու կետում այս հարցադրումները հստակ պատասխան էին պահանջում, որոնք Սահմանադրական դատարանն այդպես էլ չտվեց: Մեկն այն էր, թե արդյոք վիրավորանքը միայն հրապարակային լինելու փաստով վիրավորանք համարելը չի հակասում ՀՀ Սահմանադրության խտրականության արգելքի մասին դրույթին, ինչին Սահմանադրական դատարանը տվեց հետևյալ պատասխանը. «վիճարկվող հոդվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը: Այդուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դա ոչ թե օրենսգրքի տվյալ հոդվածի, այլ ընդհանուր իրավակարգավորման բաց է, և այն հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը»: Հարց է առաջանում. իսկ ի՞նչ է կարգավորում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը՝ ընդհանրապես, և տվյալ հոդվածը՝ մասնավորապես, եթե ոչ՝ մասնավոր-իրավական բնույթի հարաբերություններ: Հանրային:

Երկրորդ, այն հարցադրմանը, թե արդյոք 1087.1-րդ հոդվածում ամրագրված փոխհատուցման առավելագույն շեմը չի հակասում համաչափության սահմանադրական սկզբունքին, Սահմանադրական դատարանը նույնպես չկարողացավ տալ սպառիչ պատասխան՝ բավարարվելով ՀՀ ազգային ժողովին խորհուրդ տալով վերանայել այդ շեմը, որպեսզի այն արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումների տեղ չթողնի: Եթե Սահմանադրական դատարանը համաչափության խնդիր է տեսնում, ուրեմն դրույթը հակասում է համաչափության սահմանադրական սկզբունքին և, ըստ այդմ, հակասահմանադրական է: Ազգային ժողովին ուղերձ հղելն արդեն երկրորդական հարց է: Իսկ եթե նման խնդիր չի տեսնում, ապա ինչու՞ պետք է իջեցվի փոխհատուցման առավելագույն շեմը:

«ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼՁ» ՓԲԸ-Ն ԸՆԴԴԵՄ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ
(հրատարակիչ՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ)

Գործի հանգամանքները

Այս գործով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Հայցվոր) իրականացրել է սույն գործով խնդրո առարկա հանդիսացող շինարարությունը պետական միջոցների հաշվին՝ միաժամանակ նաև հանդիսանալով կառավարության հետ կնքված բազմաթիվ գործարքներով հանրային գործառույթներ իրականացնող կազմակերպություն:

Սույն գործով պատասխանող է հանդիսանում «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Պատասխանող), որը թողարկում է «Ժամանակ» օրաթերթը:

Պատասխանողի կողմից հրապարակվող զանգվածային լրատվության միջոցի «Ժամանակ» օրաթերթի 26.08.2010թ. թիվ 136 համարում տպագրվել է «\$1000 լուծյան դիմաց» խորագրով հոդվածը հետևյալ բովանդակությամբ.

«Լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ, որ «Գլենդել Հիլզ» կազմակերպության Գյումրիի ներկայացուցիչները Գյումրիում իրենց կառուցած Մուշ-2 թաղամասի շենքերից մեկի ինքնափլուզումից հետո փորձել են ամեն գնով համոզել բնակիչներին, որպեսզի նրանք կատարվածի մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին: Մեր աղբյուրը, որ չցանկացավ ներկայանալ, տեղեկացրեց թե՛ բնակիչներին «Գլենդել Հիլզ» առձեռն առաջարկել է 1000 դոլար գումար, ինչպես նաև խոստացել արագ վերանորոգել բնակարանը, միայն թե այդ թեման չհայտնվի ՋԼՄ-ներում, իսկ հակառակ դեպքում սպառնացել, որ չի վերանորոգի բնակարանը: Տուժած բնակիչները, սակայն, հրաժարվել են «Գլենդել Հիլզի» հետ ստվերային գործարքից»:

Նույն լրատվամիջոցի 01.09.2010թ. թիվ 140 համարում տպագրվել է «Դեռ համարձակվում են խոսել» խորագրով հոդվածը՝ հետևյալ բովանդակությամբ.

«...պարզվում է՝ նրանց մոտ սանձարձակությունը սահման չունի, վերջերս նրանք համարձակվել են մառազմատիկ ցնդաբանության կամ հոգեկան հիվանդի բարբաջանքին նմանվող տեքստ ուղարկել մեր թերթի խմբագրություն և պահանջել, որ հերքման անվան տակ տպենք այն: Մենք, իհարկե, տպում ենք այդ տեքստը: Բայց ոչ թե այն պատճառով, որ պարտավոր ենք դա անել, այլ որպեսզի մեր ընթերցողներին, գյումրեցիներին, ցույց տանք այս ընկերության իրական դեմքը»:

Հայցվորը սույն գործի շրջանակներում կատարել էր 500.000 ՀՀ դրամի փաստաբանական ծախսեր, իսկ Պատասխանողի համախառն եկամուտը 2010թ կազմել է 9.934.500 ՀՀ դրամ, որից 7.450.000 ՀՀ դրամը կազմել է համախառն եկամուտից նվազեցումները: Հաշվետու տարվա հարկվող շահույթը կազմել է 1.895.000 ՀՀ դրամ:

Հայցվորը, դիմելով Դատարան, խնդրել էր պարտավորեցնել Պատասխանողին հերքել «Ժամանակ» օրաթերթում հրապարակված հոդվածում Հայցվորի գործարար համբավն արատավորող տեղեկությունները և Պատասխանողից հոգուտ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում, ինչպես նաև 500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար:

30.01.2012թ. Դատարանը հայցը բավարարել էր մասնակի և պարտավորեցրել «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ին հերքելու «Ժամանակ» օրաթերթի 2010թ. օգոստոսի 26-ի թիվ 136 համարում հրապարակված «\$1000 լուրջան դիմաց» խորագրով հոդվածում Հայցվոր «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի գործարար համբավն արատավորող տեղեկությունները, ինչպես նաև Հայցվորից հոգուտ Պատասխանողի բռնագանձել 2.000.000 դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար: Պատասխանողից բռնագանձվել էր նաև 300.000 դրամ՝ որպես փաստաբանական ծախս և 10.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Մնացած մասով հայցը մերժվել էր:

Սույն վճիռը բողոքարկվել էր ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որը, սակայն այն թողել էր անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել էր վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ բերված բողոքը:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Սույն վերլուծության մեջ, ստորև, անդրադարձ է կատարվել արտահայտվելու ազատության այն հիմնարար սկզբունքներին, որոնք չեն արժանացել սույն գործը քննած դատարանների ուշադրությանը՝ ուղղակիորեն հանգեցնելով Պատասխանող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության անհամաչափ սահմանափակման:

Հայցվորի անձը և կարգավիճակը

Սույն գործով Հայցվորը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին լայնածավալ շինարարություն իրականացնող ընկերություն էր, որը, թեկուզև առևտրային և մասնավոր անձ էր, այնուամենայնիվ գործունեություն էր իրականացնում հանրային ուշադրության կենտրոնում գտնվող մի այնպիսի ոլորտում՝ աղետի գոտու տարածքի շինարարական վերականգնման աշխատանքներում: Բացի այդ, պետք էր նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Հայցվոր կազմակերպությունը հանդիսանում էր մի շարք լայնածավալ շինարարական աշխատանքների կատարող, որոնք հանձնա-

րարված էին իրեն պետական միջոցների հաշվին, որոնք իրականացնելիս այս կազմակերպությունն ուղղակիորեն իրականացնում էր հանրային իշխանության մի շարք գործառույթներ նաև Հանրապետության այլ տարածքներում. մասնավորապես՝ Երևանի կենտրոնի կառուցապատման ծրագրերում բանակցություններ բնակիչների և գույքի սեփականատերերի հետ գերակա հանրային շահի ճանաչման պայմաններում այդ գույքի հարկադիր օտարման հարաբերություններում, պետության անունից սեփականատերերի և այլ իրավատերերի դեմ դատարան դիմել և իրականացնել պետության դատական ներկայացուցչությունն այդ ոլորտում և այլն: Այս հանգամանքն առհասարակ անտեսվել էր թե դատավարության կողմերի, թե հենց Դատարանի կողմից, այնինչ էական տարբերություն կա նման գործառույթներ իրականացնող կազմակերպության և հասարակ առևտրային գործունեություն իրականացնող անձին առաջադրվող՝ իր հասցեին ուղղված քննադատության նկատմամբ հանդուրժողականության պահանջի աստիճանների մեջ: Բնականաբար տվյալ դեպքում Հայցվորի կարգավիճակն ունեցող կազմակերպությունն առավել հանդուրժողականությամբ պետք է ընդուներ իր գործունեությանն ուղղված քննադատությունը՝ ներառյալ դրա չափազանցված լինելու դեպքերում:

Մինչդեռ Դատարանի կողմից այս հանգամանքին հպանցիկ անդրադարձն ուղղակիորեն կիրառվել է հակառակ նպատակով: Ինչպես նկարագրված է սույն վերլուծության մեջ՝ միջամտության համաչափության հատվածում, Հայցվորի կարգավիճակն ընդհանուր իրավասության Դատարանի կողմից վկայակոչվել է որպես նման փոխհատուցման նշանակման հիմնավորում:

Այսինքն, Հայցվորների անձի և կարգավիճակի վերլուծության մասում դատարանները, ձևականորեն հղում տալով ՄԻԵԴ բազմաթիվ վճիռների, իրականում դրանցում նշված չափորոշիչները կիրառել են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի նպատակներին հակառակ նպատակով:

Պատասխանողի անձը և կարգավիճակը

Նմանապես, դատարանների կողմից անտեսվել էր նաև Պատասխանողի կարգավիճակը: Մասնավորապես, այն հանգամանքը, որ Պատասխանողը լրատվամիջոց էր, որևէ էական գնահատականի չէր արժանացել դատարանների կողմից: Մինչդեռ ՄԻԵԿ-ի 10 հոդվածի շրջանակներում դեռ վաղ նախադեպային վճիռներում (տես, մասնավորապես՝ *Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ/ Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 50 (բ) պարբերություն) ՄԻԵԴ-ը նախանշել էր, որ.

«լրատվամիջոցների դերը պետք է լիներ հանրության համար մշտահսկող լինելը ... նրա առաքելությունն է տարածել տեղեկություններ և գաղափարներ քաղաքական անցողարձի և կյանքի, ինչպես նաև հանրային շահին առնչվող այլ թեմաների վերաբերյալ: Բացի այն, որ լրատվամիջոցներն ունեն այսպիսի տեղեկությունների և գաղափարների տարածման խնդիր, հանրությունն իր հերթին ունի այդ տեղեկությունները և գաղափարներն ստանալու իրավունք»:

Պատասխանողի կարգավիճակը հատկապես կարևոր է սույն գործի շրջանակներում նաև ՄԻԵԴ-ի մեկ այլ՝ սույն գործի հանգամանքներին ուղղակիորեն վերաբերելի այն մոտեցման լույսով (տես օրինակ՝ *Պրագերն և Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/84, 38-րդ պարբերություն), որ.

«Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցություն և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն»:

Կրկին, ինչպես և Հայցվորի կարգավիճակի հարցում, դատարանները ոչ միայն հաշվի չեն առել Պատասխանողի լրատվամիջոց լինելու հանգամանքը, այլ այն օգտագործել են հենց պատասխանատվության խստացման իմաստով՝ հղում կատարել տեղեկատվության տարածման եղանակի՝ տպագիր մամուլով տարածելու վրա: Այսինքն, ինչպես և Հայցվորի կարգավիճակի դեպքում, Պատասխանողի կարգավիճակին առնչվող մոտեցումները դատարանի կողմից օգտագործվել են ՄԻԵԿ-ի 10 հոդվածի պահանջներին և նպատակներին ուղիղ հակառակ:

Արտահայտությունների հանրային շահի առարկա լինելու հանգամանքը

Խնդրո առարկա արտահայտությունների կատարման համար առկա հանրային գերակա շահի հարցը նույնպես քննության առարկա չի դարձվել դատարանների կողմից: Մինչդեռ, համաձայն թե միջազգային իրավունքի նորմերի (ՄԻԵԿ-ի 10-րդ հոդված), թե ներպետական իրավունքի նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 1087.1-րդ հոդվածի 5-րդ մաս)՝ արատավորող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը կարող էր սահմանափակվել նաև այն դեպքերում, երբ նման տեղեկությունների հրապարակումը սովյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է եղել հանրային գերակա շահով, և դրանք հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցում է, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է համապատասխան միջոցներ պարզելու համար դրանց ձշմարտությունը և հիմնավորվածությունը: Սույն գործով Պատասխանողի կողմից դատարանին ներկայացվել էին տեղեկություններ առ այն, որ եթե ոչ ամբողջությամբ, ապա մասնակիորեն տեղի էր ունեցել բնակելի շինության մի հատվածի ինքնափլուզում, ինչն օգտագործվելով հանրային գերակա շահին առնչվող տեղեկությունների տրամադրման մեջ Պատասխանող լրատվամիջոցի կողմից չափազանցեցված ներկայացվել էր որպես շենքի ինքնափլուզում:

Այլ խոսքով, նման պաշտպանական կառուցակարգի անտեսումը հանգեցրել է մի իրավիճակի, երբ մի կողմից Դատարանն ի վիճակի չի եղել միջամտության անհրաժեշտության և համաչափության հարցերին հիմնավորանդրադարձ կատարելու: Այստեղ հարկ է նկատել նաև, որ նման անդրադարձի անհնարինությունը որոշակիորեն պայմանավորված է եղել նաև Պատասխանողի կողմից նման կառուցակարգերը հիմնավորապես և հստակ կերպով դատարաններին չառաջադրելու հանգամանքով:

Միջամտության համաչափության սկզբունքի կիրառումը

Սույն գործով ընդհանուր իրավասության Դատարանի մոտեցումը միջամտության համաչափությանն ուշադրության է արժանի հատկապես այդ մոտեցման համար ոչ վերաբերելի չափանիշի՝ մարդասիրության սկզբունքի անտեղի վկայակոչմամբ և կիրառմամբ: Դատարանն այս մասով նշել է վճռի պատճառաբանական մասում.

«Վերը նշված հողվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, հետապնդելով օրինաչափ նպատակ, հնարավորություն է ընձեռել այն քաղաքացիաիրավական սուբյեկտին, ում գործարար համբավն արատավորվել է գրպարտության միջոցով, որպես փոխհատուցում, գրպարտողից պահանջել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000–ապատիկի չափով փոխհատուցում, սահմանելով չափանիշներ /գրպարտողի գույքային դրություն/, որոնցով պետք է ուղղորդվի դատարանն արդարադատություն իրականացնելիս, այսինքն՝ օրենսդիրը, ելնելով մարդասիրության սկզբունքից, դատարանին իրավագործել է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխհատուցման չափն ինքնուրույն որոշելու լայն հնարավորությամբ»:

Հարկ է նաև նկատել, որ սույն գործով լրատվամիջոցի արտահայտվելու ազատությանը միջամտության հարցին անդրադառնալիս դատարանների կողմից դրսևորվել է ծայրահեղ ֆորմալիստական մոտեցում՝ որպես փոխհատուցում նշանակելու հիմք ընդունելով միայն Հայցվորի գործարար համբավն արատավորելու փաստը: Դատարանն այս մասով նշել է.

«Սույն դեպքում դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ Պատասխանողն արատավորել է Հայցվորի գործարար համբավը գրպարտության միջոցով, գտնում է, որ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերությունից պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում՝ հաշվի առնելով գրպարտության եղանակը, տարածման շրջանակը, ինչպես նաև «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության գույքային դրությունը»:

Մինչդեռ, Դատարանը պարտավոր էր անդրադարձ կատարել Պատասխանող լրավամիջոցի գույքային դրությանը: Այսպես, այն իրավիճակում երբ Պատասխանող լրատվամիջոցի տարեկան զուտ շահույթը կազմում էր ընդհամենը 1.895.000 դրամ, 200.000 դրամ գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցում նշանակելը՝ 300.000 դրամ փաստաբանական ծախսի և 10.000 պետական տուրքի գումարի նշանակման պայմաններում հանգեցրել էր մի իրավիճակի, երբ Պատասխանող լրատվամիջոցի վրա դրվել էր փոխհատուցման մի բեռ, որն ավելին էր, քան այդ լրատվամիջոցի երեք ամսվա զուտ շահույթը, կամ ավելին քան դրա տարեկան զուտ շահույթի քառորդը:

Հետևաբար և ներպետական դատարանների կողմից Պատասխանող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության սահմանափակումը չէր կարող որևէ կերպ դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ հանգեցնելով Սահմանադրության 27–րդ և ՄԻԵԿ–ի 10–րդ հողվածների խախտումների:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ
«ՀՐԱՊԱՐԱԿ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ-Ի

Գործի հանգամանքները

2011թ. հունվար ամսին հրապարակվել է երկու քաղաքացիների բաց նամակն՝ ուղղված արդարադատության նախարարին, որում, ըստ փաստաբան Արթուր Գրիգորյանի (այսուհետ՝ Հայցվոր), տեղ են գտել իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկություններ: Այսուհետև, 10.08.2011թ. «Հրապարակ օրաթերթի» ինտերնետային կայքում (www.hraparak.am) (այսուհետ՝ Պատասխանող) տեղադրվել է հոդված՝ «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների զոհ» վերնագրով, որով անդրադարձ է կատարվել վերոհիշյալ բաց նամակին և դրան հետևած իրադարձություններին: Կայքն ունի ընթերցողների, այդ թվում՝ կեղծանունով հանդես եկող, կողմից մեկնաբանություններ թողնելու հնարավորություն:

23.09.2011. Հայցվորը տեղեկացել է, որ նշված հոդվածի վերաբերյալ կայքում անհայտ անձինք թողել են թվով 6 մեկնաբանություններ, որոնք պարունակել են վիրավորանք և զրպարտություն իր հասցեին: Դրանք են.

«Արտակ

Հետաքրքիր է որ էս փաստաբանիկը արդար դատաքննություն է ակնկալում իր համար հետաքրքիր է վճարել է արդեն «արդար» դատաքննության համար «ժողովուրդ շատ շատերն են սրա քաշվածը ու մի օր ամեն ինչը ջրի երես էր ելնելու»

Անահիտ

Ցավ եմ ապրում հենց մենակ նրա համար որ նման... էլ են փաստաբան համարվում... ինքս լինելով փաստաբան պետք է նախ և առաջ ասեմ որ նա պարտավոր էր տեղյակ պահել իրեն դիմած քաղաքացիներին, որ Եվրոպական դատարան գործերը ընդունվում են հայերենով և անգլերենի իմացության կարիք չկա: Իսկ սա իհարկե չի ասել, բացի այդ նա շատ հանգիստ կարող էր ձշտել թե ինչ ընթացքում է գործը, որը իմ համոզմամբ նա արել է, բայց թաքցրել է իր պաշտպանյալներից... ստորագույն արարք, եթե ինքը ազահ չլիներ գումարը պետք է վերադարձներ, իսկ ինչ վերաբերվում է սեմինար պարապմունք և նման ողորմելի ստերին, ավելի լավ է նման ցնդաբանությունների փոխարեն ներողություն խնդրի իր բոլոր վերևում կարծիքներ գրած նախկին պաշտպանյալներից, գումարները վերադարձնի ու հրապարակավ ուտի իր փաստաբանական արտոնագիրը:

Իսկուհի

Ես ուղղակի զարմանում եմ, թե մարդիկ ոնց են վստահում նման...ներին, մենակ իր արտաքին տեսքը բավարար է, որ դրան գործ չվստահես: Անգլերենի իմացության կեղծ իմիջ են ստեղծում իրենց համար ու ժողովրդին խափում: Հայաստանի ԻԲԲ հաջողակ փաստաբանների 99 տոկոսը համագործակցում են ու պակաս... ու կաշառակեր Դատավորների հետ ոչ մի վճիռ առանց կաշառքի չի կայացվում ու բոլորը գիտեն դրա մասին և ժողովուրդը և իշխանությունը: Հարգելի փաստաբաններն էլ մինչև գործին ծանոթանալը պարզում են, թե այդ գործի համար մարդիկ ինչքան են պատրաստվում վճարել, հետո նոր գնում են դատավորի հետ «Խոսալու» եթե մեկը կա ում դատական հարցը այս տարբերակով չի լուծվել թող բարձրաձայնի որ գրանցենք կարմիր գրքում:

Գարիկ

Էս անդուր պաստաբան կոչեցյալը ոչ այլ ինչ է, եթե ոչ ստահակ ու ստախոս: Մեր գործով նույն սցենարով սկզբից պայմանագիր կնքեց 150000–ի հետո վերջում 600000–ի հասցրեց ու ընդամենը փորձեց հարցը դատավորի հետ միջնորդությամբ լուծել.այսինքն՝ ասեց փող տվեք դատավորի հետ պայմանավորվել եմ, բա էդ դեպքում ինչու էինք իրան էդքան փող տալիս, որ մի հատ էլ դատավորի հետ պայմանավորվում էր... Հետո ասում են կոռուպցիան դատարաններում որտեղից ա սկսվում, այ սենց արդկային նկարագիր չունեցող վիժվախք փաստաբաններից:

Սահակ

Արթուր Գրիգորյանի պատճառով հյուսիսային պողոտայում կորցրեցինք բողոքարկելու իրավունքը զուտ բողոքը ուշացնելու պատճառով... Հետո պարզվեց էդ փողի դիմաստ արել, ինչքան ժամանակ փնտրում էի որ սատկացնեմ շան պես... բացի դրանից ինչ այլանդակ վարքագիծ ունի էդ արդեն փաստաբանների պալատը թող փորձի կարգավորել, նման փաստաբաններին սենց պաշտպանելով Սահակյան Ռուբիկը իրան ա վորակազրկում ու ընդհանրապես փաստաբանության ինստիտուտը:

Սերգեյ

Տեսնես իրան ասել են որ ստելը ու դրամաշորթումը լավ բան չեն ու փաստաբանի համար անհարիր բաներ են, էս դեպքը իսկական դրամաշորթում է... խաբեությամբ գումար շորթել... տենց են անում թուղթ ու գիր անողները, խաղաքարդ նայողները որ ստի դիմաց փող են վերցնում... լրիվ նույն հանցակազմն է Արթուր Գրիգորյանի մոտ»:

17.10.2011թ. Հայցվորը դիմել է Դատարան ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ–ի՝ խնդրելով վերջինից հօգուտ իրեն բռնագանձել 18.000.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի և զրպարտության հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նա պնդել է, որ Պատասխանողը պետք է առանձին պատասխանատվություն կրի յուրաքանչյուր մեկնաբանության համար՝ վճարելով դրանցից յուրաքանչյուրում պարունակվող վիրավորանքի համար 1.000.000, իսկ զրպարտության համար 2.000.000 ՀՀ դրամ: Դատարանը հայցադիմումն ընդունել է վարույթ, ինչպես նաև

կիրառել հայցի ապահովման միջոց, որով հայցագնի՝ 18.000.000 ՀՀ դրամ, չափով արգելանք է դրել Պատասխանողին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: 08.11.2011թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը փոխարինվել է և 18.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Պատասխանողին պատկանող գույքի վրա: Դատարանում Հայցվորը նշել է, որ գիտակցում է, որ 18.000.000 դրամի միանվագ վճարումը կարող է կանգնեցնել Պատասխանողին սնանկության եզրին, ինչը կարող է վնասել հենց իր պահանջի կատարմանը, ուստի փոփոխել է հայցի առարկան՝ պահանջելով, որ Պատասխանողը գումարը վճարի ոչ թե միանվագ, այլ մաս առ մաս՝ 250.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ամիս 6 տարվա ընթացքում:

Պատասխանողի դիրքորոշումը եղել է այն, որ ինտերնետը հանդիսանում է ժողովրդավարական հասարակարգում կարևորագույն իրավունքներից մեկի՝ խոսքի ազատության իրացման կարևորագույն գործիքներից, որի շրջանակներում անձինք գործնականում իրացնում են տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը, իսկ տարաբնույթ ֆորումները, սոցիալական ցանցերը և բլոգերը հանդիսանում են տեղեկատվական միջոցներ, որտեղ իրենց մեկնաբանությունները թողնելով՝ անձինք իրացնում են իրենց արտահայտվելու ազատության իրավունքը: Ամեն դեպքում հայտարարել են, որ խնդրո առարկա մեկնաբանությունները ջնջել են դատավարության ինչ-որ կետում՝ դրսևորելով բարի կամք և պատրաստակամություն՝ հարգելու Արթուր Գրիգորյանի պահանջը:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և հետազոտելով ներկայացված ապացույցները, գտել է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման: Թեև Դատարանը վճռի պատճառաբանական մասում անդրադարձել է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի չափորոշիչներին, այդուհանդերձ, ոչ լիարժեք, որոշ դեպքերում նույնիսկ սխալ հետևության հանգեցնող մեկնաբանությամբ է վերլուծել մի քանի էական կոնվենցիոն հիմնահարցեր, որոնք ուղղակի ազդեցություն են ունեցել սույն գործի վրա: Դրանք են հոդվածի հանրային նշանակության, Հայցվորի կարգավիճակի, Պատասխանողի կարգավիճակի, փաստական տվյալների և գնահատողական դատողությունների տարբերակման, ինտերնետի գործոնի, փոխհատուցման համաչափության հարցերը:

Թեմայի հանրային կարևորությունը

ՄԻԵԿ-ի վերահաստատած սկզբունքի համաձայն՝ մամուլը յուրահատուկ պաշտպանություն է վայելում, քանի որ մամուլը ոչ միայն իրավունք, այլև պարտավորություն ունի տեղեկություններ և գաղափարներ տարածելու հանրային շահին վերաբերող ցանկացած հարցի շուրջ, իսկ հանրությունն իրավունք ունի դրանք ստանալու (*Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ/Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 50 (բ) պարբերություն): Դատարանի նախադեպերով հանրային շահին առնչվող խնդիրների

թվին են պատկանում¹ հանրային առողջապահությունը (*Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի/ Hertel v Switzerland*, 25/08/1998, դիմում թիվ 25181/94, 47–րդ պարբերություն), հիվանդի անվտանգությունը (*Սելիստոն ընդդեմ Ֆինլանդիայի/Selisto v Finland*, 16/11/2004, դիմում թիվ 56767/00, 16–րդ պարբերություն), դատախազների ապօրինի գործողությունները (*Ռիզոսն ու Դասկասն ընդդեմ Հունաստանի/Rizos and Daskas v Greece*, 27/05/2004, դիմում թիվ 65545/01) քաղաքական գործիչների կամ տեղական պաշտոնյաների չարաշահումներ (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42–րդ պարբերություններ), հզոր առևտրային սուբյեկտների գործողությունները (*Սթիլը և Մորիսն ընդդեմ ՄԹ/Steel and Morris v United Kingdom*, 15/02/2005, դիմում թիվ 68416/01, 95–րդ պարբերություն): Այս տեսանկյունից կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ հեղինակավոր փաստաբանի կողմից հնարավոր չարաշահումների և անբարեխիղճ գործելակարգի թեման հանրային կարևորության խնդիր է և Դատարանը պետք է անպայմանորեն անդրադառնար այս խնդրին:

Հայցվորի կարգավիճակը

Տարիներ շարունակ ՄԻԵԴ–ի կողմից հաստատված սկզբունք է եղել քաղաքական և հասարակական գործիչների կողմից քննադատական խոսքի նկատմամբ առավել մեծ հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 42–րդ պարբերություն):

Ըստ ՄԻԵԴ–ի՝ քննադատական խոսքին առավել հանդուրժողաբար պետք է վերաբերվեն նաև հայտնի փաստաբանները: Այսպես, իր *Բոդրոժիչն ընդդեմ Սերբիայի (Bodrožić v. Serbia*, 23/06/2009, դիմում թիվ 38435/05, 34–րդ պարբերություն) գործով ՄԻԵԴ–ը սահմանել է.

«Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք Ս.Կ–ն կարող է դիտվել որպես հասարակական գործիչ, Դատարանը վերահաստատում է, որ մասնավոր անձը բացում է ինքն իրեն հանրության քննարկման համար, երբ մտնում է հանրային քննարկումների ասպարեզ: Տվյալ դեպքում կողմերը համաձայն են, որ Ս.Կ–ն, որը փաստաբան էր, ներկայացրել էր գործարանի ղեկավարությանը մեծ աղմուկ հանած մի սնանկության գործով և այդպիսով դարձել հանրահայտ անձ Կիկինդա քաղաքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդվածները հրապարակվել էին այդ քաղաքի տեղական թերթում՝ Դատարանն ընդունում է, որ ներպետական դատարանը ճիշտ է որակել նրան որպես հասարակական գործիչ: Ս.Կ–ն մուտք էր գործել հանրային քննարկումների ասպարեզ և, հետևաբար, նրան հասցեագրված որևէ քննադատության հարցում նրա հանդուրժողականության շեմը պետք է ավելի բարձր լիներ»:

Պատասխանողի կարգավիճակը

Ներպետական դատարանը չի քննարկել նաև Պատասխանողի կարգավիճակը: Մասնավորապես, այն հանգամանքը, որ Պատասխանողը լրատվամիջոց էր, որևէ էական գնահատականի չի արժանացել Դատարանի կողմից: Մինչդեռ ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի շրջանակներում դեռ վաղ նախադեպային վճիռներում (տես, մասնա-

¹ Գևին Միլլեր, «Արտահայտվելու ազատությունը. սեմինար, Երևան, 2011թ. նոյեմբեր», էջ 10:

վորապես՝ *Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ/Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 50 (ք) պարբերություն) ՄԻԵԴ–ը նախանշել էր, որ.

«...լրատվամիջոցների դերը հանրային հսկիչ լինելն է ... նրա առաքելությունն է տարածել տեղեկություններ և գաղափարներ հանրային շահին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ: Բացի այն, որ լրատվամիջոցներն ունեն այսպիսի տեղեկությունների և գաղափարների տարածման պարտականություն, հանրությունն իր հերթին ունի այդ տեղեկությունները և գաղափարներն ստանալու իրավունք»:

Փաստական տվյալներ և գնահատողական դատողություններ

ՄԻԵԴ–ը հետևողականորեն շեշտել է փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակման անհրաժեշտությունը: Ըստ Դատարանի.

«եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ձևարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10–րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է» (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/ Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46–րդ պարբերություն):

Հաշվի առնելով վիրավորանքի և զրպարտության տարբերակման կարևորությունը յուրաքանչյուր գործով՝ առաջին ատյանի Դատարանի վերլուծությունը պետք է կառուցվեր նաև գնահատողական դատողության և փաստական տվյալի միջև տարբերակման կատարման և դրանով պայմանավորված՝ ապացուցման պահանջվող աստիճանի շուրջ: Երբ արտահայտությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված է նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց (*Դիչանդը և այլոք ընդդեմ Ավստրիայի/ Dichand and Others v. Austria*, 26/02/2002, դիմում թիվ 29271/95, 41–րդ պարբերություն):

Մինչդեռ, ներպետական դատարանն ընդհանրապես հարկ չի համարել կատարել հիշյալ տարանջատումը, նշելով, որ.

«Դատարանը կարևորում է, որ սույն գործով ապացուցման ենթակա է, թե արդյոք «Հրապարակ օրաթերթ» ՍՊ ընկերությունը 10.08.2011թ.–ին իր հեղինակ Սոնա Հարությունյանի կողմից www.hrparak.am, «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների զոհ» վերտառությամբ տպագրված հոդվածի ներքո առկա «մեկնաբանություններ» հատվածում, այսինքն՝ հատուկ դրա համար ստեղծված դաշտում թողնված թվով 6 մեկնաբանությունների համար կարող է կրել պարտավորություններ, թե ո՞չ, ուստի չի անդրադառնում վերոգրյալ մեկնաբանություններում պարունակող բառերի համակարգային վերլուծության և չի փաստում, թե այդ բառերից կամ նախադասություններից որոնք են պարունակում վիրավորանք, զրպարտություն կամ արդյոք դրանցում առկա է վիրավորանքի և զրպարտության տարրերը»:

Ի նտերնետի գործոնը

Անհրաժեշտ էր նաև քննության առնել Ի նտերնետի գործոնը, ինչը Դատարանն

արել է որոշ չափով, սակայն՝ ոչ բավարար: Համաձայն խոսքի ազատության վերաբերյալ արդի միջազգային տեսական մտքի՝ Ինտերնետը գաղափարների և տեղեկությունների տարածման նոր միջոց է, որն ունի որոշ կարևոր հատկանիշներ, որոնք մեծացնում են անպատասխանատու խոսքի տարածման վտանգները:

Առաջինը անանունությունն է: Ինտերնետը թույլ է տալիս հաղորդակցություն ստեղծողներին և տարածողներին մնալ չբացահայտված: Սա թույլ է տալիս առավել հեշտությամբ ստեղծել և սպառել կեղծ, ապօրինի և վտանգավոր նյութերը:

Երկրորդը որակի նկատմամբ վերահսկողությունն է: Ցանկացած ոք կարող է ինտերնետում տեղադրել ցանկացած բան: Ըստ այդմ, Ինտերնետային հրապարակումը միանգամայն տարբեր է ավանդական հրապարակումից, քանի որ վերջինիս պարագայում կեղծ և ոչ ձգգրիտ տեղեկությունները, որպես կանոն, գտվում են: Ինտերնետում հավասարապես կարող են հրապարակվել և մակերեսային, և լավ ուսումնասիրված նյութերը:

Երրորդը՝ ընթերցողների մեծ շրջանակի առկայությունն է: Ըստ այդմ, Ինտերնետը մատչելի է միլիոնավոր ընթերցողների և այցելուների համար, ինչը անասելիորեն մեծացնում է հրապարակման միջոցով պատճառված վնասը²:

Դատարանը պետք է հաշվի առներ, թե որքանով էին այս հանգամանքները ունակ ազդելու Հայցվորի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի վրա: Ի լրումն սրա՝ Դատարանը կարող էր հաշվի առնել ևս մի հանգամանք, այն է՝ թե որքանով կարող էին անանուն և ըստ էության հասարակությանն անհայտ անձանց մեկնաբանությունները վնաս պատճառել Հայցվորի հեղինակությանը: Մի կարևոր հանգամանք՝ կապված ինտերնետի հետ, այդուհանդերձ, Դատարանը հաշվի առել է, այն է՝ որ Հայցվորը նույնպես կարող է ազատորեն օգտվել Պատասխանող լրատվամիջոցի կայքում առկա մեկնաբանություններ թողնելու հնարավորությունից, ինչը, սակայն, չի արել:

Փոխհատուցման համաչափության հարցը

Ռոմանենկոն ընդդեմ Ռուսաստանի (Romanenko and others v. Russia, 08/10/2009, դիմում թիվ 11751/03, 48-րդ պարբերություն) վճռով ՄԻԵԴ-ը համարել էր, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել էր նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չէին վերլուծել, թե դիմումատու լրագրողի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրա վրա: Մինչդեռ դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ-ի կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և, հետևաբար, եղել են խիստ անհամաչափ: Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ը գտել էր, որ խախտվել է համաչափության սկզբունքն ու ձանաչել Կոնվենցիայի խախտում: Ներպետական դատարանը նույնպես պետք է քննության առներ Հայցվորի կողմից պահանջվող փոխհատուցման գումարի համաչափության հարցը, ինչը չի արել:

² Free Speech: A Very Short Introduction by Nigel Warburton, p. 82.

ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ
«ԺՈՂՈՎՈՒՐԴ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ»
ՍՊԸ-Ի ԵՎ ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆԻ

Գործի հանգամանքները

2011թ. հոկտեմբերի 7-ին «Ժողովուրդ» օրաթերթի (այսուհետ՝ Պատասխանող) թիվ 171 համարում հրապարակվել է «Մարզպետը կաշառք է վերցրել» վերնագրով հոդված, որում, մասնավորապես, ասվել է.

«Գեղարքունիկի մարզպետ Նվեր Պողոսյանը իր վարորդի միջոցով 3 հազար ԱՄՆ դոլար գումար է վերցրել՝ մարզի թթուջուր գյուղի դպրոցի պատմության ուսուցչի՝ մրցույթում «հաղթանակ» պարգևելու համար, այս մասին «Ժողովուրդ»-ին ասաց մրցույթի մյուս մասնակից Աննա Թորոսյանը: Այն, որ սահմանամերձ Ճամբարակի շրջանն ամենաաղքատ բնակավայրերից է, բոլորին է հայտնի, բայց պարզվում է, որ մեր երկրում կան պաշտոնյաներ, այս դեպքում բարգավաճ Հայաստան կառուցող, որոնց չի հետաքրքրում, թե մարդիկ որտեղից գումար կգտնեն՝ կաշառք տալու համար: Գլխավորը՝ գումարը մտնի իրենց գրպանը: Փոխանակ այնպիսի պայմաններ ստեղծեն, որ ուսուցչի պակաս ունեցող գյուղերում մարդիկ սիրով աշխատեն, դեռ մի բան էլ կաշառք են պահանջում: Երբ այս մասին «Ժողովուրդ» թերթը հարց է տվել ԲՀԿ մամլո խոսնակ Բաղդասար Մեդրյանին, վերջինս ասաց, թե նման բան չի կարող պատահել, իսկ եթե եղել է, թող մեղավորը պատժվի: Ստացվում է, որ ԲՀԿ-ն իր մարզպետի գործողությունների համար պատասխանատու չէ...»:

Հոդվածը վերատպվել է նաև մի շարք այլ կայքերում, ինչպիսիք են www.aravot.am, www.hetq.am, www.panorama.am, www.armtown.com և այլն, որոնք հղում են կատարել «Ժողովուրդ» օրաթերթին:

2011թ. հոկտեմբերի 11-ին Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը (այսուհետ՝ Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրության» ՍՊԸ-ի և Աննա Թորոսյանի՝ պահանջելով դատարանից պարտավորեցնել Պատասխանողներին հերքում հրապարակել «Ժողովուրդ» օրաթերթում, վճարել 2.000.000 ՀՀ դրամի չափով ոչ նյութական վնասի փոխհատուցում, ինչպես նաև փոխհատուցել փաստաբանի վարձատրության համար իր կողմից կրած 500.000 ՀՀ դրամի չափով ծախսը:

2011թ. հոկտեմբերի 11-ին Պատասխանող Աննա Թորոսյանը «Ժողովուրդ» օրա-

թերթի խմբագրություն նամակ է ուղարկել հետևյալ բովանդակությամբ և խնդրել տպագրել այն.

«... Ես հրապարակայնորեն հայտարարում եմ, որ այդ ամենը ասել եմ ոչ ստույգ տվյալներից և ներողություն եմ հայցում Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանից՝ իր անունը անհիմն շահարկելու համար»:

30.11.2011թ. Պատասխանող ընկերությունը հակընդդեմ հայց է ներկայացրել Դատարան՝ պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները հերքելու և զրպարտության փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջների մասին:

2012թ. մարտի 19–ին ընդհանուր իրավասության Դատարանը հայցը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով Պատասխանողին հերքման տեքստ տպագրել «Ժողովուրդ» օրաթերթում, Պատասխանողից բռնագանցել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Դատարանը մերժել է «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ–ի հակընդդեմ հայցն ընդդեմ Նվեր Պողոսյանի:

Կողմերից որևէ մեկը սույն դատական ակտը չի բողոքարկել և մեկ ամիս անց այն մտել է օրինական ուժի մեջ:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանը որևէ կերպ չի անդրադարձել արտահայտվելու ազատության կարևորությանը ժողովրդավարական հասարակությունում, թեև ՄԻԵԴ–ը արտահայտվելու ազատության իրավունքին առնչվող բոլոր նախադեպային վճիռներում առանց բացառության ընդգծում է այս իրավունքի կարևորությունը՝ մասնավորապես վկայակոչելով *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49–րդ պարբերություն)* գործը, որի համաձայն.

«...արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնապուններից է և նրա առաջընթացի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի ինքնադրուկորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է Կոնվենցիայի 10–րդ հոդվածի 2–րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների. կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»:

Եռաստիճան թեսթը

Դատարանն իր վճռում միանգամայն տեղին վկայակոչել է Կոնվենցիայի 10–րդ հոդվածով նախատեսված եռաստիճան թեսթը: Մասնավորապես՝ դատարանը գնահատել է, թե արդյոք տվյալ գործով արտահայտվելու ազատության սահմանափակումը.

1. «սահմանված է օրենքով». դատարանը հղում է կատարել ՄԻԵԴ–ի *Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Silver v. UK*, 25/03/1983, դիմում թիվ 5947/72) գործին, որտեղ ամրագրված է, որ. «արտահայտվելու ազատության իրավունքի որևէ սահմանափակում պետք է բավարարի «օրենքով սահմանված» պահանջը: Այն պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, օրենքը պետք է իրապես մատչելի լինի և բավարար չափով հստակ՝ քաղաքացուն հնարավորություն տալու կարգավորելու իր վարքը»:
2. «հետապնդում է իրավաչափ նպատակ». այս հարցի վերաբերյալ դատարանը հղում է կատարել *Կումպանան ընդդեմ Ռումինիայի* (*Cumpana v. Romania*, 33348/96, դիմում թիվ 17/12/2004, 86–րդ պարբերություն) գործով ՄԻԵԴ–ի վճռին, որտեղ ամրագրված է, որ գրպարտության գործերով իրավաչափ նպատակն այլ անձանց հեղինակության պաշտպանությունն է: Դատարանը նաև հավելել է, որ «վերջին տարիներին ՄԻԵԴ–ը սահմանել է, որ անձի հեղինակության պաշտպանության իրավունքը Կոնվենցիայի 8–րդ հոդվածով երախավորված իրավունքներից մեկն է՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի տարր»:
3. «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում». թեսթի այս աստիճանը գնահատելիս դատարանը, վկայակոչելով *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Handyside v. UK*, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49–րդ պարբերություն) վճիռը, հարկ է համարել հստակեցնել, թե ինչ ասել է «անհրաժեշտ» ժողովրդավարական հասարակությունում, մասնավորապես նշելով, որ. «դա հաճախ ավելին է, քան «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին»... և որ այն պետք է բխի «ձնշող հասարակական կարիքից», լինի համաչափ հետապնդող օրինական նպատակին...»: Նշել է նաև, որ. «սահմանափակման անհրաժեշտությունը պետք է «համոզիչ կերպով հիմնավորվի փաստերով» (*Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի/Barthold v. Germany*, 25/03/1985, դիմում թիվ 8734/79, 55–րդ պարբերություն)»:

Այդուհանդերձ, վճռի ընթերցումից ակնհայտ է, որ այս բոլոր հղումներով հանդերձ՝ դատարանը սխալ է կիրառել եռաստիճան թեսթը, քանի որ փոխարենը գնահատելու, թե որքանով խոսքի ազատության իրավունքին իր հնարավոր միջամտությունը կբխի «ձնշող հասարակական կարիքից»՝ Դատարանը գնահատել է, թե որքանով է Պատասխանողի հրապարակումը բխում «ձնշող հասարակական կարիքից».

«...Հայցվորը իրականացնելով պետական կառավարումը մարզում մինչ օրս դրսևորել է բարեխիղճ վարքագիծ, աշխատել է օրինական սկզբունքի սահմաններում, առավել ևս՝ կաշառք ստանալու որևէ դեպք մինչ օրս չի արձանագրվել: Արդյունքում՝ Պատասխանողի կողմից հրապարակված տեղեկությունն այս դեպքում ուղղակի առումով «**ձնշող հասարակական կարիքից չի բխում**», ինչպիսի պարագայում «կաշառք է վերցրել» բնորոշումն անպատժելի մնալ ինքնին չի կարող ժողովրդավարական հասարակության համար համարվել ընդունելի ու դրանով հանդերձ ծառայել **օրինական նպատակի**, իսկ գործի փաստերը միայն խոսում

են Հայցվորի կողմից՝ դրական, իսկ Պատասխանողի կողմից՝ բացասական վարքագծի դրսևորման փաստերի մասին, ուստի Հայցվորի պատվի, արժանապատվության արատավորման փաստը **համոզիչ կերպով հիմնավորվում** է գործի փաստերի բավարար ու ծանրակշիռ համակցությամբ»:

Մինչդեռ «Ճնշող հասարակական կարիքից» բխելու անհրաժեշտության մասին կարելի է խոսել միայն խոսքի ազատության իրավունքի սահմանափակման, այլ ոչ՝ դրա իրականացման պարագայում:

Քաղաքական գործիչների կողմից առավել բարձր հանդուրժողականության պահանջը

Դատարանը որևէ կերպ քննության չի առել այն հանգամանքը, թե արդյոք տվյալ գործում Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը պետք է դրսևորեր առավել բարձր հանդուրժողականություն խնդրո առարկա հրապարակման նկատմամբ, թեև ՄԻԵԴ-ն իր *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (*Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42–րդ պարբերություն) նախադեպային վճռով հստակորեն սահմանել է քաղաքական գործիչների կողմից առավել բարձր հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը.

«Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան»:

Փաստերն ընդդեմ գնահատողական դատողությունների

Դատարանն իր վճռում ճանաչել է նաև փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակում կատարելու անհրաժեշտությունը: Վկայակոչելով *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (*Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46–րդ պարբերություն) ՄԻԵԴ-ի վճիռը՝ դատարանը նշել է, որ.

«Երբ քննության են առնվում զրպարտիչ արտահայտություններ անհրաժեշտ է ճիշտ տարբերակում կատարել փաստական տվյալների և արտահայտված կարծիքի (կամ «գնահատող դատողության») միջև: Պատճառն այն է, որ «փաստերի գոյությունը կարելի է ցույց տալ, մինչդեռ գնահատողական դատողությունների ճշմարտացիությունն ապացուցման ենթակա չէ»: Սա անհնարին է դարձնում կարծիքի արտահայտման պաշտպանությունը, եթե պաշտպանության միակ միջոցը ճշմարտությունն է: «Սա չի նշանակում, որ Կոնվենցիայի 10–րդ հոդվածի 2–րդ մասը չի կարող կիրառվել մի գործում, որը վերաբերում է կարծիքի, այլ ոչ՝ փաստական տվյալի: Նույնիսկ կարծիքի պարագայում պետք է գոյություն ունենա որևէ հաստատված կամ ընդունված փաստական հիմք այդ կարծիքն արտահայտելու համար, որը պետք է արտահայտված լինի բարեխղճորեն»:

Ու թեև սխալ հիմնավորմամբ, դատարանն, այդուհանդերձ, ճիշտ է կարողացել գնահատել, որ հրապարակված «կաշառք է վերցրել» արտահայտությունը փաստ է, այլ ոչ՝ գնահատողական դատողություն:

«Հայցվորն ինքն իր հիմնավորումներում տվյալ հրապարակած տեղեկությունը բնորոշում է այնպիսի փաստական կազմով, որոնք վերաբերում են զրպարտության փաստական կազմին և վիրավորանք համարվել չեն կարող, քանի որ Հայցվորը պնդում է տվյալ տեղեկությունը՝ իրականությանը չհամապատասխանելու, ինչպես նաև դրանով արդեն իսկ իր անձը փաստացի արատավորած լինելու էական փաստերը (արատավորած, այլ ոչ թե՛ արատավորելու նպատակ հետապնդող, այն էլ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ), հետևաբար, Հայցվորի պահանջը պետք է դատական քննության արժանացնել՝ որպես զրպարտության բնորոշման»: Տվյալ դեպքում, գործի փաստերով հաստատվում է, որ Պատասխանողի կողմից վերոհիշյալ «Ժողովուրդ» օրաթերթում ներկայացված տեղեկությունները կրել են փաստացի բնույթ, քանի որ դրանք փաստագրվել են կոնկրետ Աննա Թորոսյանի կողմից անձամբ լրագրողին տրված հարցազրույցի արդյունքում հրապարակված հոդվածում»:

Դատարանը խնդրո առարկա արտահայտությունները գնահատելիս դիտարկել է, թե արդյոք հրապարակված փաստական տվյալները համապատասխանում են իրականությանը և որևէ կերպ չի գնահատել, թե արդյոք դրանք կարող էին ողջամտորեն հրապարակված լինել («*Ալիթիա հրատարակչական ընկերություն*» ՍՊԸ–ն ու *Կոնստանտինիդեսն ընդդեմ Կիպրոսի* /Alithia Publishing Company LTD and Constantinides v Cyprus, 22/05/2008, դիմում թիվ 17550/03, 49–րդ պարբերություն) վճիռը, որի համաձայն.

«Նախորդ գործերով, երբ Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք թերթին պետք է ազատել մասնավոր անձանց արատավորող փաստական տվյալներն ստուգելու իր սովորական պարտականությունից, Դատարանն իր հայեցողությամբ որոշում է ընդունել՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, այդ թվում՝ արատավորող տեղեկությունների բնույթը և աստիճանը և թե որքանով թերթը ողջամտության սահմաններում կարող էր իր աղբյուրները ողջամիտ համարել մեղադրանքի հետ համեմատ (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66–րդ պարբերություն): Այս գործոններն, իրենց հերթին, պահանջում են հաշվի առնել մի շարք տարրեր, ինչպիսիք են աղբյուրի հեղինակավոր լինելու հանգամանքը (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*), արդյոք թերթը ողջամտության սահմաններում ուսումնասիրել է նյութը հրապարակումից առաջ (*Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն), արդյոք թերթը ներկայացրել է նյութը ողջամտորեն հավասարակշռված կերպով (*Բերգենս Տիդենդեն և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 02/05/2000, դիմում թիվ 26132/95, 57–րդ պարբերություն) և արդյոք թերթը զրպարտության թիրախը հանդիսացող անձին տվել է պաշտպանվելու հնարավորություն (*Բերգենս Տիդենդեն և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 58–րդ պարբերություն): Այսպիսով, թերթին արատավորող փաստական տվյալները կանխալ ստուգելու պարտականությունից ազատելը Դատարանի նախադեպային իրավունքին համահունչ կիրառելու համար ներպետական դատարանները պետք է

դրսևորեն հայեցողություն՝ հաշվի առնելով քննության ենթակա գործի առանձնահատուկ հանգամանքները»:

Ողջամիտ հրապարակման սկզբունքը տեղ է գտել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում:

Լրագրողների՝ բարեխիղճ գործելու պարտականությունը

Դատարանն արդարացիորեն ընդգծել է լրագրողների՝ բարեխիղճ գործելու պարտականությունը՝ վկայակոչելով *Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի (Pedersen and Baadsgaard v Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78-րդ պարբերություն)* գործը, որում ՄԻԵԴ-ը, մասնավորապես, ամրագրել է, որ.

«Լրագրողը պարտավոր է հիմնվել հավաստի և արժանահավատ փաստական հանգամանքների վրա, որոնք պետք է համամասն լինեն տարածված արատավորող տեղեկատվության բնույթին և աստիճանին՝ պայմանով, որ որքան առավել ծանր է տարածվող տեղեկատվության՝ հեղինակությունը արատավորող բնույթը, այնքան ամուր և հիմնավորված պետք է լինեն դրա փաստական հիմքերը»:

Միջամտության համաչափության հարցը

Դատարանը նաև քննության է առել պահանջվող փոխհատուցման համաչափության հարցը, ու թեև որևէ նախադեպ չի վկայակոչել, այդուհանդերձ, արդարացիորեն նշել է, որ.

«Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որ պեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ»:

Մասնավորապես՝ *Ռոմանենկոն ընդդեմ Ռուսաստանի (Romanenko and others v. Russia, 08/10/2009, դիմում թիվ 11751/03, 48-րդ պարբերություն)* վճռով ՄԻԵԴ-ը համարել էր, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել էր նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չէին վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ-ի կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և, հետևաբար, եղել են խիստ անհամաչափ: Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ը գտել էր, որ խախտվել է համաչափության սկզբունքն ու ճանաչել Կոնվենցիայի խախտում:

ՏԻԳՐԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «168 ԺԱՄ» ՍՊԸ-Ի ԵՎ ՄԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Գործի հանգամանքները

«168 ժամ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Պատասխանող) հրապարակում է «168 ժամ» օրաթերթը, որի 2011թ. մայիսի 26–27 թիվ 53(813) համարում լույս է տեսել հոդված «Տնօրենը ԿԳՆ-ին դատի է տվել» վերնագրով: Հոդվածում, մասնավորապես, տեղ են գտել հետևյալ պնդումները Տիգրան Տերտերյանի (այսուհետ՝ Հայցվոր) վերաբերյալ. «ըստ Էջմիածնի բնակիչների՝ դպրոցի նախկին տնօրենուի ու որդին հրդեհել է դպրոցի փաստաթղթային արխիվը»: Տիգրան Տերտերյանն, իր օրինական ներկայացուցիչների՝ Հավլետ Տերտերյանի և Սուսան Նազարյանի, միջոցով հայց է ներկայացրել ընդդեմ «168 ժամ» ՍՊԸ-ի և լրագրող Մարինե Մարտիրոսյանի՝ պնդելով, որ վերոհիշյալ հոդվածում իր մասին տեղ գտած արտահայտությունները զրպարտություն են: Հայցվորն, այսպիսով, ներկայացված հայցադիմումով պահանջել է, որպեսզի «168 ժամ» օրաթերթում տպագրվի հերքում և որ Պատասխանող ընկերությունը և լրագրողը համապարտության կարգով 2.000.000 ՀՀ դրամի չափով փոխհատուցեն իր կրած ոչ նյութական վնասը:

Ընդհանուր իրավասության Դատարանը կայացրել է վճիռը 2012թ. ապրիլի 13-ին, որով մերժել է հայցն ամբողջությամբ՝ պաշտպանելով հրապարակող ընկերության և լրագրողի արտահայտվելու ազատության իրավունքը: Ոչ Հայցվորը և ոչ էլ Պատասխանողը չեն բողոքարկել առաջին ատյանի Դատարանի դատական ակտը, և այն մեկ ամիս անց մտել է օրինական ուժի մեջ:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանն, ըստ էության, իր վճռում ճանաչել է արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը՝ հղում կատարելով ՄԻԵԴ-ի համապատասխան *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն)* նախադեպային վճռին, որում, մասնավորապես, ամրագրված է, որ.

«...արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնապուններից է և նրա առաջընթացի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի ինքնադրուկորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է Կոն-

վենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»»:

Եռաստիճան թեսթը

Հաջորդ կարևոր քայլը, որ դատարանը կատարել է վճռի պատճառաբանական մասում, Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված եռաստիճան թեսթը կիրառելն է: Մասնավորապես՝ դատարանն իր վճռում գնահատել է, թե արդյոք տվյալ գործով արտահայտվելու ազատության սահմանափակումը.

1. «սահմանված է օրենքով». դատարանը հղում է կատարել ՄԻԵԴ-ի *Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Silver v. UK/ 25/03/1983*, դիմում թիվ 5947/72) գործին, որտեղ ամրագրված է, որ. «արտահայտվելու ազատության իրավունքի որևէ սահմանափակում պետք է բավարարի «օրենքով սահմանված» պահանջը: Այն պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, օրենքը պետք է իրապես մատչելի լինի և բավարար չափով հստակ՝ քաղաքացուն հնարավորություն տալու կարգավորելու իր վարքը»:
2. «հետապնդում է իրավաչափ նպատակ». այս հարցի վերաբերյալ դատարանը հղում է կատարել *Կունսյանսն ընդդեմ Ռումինիայի* գործով ՄԻԵԴ-ի վճռին, որտեղ ամրագրված է, որ զրպարտության գործերով իրավաչափ նպատակն այլ անձանց հեղինակության պաշտպանությունն է: Դատարանը նաև հավելել է, որ «վերջին տարիներին ՄԻԵԴ-ը սահմանել է, որ անձի հեղինակության պաշտպանության իրավունքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երախավորված իրավունքներից մեկն է՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի տարր»:
3. «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում». թեսթի այս աստիճանը գնահատելիս դատարանը, վկայակոչելով *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Handyside v. UK, 07/12/1976*, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն) վճիռը, հարկ է համարել հստակեցնել, թե ինչ ասել է «անհրաժեշտ» ժողովրդավարական հասարակությունում, մասնավորապես նշելով, որ. «դա հաճախ ավելին է, քան «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին»... և որ այն պետք է բխի «ձնշող հասարակական կարիքոց», լինի համաչափ հետապնդող օրինական նպատակին...»: Նշել է նաև, որ. «սահմանափակման անհրաժեշտությունը պետք է «համոզիչ կերպով հիմնավորվի փաստերով» (*Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի/Barthold v. Germany, 25/03/1985*, դիմում թիվ 8734/79, 55-րդ պարբերություն)»:

Հարցի հանրային կարևորությունը

Դատարանը չի կիրառել ՄԻԵԴ-ի *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (*Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42րդ պարբերություններ) նախադեպային վճռով հաստատված այն սկզբունքը, որի համաձայն լրատվամիջոցները իրավունք ունեն և պարտավոր են տեղեկություններ և գաղափարներ տարածել հանրային շահին առնչվող ցանկացած խնդրի վերաբերյալ.

«...մամուլը պարտավոր է տեղեկություններ և գաղափարներ տարածել քաղաքական հարցերի, ինչպես նաև հանրային շահին վերաբերող այլ հարցերի շուրջ: Տպագիր մամուլը ոչ միայն ունի այդպիսի տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունք, այլև հասարակությունն իրավունք ունի ստանալու դրանք»:

Այդուհանդերձ, Դատարանը քննության արժանացրել է այն հարցը, թե որքանով էր խնդրո առարկա հրապարակումը բխում հանրային շահից.

«Սույն գործի փաստերով դատարանը պարզել ու հաստատված է համարել, որ մինչև հրապարակված նյութում ընդգծված տեղեկատվության տարածելու պահը Էջմիածին քաղաքում հրապարակայնորեն քաղաքացիների լայն շրջանակներում խոսակցությունների առարկա էին հանդիսանում Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի տնօրեն Սուսաննա Նազարյանին աշխատանքից ազատելու ու դրա հետ կապված մի շարք հանգամանքներ, ինչը նշանակում է, որ վերջինիս ու նրա ընտանիքի անդամների վերաբերյալ լուրերը գտնվել է Էջմիածին քաղաքի հասարակության ուշադրության կենտրոնում ու ունեցել են լայն հետաքրքրության շրջանակ, այսինքն՝ պայմանավորվել են **հանրային շահով**, քանի որ հանդիսանում էին բնակիչների խոսակցությունների հիմնական առարկաներից մեկը»:

Դատարանը, սակայն, սխալ է գնահատել, թե տվյալ հրապարակման մեջ ինչն է իրենից հանրային կարևորություն ներկայացնում, իսկ ինչը՝ ոչ: Այն, որ դպրոցի նախկին տնօրենի վերաբերյալ Էջմիածնի բնակիչների լայն շրջանակներում խոսակցություններ են գնացել, դեռ չի նշանակում, որ տնօրենին առնչվող յուրաքանչյուր հարցի քննարկում բխում է հանրային շահից, քանի որ պետք է հստակորեն տարանջատել «հանրային շահին» առնչվող թեման «հանրության հետաքրքրության առարկա հանդիսացող» թեմայից (*Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի/ Von Hannover v. Germany*, 07/02/2012, դիմում թիվ 40660/08, 98–99–րդ պարբերություններ): Հանրային շահին առնչվող թեման այստեղ անչափահասի կողմից քրեորեն պատժելի արարքի՝ դիտավորությամբ գույք ոչնչացնելու կամ վնասելու, հնարավոր կատարումն է հրկիզման միջոցով, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում:

Փաստերն ընդդեմ գնահատողական դատողությունների

Դատարանն իր վճռում ճանաչել է նաև փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակում կատարելու անհրաժեշտությունը: Թեև դատարանը չի մատնանշել, թե կոնկրետ որ նախադեպով է ՄԻԵԴ-ը դիրքորոշում արտահայ-

տել փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակում կատարելու անհրաժեշտության մասին, Դատարանն, այդուհանդերձ, նշել է, որ.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մատնացույց է արել փաստերի և գնահատիչ դատողությունների միջև ճշտակատար տարբերություն դնելու անհրաժեշտությունը, քանզի փաստերի գոյությունը կարող է ապացուցվել այն դեպքում, երբ գնահատիչ դատողությունների ճշմարտացիությունը ոչ միշտ է ապացուցման ենթարկվում: Այդ կապակցությամբ, այդպիսի դատողությունների առնչությամբ անհնարին է կատարել սեփական պնդումների ճշմարտացիության ապացուցման վերաբերյալ պահանջները, և այն խախտում է հենց կարծիքի արտահայտման ազատությունը, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնական մասը»:

Այս ամենով հանդերձ, Դատարանը ճիշտ չի գնահատել այն հանգամանքը, թե արդյոք հոդվածում տեղ գտած արտահայտությունն այն մասին, որ «ըստ Էջմիածնի բնակիչների՝ դպրոցի նախկին տնօրենուհու որդին հրդեհել է դպրոցի փաստաթղթային արխիվը» փաստական տվյալ է, թե գնահատողական դատողություն: Դատարանը հանգել է այն դիրքորոշման, որ խնդրո առարկա արտահայտությունը գնահատողական դատողություն է, կարծիք և, ըստ այդմ, ենթակա չէ ապացուցման:

«Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից հրապարակված տեղեկությունները հանդիսացել են հասարակությունում հանրային հնչեղություն ունեցող լուրի տարածման բարեխիղճ վերարտադրության արդյունք, այսինքն՝ հրապարակված տեղեկությամբ լրագրողն ու ընկերությունը գործել են ժողովրդավարական հասարակությունում իրենց ունեցած առանձնահատուկ դիրքի շրջանակում, հրապարակել են տեղեկություններ այնպիսի փաստացի տվյալների մասին, որոնք փոխանցվել են վերջիններիս բնակիչների խոսքերով, ուստի չեն հանդիսանում մամուլի կամ լրագրողի անձնական ու ապացույցներով հիմնավորված դիրքորոշումը՝ գոյություն ունեցող ու ճշմարտացի փաստերի մասին, այնուամենայնիվ, լրագրողների ու Պատասխանող ընկերության, հեղինակների հրապարակած քննադատական խոսքերը կարելի է համարել հրապարակված աղբյուրից ստացված կարծիք, որի «ճշմարտացիությունն ըստ սահմանման՝ ենթակա չէ ապացուցման»:

Դրա հետ մեկտեղ, կարծիքը նույնպես պետք է զուրկ չլինի բավարար փաստական հիմքից: Ըստ այդմ, ՄԻԵԴ-ի դիրքորոշումը *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02, 41-րդ պարբերություն)* գործում հետևյալն է.

«Դատարանը հիշեցնում է, որ երբ նույնիսկ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց»:

«Ըստ Էջմիածնի բնակիչների՝ դպրոցի նախկին տնօրենուհու որդին հրդեհել է դպրոցի փաստաթղթային արխիվը» փաստական տվյալ է, այլ ոչ՝ գնահատողական դա-

տողություն: Եվ այն հանգամանքը, որ լրագրողը հղում է տվել «Էջմիածնի բնակիչներին», ոչ մի կերպ չի վերաժում արտահայտությունը գնահատողական դատողության: Պատասխանող ընկերությունը և լրագրողն այս արտահայտության պարագայում պետք է կարողանային ապացուցել, որ այն համապատասխանում է իրականությանը կամ որ այն համապատասխանում է «ողջամիտ հրապարակման» սկզբունքին: Առաջինը նրանք չեն կարողացել անել: Այսպիսով՝ դատարանը պետք է քննության առներ, թե արդյոք կարելի է պնդել, որ արտահայտությունը ողջամիտ հրապարակում է: «Ողջամիտ հրապարակման» պաշտպանության պարզաբանումը, ըստ ՄԻԵԴ–ի, հետևյալն է.

«Նախորդ գործերով, երբ Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք թերթին պետք է ազատել մասնավոր անձանց արատավորող փաստական տվյալներն ստուգելու իր սովորական պարտականությունից, Դատարանն իր հայեցողությամբ որոշում է ընդունել՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, այդ թվում՝ արատավորող տեղեկությունների բնույթը և աստիճանը և թե որքանով թերթը ողջամտության սահմաններում կարող էր իր աղբյուրները ողջամիտ համարել մեղադրանքի հետ համեմատ (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66–րդ պարբերություն): Այս գործոններն, իրենց հերթին, պահանջում են հաշվի առնել մի շարք տարրեր, ինչպիսիք են աղբյուրի հեղինակավոր լինելու հանգամանքը (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93), արդյոք թերթը ողջամտության սահմաններում ուսումնասիրել է նյութը հրապարակումից առաջ (*Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/ Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն), արդյոք թերթը ներկայացրել է նյութը ողջամտորեն հավասարակշռված կերպով (*Բերգենս Տիդենդ և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 02/05/2000, դիմում թիվ 26132/95, 57–րդ պարբերություն) և արդյոք թերթը զրպարտության թիրախը հանդիսացող անձին տվել է պաշտպանվելու հնարավորություն (*Բերգենս Տիդենդ և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 58–րդ պարբերություն): Այսպիսով, թերթին արատավորող փաստական տվյալները կանխավ ստուգելու պարտականությունից ազատելը Դատարանի նախադեպային իրավունքին համահունչ կիրառելու համար ներպատական դատարանները պետք է դրսևորեն հայեցողություն՝ հաշվի առնելով քննության ենթակա գործի առանձնահատուկ հանգամանքները («*Ալիթիա հրատարակչական ընկերություն» ՍՊԸ–ն ու Կոնստանտինիդեսն ընդդեմ Կիպրոսի/Alithia Publishing Company LTD and Constantinides v Cyprus*, 22/05/2008, դիմում թիվ 17550/03, 49–րդ պարբերություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածի 5–րդ մասի 2–րդ կետը նույնպես ամրագրում է ողջամիտ հրապարակման երաշխիքը՝ սահմանելով, որ փաստացի տվյալներ հրապարակելը չի համարվում զրպարտություն, եթե.

«դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները»:

Պատշաճ հեռավորություն տեղեկատվության աղբյուրից

Դատարանը, այնուամենայնիվ, ճիշտ է գնահատել այն հանգամանքը, որ լրագրողն իր հրապարակման և տեղեկատվության աղբյուրի միջև ապահովել է պատշաճ հեռավորություն, և հողվածի ընթերցումից հասկանալի է, որ մեղադրանքի հեղինակն ինքը չէ:

Այդուհանդերձ, դատարանը չի վերլուծել, թե արդյոք կարելի է պնդել, որ Պատասխանող կողմը գործել է բարեխղճորեն և ճշգրիտ փաստական հիմքի վրա, ինչպես նաև տրամադրել «արժանահավատ և ճշգրիտ տեղեկատվություն», երբ վկայակոչել է պարզապես Էջմիածնի բնակիչներին, ընդ որում՝ ցուցմունք է տվել ընդամենը մի բնակիչ, որի կինը դպրոցի աշխատակից է եղել և որևէ կերպ չի հակակշռել այդ մեղադրանքը մյուս կողմի մեկնաբանությամբ:

«ԻՋԵՎԱՆԻ ՃՇՇ» ՓԲԸ-Ն ԸՆԴԴԵՄ «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-Ի

Գործի փաստական հանգամանքները

Հայկական երկրորդ /Հ2/ հեռուստաալիքով հեռարձակվող «Լրաբեր» լրատվական ծրագրի 21.06.2011թ. թողարկման ընթացքում ցուցադրվել է Նաիրա Խաչիկյանի, Արմեն Ասատրյանի, Իջևանի հեռուստարձևերության կողմից (այսուհետ՝ Պատասխանող) «Լրաբերի» համար պատրաստված «Ու՞ր են քանդված սալաքարերը» վերտառությամբ երեք բոլորակ տևողությամբ տեսանյութը, որում «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Հայցվոր) վերաբերյալ հնչել են, մասնավորապես, հետևյալ արտահայտությունները՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջևանի ճանշին ձեռնարկություն», «քանդել ու սալահատիկը ծածուկ վաճառել», «երևի մասնագիտական որակի ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ», «Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են», «Մետաղագործների փողոցի 36 միլիոն դրամի ծախսման ու մսխման աշխատանքների մասին են բարձրաձայնում բնակիչները հորդառատ անձրևներից հետո»:

Նույն ծրագրի 27.06.2011թ. թողարկման ընթացքում ցուցադրվել է «Սալիկները՝ ապահով հանգրվանում» վերնագրված տեսանյութը, որի ընթացքում «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրենի և այլ աշխատակիցների կողմից պարզաբանումներ են ներկայացվել՝ կապված 21.06.2011թ. հեռարձակված տեսանյութում ներկայացված տեղեկությունների հետ:

«Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն 15.07.2011թ. հայց է հարուցել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և Նաիրա Խաչիկյանի՝ ներողություն խնդրելուն և փոխհատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին: 20.07.2011թ. հայցադիմումն ընդունվել է վարույթ:

27.04.2012թ. վճռով Դատարանը հայցը բավարարել է մասնակի:

Հայցվոր «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն վերաքննիչ բողոք է բերել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.04.2012 թ. վճռի դեմ:

04.07.2012թ. վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշել է բավարարել վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ բեկանելով ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրա-

վասության դատարանի 27.04.2012 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

24.08.2012թ. բեկանումից հետո գործը ստացվել և ընդունվել է ընդհանուր իրավասության դատարանի վարույթ և այժմ գտնվում է նախնական դատական նիստի փուլում:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանն, ըստ էության, իր վճռում ճանաչել է արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը՝ հղում կատարելով նախ՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին, ապա ՄԻԵԴ-ի համապատասխան նախադեպային վճռներին մասնավորապես՝ *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK/07/12/1976*, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն) գործին, որում, ամրագրված է, որ.

«...արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնապուններից է և նրա առաջընթացի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի ինքնադրուկորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Սա ի թիվս այլ հարցերի, նշանակում է, որ այս ոլորտում կիրառվող ցանկացած «ձևականություն», «պայման» կամ «պատիժ» պետք է **համաչափ** լինի իր առջև դրված իրավաչափ նպատակին» (49-րդ պարբերություն):

Եռաստիճան թեսթը

Հաջորդ կարևոր քայլը, որ դատարանը չի կատարել վճռի պատճառաբանական մասում, Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված եռաստիճան թեսթը կիրառելն է: Մասնավորապես՝ դատարանն իր վճռում պետք է գնահատեր, թե արդյոք տվյալ գործով արտահայտվելու ազատության սահմանափակումը.

4. **«սահմանված է օրենքով»**. այս կապակցությամբ դատարանը համապատասխան հղում կարող էր կատարել ՄԻԵԴ-ի *Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Silver v. UK, 25/03/1983*, դիմում թիվ 5947/72) գործին, որտեղ ամրագրված է, որ. «արտահայտվելու ազատության իրավունքի որևէ սահմանափակում պետք է բավարարի «օրենքով սահմանված» պահանջը: Այն պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, օրենքը պետք է իրապես մատչելի լինի և բավարար չափով հստակ՝ քաղաքացուն հնարավորություն տալու կարգավորելու իր վարքը»:
5. **«հետապնդում է իրավաչափ նպատակ»** այս հարցի վերաբերյալ որպես նախադեպային որոշում կարող է հանդիսանալ օրինակ *Կունդանան ընդդեմ*

Ռումինիայի գործով ՄԻԵԴ–ի վճիռը, որտեղ ամրագրված է, որ զրպարտության գործերով իրավաչափ նպատակն այլ անձանց հեղինակության պաշտպանությունն է: Դատարանը նաև հավելել է, որ «վերջին տարիներին ՄԻԵԴ–ը սահմանել է, որ անձի հեղինակության պաշտպանության իրավունքը Կոնվենցիայի 8–րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից մեկն է՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի տարր»:

6. **«անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»** թեսթի այս աստիճանը գնահատելիս դատարանը կարող էր վկայակոչել *Հենդհասյոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 48–րդ պարբերություն)* վճիռը, որով հստակեցվել է, թե ինչ ասել է «անհրաժեշտ» ժողովրդավարական հասարակությունում.

«անհնար է տարբեր մասնակից պետությունների ներպետական օրենքներում գտնել միատեսակ ելրոպական մոտեցում: Հետևաբար՝ իրենց երկրների կենսական ուժերի հետ անմիջական և շարունակական կապերի շնորհիվ այդ պետությունները պետք է ունենա «հայեցողության լուսանցք», որի շրջանակներում կկարողանան մեկնաբանել, թե արդյոք կոնկրետ միջոցը «անհրաժեշտ» է: Մինևայն ժամանակ, ՄԻԵԴ–ն ընդգծել է, որ «անհրաժեշտության» թեսթը խիստ թեսթ է. մինչ «անհրաժեշտ» ածականը «անպայմանորեն անհրաժեշտի», «բացարձակ անհրաժեշտի» և «խստիվ անհրաժեշտի» հոմանիշը չէ, այն չունի նաև այնպիսի արտահայտությունների ձկունությունը, ինչպիսիք են «ընդունելին», «սովորականը», «օգտակարը», «ողջամիտը» կամ «ցանկալին»:

ՄԻԵԴ–ը նշել էր նաև, որ. »սահմանափակման անհրաժեշտությունը պետք է «համոզիչ կերպով հիմնավորվի փաստերով» (*Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի/ Barthold v. German./ 25/03/1985, դիմում թիվ 8734/79, 55–րդ պարբերություն*):

Հարցի հանրային կարևորությունը

Դատարանը վկայակոչել է ՄԻԵԴ–ի *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42րդ պարբերություններ)* նախադեպային վճռով հաստատված այն սկզբունքը, որի համաձայն՝ լրատվամիջոցներն իրավունք ունեն և պարտավոր են տեղեկություններ և գաղափարներ տարածել հանրային շահին առնչվող ցանկացած խնդրի վերաբերյալ.

«...մամուլը պարտավոր է տեղեկություններ և գաղափարներ տարածել քաղաքական հարցերի, ինչպես նաև հանրային շահին վերաբերող այլ հարցերի շուրջ: Տպագիր մամուլը ոչ միայն ունի այդպիսի տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունք, այլև հասարակությունն իրավունք ունի ստանալու դրանք»:

Այդուհանդերձ, Դատարանը քննության չի արժանացրել այն հարցը, թե որքանով էր խնդրո առարկա հրապարակումը բխում հանրային շահից:

Դատարանը պետք է անդրադառնար «հանրային շահին» առնչվող թեմային: Հանրային շահին առնչվող թեման և ընդհանուր իրադարձությունների համատեքստն

այստեղ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից առանց համապատասխան թույլտվության և, հնարավոր է նաև, քրեորեն պատժելի արարքի՝ Իջևանի համայնքային սեփականության գույքի հնարավոր յուրացումն է՝ սալարկված ծածկի քանդումը և սալիկներն իր տնօրինման տակ գտնվող պահեստ տեղափոխելու միջոցով:

Փաստերն ընդդեմ գնահատողական դատողությունների

Դատարանն իր վճռում ճանաչել է նաև փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերակում կատարելու անհրաժեշտությունը: Ելնելով Դատարանի մեջբերած նախադեպերի և դրանցից կատարված մեջբերումների, դատարանի եզրահանգումների ու պատճառաբանությունների ուսումնասիրությունից՝ կարելի է ենթադրել, որ Դատարանը ճիշտ չի ընկալել Եվրոպական դատարանի որոշումներն ու դրանցում առկա եզրահանգումները: Հակառակ պարագայում դժվար է բացատրել այն հանգամանքը, թե հղում կատարելով ՄԻԵԴ-ի վերոնշյալ երեք որոշումներին՝ ինչու Դատարանը չի շարունակել դրանցում առկա՝ ՄԻԵԴ-ի հետևողական և հստակ դիրքորոշման լույսի ներքո վերլուծել և գնահատել գործի մյուս փաստական հանգամանքները և սահմանափակվել է ընդամենը «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ «Իջևանի ճանշին ձեռնարկություն» և «երևի մասնագիտական որակի ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ»» արտահայտությունները, որպես վիրավորանք չդիտարկելով և շատ դիպուկ նկատելով, որ քանի որ լրագրողի կողմից օգտագործվել է «երևի» հարցական բառը, ապա տվյալ դեպքում, Նաիրա Խաչիկյանն իրականացնելով իր մասնագիտական գործունեությունը, ըստ էության, արտահայտել է իր սուբյեկտիվ կարծիքը տեսանյութում ներկայացված՝ փողոցների անմխիթար վիճակում գտնվելու պատճառների մասին և, հնարավոր է, որ իր գնահատականներում թույլ է տվել որոշակի չափազանցություն: Բացի այդ Դատարանը նկատել է, որ թեև Նաիրա Խաչիկյանը չի կոնկրետացրել թե ում «մասնագիտական որակի» և «անաչառության» պակասի մասին է խոսքը, սակայն տեսանյութի ընդհանուր կոնտեքստից կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է Հայցվորին: Դատարանը գտել է, որ նշված արտահայտությունները վիրավորանք չեն հանդիսանում, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են գնահատողական դատողություններ, որոնց քննադատական բնույթը կամ «ցնցող» լինելու հանգամանքը բավարար չէ դրանք որպես վիրավորանք դիտելու համար, ուստի որոշել է, որ Պատասխանողին ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և 1.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջները ենթակա են մերժման:

Վերոգրյալի առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ի վճիռների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ցանկացած վիճարկվող արտահայտություն դիտարկելիս Դատարանը հաշվի է առնում ամբողջական հողվածի բովանդակությունը և համատեքստը (*Պերնան ընդդեմ Իտալիայի/Perna v. Italy*, 06/05/2003, դիմում թիվ 48898/99, 45-րդ պարբերություն, *Մարոնեքն ընդդեմ Սլովակիայի/Marťnek v. Slovakia*, 19/04/2001, դիմում թիվ 32686/96, 53-րդ պարբերություն) և չի դիտարկում որևէ բառակապակցություն հողվածի համատեքստից կտրված: Մեկ այլ գործով ևս

(Դյուլդինը և Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/Dyuldin and Kislov v. Russia, 31/07/2007, դիմում թիվ 25968/02, 31–ը հոկտեմբերի 2007թ., 38–րդ պարբերություն) ՄԻԵԴ–ը հստակորեն սահմանել է.

«գնահատելու համար, թե ինչպիսի միջամտություն է անհրաժեշտ «ժողովրդավարական հասարակությունում» գրպարտության գործով, դատարանը պետք է քննության առնի հրապարակված կամ հեռարձակված նյութը որպես միասնական ամբողջություն՝ պարզելու վերջինիս ընդհանուր իմաստը և նպատակը: Բառերը պետք է մատնանշեն Հայցվորին որպես անձ, ում դեմ ուղղված է արատավորող արտահայտությունը: Խիստ էական է որ դատարանը դիտարկի այն համատեքստը, որում արվել է հրապարակումը»:

Մինչդեռ տվյալ դեպքում առաջին ատյանի Դատարանն, ակնհայտորեն շեղվելով ՄԻԵԴ–ի ձևավորած նախադեպային պրակտիկայից, կիրառել է ընտրողական մոտեցում՝ մի դեպքում հղում կատարելով ՄԻԵԴ–ի կողմից ձևավորված հենց այդ մոտեցմանը, իսկ մեկ այլ պարագայում վարվելով ուղիղ հակառակ կերպ՝ ուղղակիորեն անջատելով առանձին արտահայտություններ թե՛ ընդհանուր համատեքստից և թե՛ կոնկրետ հաղորդման մեջ օգտագործված համատեքստից՝ անտեսելով արտահայտությունների գործածման ձևի և եղանակի համալիր ուսումնասիրության և գնահատման անհրաժեշտությունը: Ավելին՝ արտահայտությունները մասնատել է և դրանցում օգտագործված առանձին բառերի բացատրական նշանակությունները բացահայտել հետևյալ կերպ.

«Մետաղագործների փողոցի 36 միլիոն դրամի ծախսման ու մսխման աշխատանքների մասին են բարձրաձայնում բնակիչները հորդառատ անձրևներից հետո», «սալահատիկը քանդել են և ծածուկ վաճառել» և «Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են» արտահայտությունները պարունակում են փաստացի տվյալներ, որոնք բացասաբար են բնութագրում «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ–ին և իրենց էությանը արատավորում են նրա գործարար համբավը: «Մսխել» բառը կիրառվում է մասնավորապես հետևյալ իմաստներով՝ «ծախսել», «վատնել», «գործածել», «շռայլել»/«ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ք. Երևան, 1974թ., հ.3, էջ 562/: «Ծածուկ» բառն ի թիվս «թաքուն», «այնպես, որ ուրիշները չտեսնեն», «օտար աչքերից թաքուն», «ուրիշներից թաքուն պահելով» և այլնի, ունի նաև հետևյալ իմաստները՝ «իշխանություններից թաքուն», «ոչ օրինական», «ապօրինի» /«ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», ք. Երևան, 1972թ., հ. 2, էջ 614/: Նման պայմաններում, վերոնշյալ փաստական տվյալների տարածման արդյունքում կողմնակի լսողի մոտ ստեղծվում, կամ կարող է ստեղծվել տպավորություն, որ Հայցվորն «ապօրինի», «ուրիշներից թաքուն պահելով» վաճառել է այլ անձի՝ Իջևան համայնքի սեփականությունը հանդիսացող սալաքարերը, և «վատնել» է շինարարական աշխատանքների համար նախատեսված գումարները, այսինքն՝ կատարել է ոչ իրավաչափ արարքներ, ինչն անկասկած բացասաբար է անդրադառնում Հայցվորի գործարար, մասնագիտական որակների, հատկանիշների վերաբերյալ հասարակությունում ձևավորված կարծիքի, այսինքն՝ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ–ի գործարար համբավի վրա»:

Այս ամենով հանդերձ, Դատարանը ճիշտ չի գնահատել այն հանգամանքը, թե արդյոք հաղորդման ընթացքում տեղ գտած արտահայտությունները փաստական

տվյալ են, թե գնահատողական դատողություն, թե՝ համապատասխան իրավիճակից ելնելով անհրաժեշտ հարցադրումներ, քանի որ չի առաջնորդվել արտահայտությունները դեպքերի զարգացման ամբողջական համատեքստում վերլուծելու անհրաժեշտությամբ և սկզբունքով:

Դրա հետ մեկտեղ, կարծիքը նույնպես պետք է զուրկ չլինի բավարար փաստական հիմքից: Ըստ այդմ, ՄԻԵԴ–ի դիրքորոշումը *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02, 41–րդ պարբերություն)* գործում հետևյալն է.

«Դատարանը հիշեցնում է, որ երբ նույնիսկ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց»:

Այն, որ ըստ Պատասխանող Նաիրա Խաչիկյանի՝ «սալահատակը վաճառվել է», «գումարները մսխվել են» նկարահանման ժամանակ ժողովրդից լսված խոսքեր են և այն հանգամանքը, որ լրագրողը հղում է տվել «Իջևանի բնակիչներին», ոչ մի կերպ չի վերածում արտահայտությունը գնահատողական դատողության: Պատասխանողն այս արտահայտության պարագայում պետք է կարողանար ապացուցել, որ այն համապատասխանում է իրականությանը կամ որ այն համապատասխանում է «**ողջամիտ հրապարակման**» սկզբունքին: Առաջինը նա չի կարողացել անել: Հետևաբար դատարանը պետք է քննության առներ, թե արդյոք կարելի է պնդել, որ արտահայտությունը ողջամիտ հրապարակում է: «Ողջամիտ հրապարակման» պաշտպանության միանգամայն պարզաբանումը, ըստ ՄԻԵԴ–ի, հետևյալն է.

«Նախորդ գործերով, երբ Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք թերթին պետք է ազատել մասնավոր անձանց արատավորող փաստական տվյալներն ստուգելու իր սովորական պարտականությունից, Դատարանն իր հայեցողությամբ որոշում է ընդունել՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, այդ թվում՝ արատավորող տեղեկությունների բնույթը և աստիճանը և թե որքանով թերթը ողջամտության սահմաններում կարող էր իր աղբյուրները ողջամիտ համարել մեղադրանքի հետ համեմատ (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66–րդ պարբերություն*): Այս գործոններն, իրենց հերթին, պահանջում են հաշվի առնել մի շարք տարրեր, ինչպիսիք են աղբյուրի հեղինակավոր լինելու հանգամանքը (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*), արդյոք թերթը ողջամտության սահմաններում ուսումնասիրել է նյութը հրապարակումից առաջ (*Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն*), արդյոք թերթը ներկայացրել է նյութը ողջամտորեն հավասարակշռված կերպով (*Բերգենս Տիդենդե և այլք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway, 02/05/2000, դիմում թիվ 26132/95, 57–րդ պարբերություն*) և արդյոք թերթը զրպարտության թիրախը հանդիսացող անձին տվել է պաշտպանվելու հնարավորություն (*Բերգենս Տիդենդե և այլք ընդ-*

դեմ *Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 58-րդ պարբերություն): Այսպիսով, թերթին արատավորող փաստական տվյալները կանխավ ստուգելու պարտականությունից ազատելը Դատարանի նախադեպային իրավունքին համահունչ կիրառելու համար ներպատական դատարանները պետք է դրսևորեն հայեցողություն՝ հաշվի առնելով քննության ենթակա գործի առանձնահատուկ հանգամանքները («*Ալիթիա հրատարակչական ընկերություն*» ՄՊԸ-ն ու *Կոնստանտինիդեսն ընդդեմ Կիպրոսի/Alithia Publishing Company LTD and Constantinides v Cyprus*, 22/05/2008, դիմում թիվ 17550/03, 49-րդ պարբերություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը նույնպես ամրագրում է ողջամիտ հրապարակման երաշխիքը:

Պատասխանողի պատասխանատվության հարցը որոշելիս Դատարանը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ նույն՝ Հայկական երկրորդ հեռուստաընկերության եթերում, «Լրաբեր» լրատվական ծրագրի 27.06.2011թ. թողարկման ընթացքում «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրենը և աշխատակիցներն ըստ էության ներկայացրել են իրենց պատասխանը 21.06.2011թ. հեռարձակված տեսանյութում տեղ գտած տեղեկությունների վերաբերյալ, որպիսի պայմաններում, տեսականորեն նույն լսարանը հնարավորություն է ունեցել ծանոթանալու նրանց դիրքորոշմանը: Այս հանգամանքը Դատարանը պետք է դիտարկեր ՄԻԵԴ –ի կողմից ձևավորված «պատասխանատու լրագրության» և «ողջամիտ հրապարակման պաշտպանության» սկզբունքների լույսի ներքո՝ հղում կատարելով համապատասխան *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK)*, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 48-րդ պարբերություն) նախադեպային վճռին որի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ առանց տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու դիտավորության: Դատարանը պետք է հաշվի առներ նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007թ. հոկտեմբերի 4-ին ընդունված թիվ 1577(2007) բանաձևը զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ, որում ընդգծվել է, որ հանրային շահից բխող հայտարարությունները, եթե նույնիսկ ապացուցվում է դրանց ոչ ճշմարիտ լինելը, չպետք է լինեն պատժելի, եթե դրանք կատարվել են առանց դրանց ոչ հավաստի լինելու փաստի իմացության, առանց վնաս պատճառելու դիտավորության և դրանց ճշմարտացիության ստուգման համար համապատասխան ջանքերի գործադրմամբ:

Փոխարենը՝ Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում սալահատակի՝ համայնքային սեփականություն հանդիսանալու և շինարարական աշխատանքներն առանց համապատասխան թույլտվության իրականացնելու հանգամանքները չեն առնչվում սույն վեճին այնքանով, որքանով տեսանյութում տեղ գտած արտահայտությունները, որոնք հիմք են հանդիսացել Հայցվորի կողմից դատարան դիմելու համար, վերաբերում են ոչ թե առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու մասին արտահայտություններին, այլ սալաքարերը «ծածուկ վաճառելու», «...թեթև ձեռքով վաճառելու» փաստական տվյալներին, որոնք, ինչպես

արդեն նշվել է, իրականությանը չեն համապատասխանում և արատավորում են Հայցվորի գործարար համբավը: Մինչդեռ հենց այս հանգամանքներն են խիստ վերաբերելի այս գործի քննությանը, քանի որ դրանց վերլուծության և հիմնավորվածության գնահատման միջոցով է, որ Դատարանը պետք է գնահատի թե՛ հասարակական կարիքի աստիճանն ու առկայությունը, թե՛ դատողությունների՝ համատեքստից բխելու և բավարար հիմքեր ունենալու հանգամանքը և թե ստեղծված իրավիճակում չափազանցության և սադրանքի թույլատրելիության աստիճանը: Այս առումով ուշագրավ է այն, որ Դատարանն ընդգծել է, որ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ–ի կողմից տրված հաշվից քաղվածքով, 09.09.2011թ. թիվ 01/105 տեղեկանքով, ինչպես նաև գործում առկա լուսանկարների և սկավառակի հետազոտմամբ հաստատվել է, որ սալահատակը տեղափոխվել և պահեստավորվել է Հայցվորին պատկանող տարածքում, իսկ շինարարական աշխատանքների կատարման համար գումարը Հայցվորին է փոխանցվել 21.07.2011թ.: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ «սալահատակը քանդել և ծածուկ վաճառել են» և «Իջևանի ձանշինի թեթև ձեռքով վաճառվել են», «36 միլիոն դրամի ծախսման ու մսխման» փաստական տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Այս առումով հենց այն հանգամանքը, որ Պատասխանողը ձեռք է բերել և Դատարան է ներկայացրել վերոնշյալ ապացույցները խոսում է այն մասին, որ փաստական տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը, իսկ այն, որ Պատասխանողը մի քանի օր անց հնարավորություն է ընձեռել Հայցվորին նույն ծրագրի և նույն թեմայի շրջանակներում նույն հեռուստատալիքով հանդես գալու իր հակափաստարկներով, խոսում է այն մասին, որ Պատասխանողը հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները՝ ստեղծելով հավասար պայմաններ և հավասարապես լուսաբանելով թե՛ բնակիչների մտահոգությունները և նրանց հուզող հարցերը և թե՛ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ–ի տնօրինության դիրքորոշումը, իսկ այն հանգամանքը, որ դա տեղի է ունեցել մի քանի օր ուշ, ապա դա պայմանավորված է հեռուստատեսության և տպագիր մամուլի միջև ընկած տարբերություններով և առանձնահատկություններով, ինչպես նաև հարցի հրատապությունից և հնչելությունից՝ պայմանավորված տեղում նկարահանումներ կազմակերպելու անհրաժեշտությամբ: Սակայն թեմայի մի քանի օրերի զարգացումներն ու հանրային գերակա շահի առկայությունը թույլ չի տալիս այդ իրադարձություններն իրարից անկախ դիտարկել և միացնում է այդ ամենը մի շղթայով:

Պատշաճ հեռավորություն տեղեկատվության աղբյուրից

Դատարանն ընդհանրապես չի անդրադարձել և չի գնահատել այն հանգամանքը, թե արդյոք լրագրողն իր հրապարակման և տեղեկատվության աղբյուրի միջև ապահովել է պատշաճ հեռավորություն, և արդյոք ցանկացած օբյեկտիվ դիտորդի համար հասկանալի է, որ մեղադրանքի հեղինակն ինքը չէ:

Ըստ այդմ, Դատարանը չի վերլուծել, թե արդյոք կարելի է պնդել, որ Պատասխանող կողմը գործել է բարեխղճորեն և ճշգրիտ փաստական հիմքի վրա, ինչպես նաև

տրամադրել «արժանահավատ և ճշգրիտ տեղեկատվություն: Մինչդեռ ՄԻԵԴ-ն իր *Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի (Pedersen and Baadsgaard v Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78-րդ պարբերություն)* վճռում ամրագրել էր, որ.

«լրագրողները պետք է գործեն բարեխղճորեն, ճշգրիտ փաստական հիմքի վրա և տրամադրեն «արժանահավատ և ճշգրիտ» տեղեկություններ լրագրողական էթիկային համապատասխան... այս «պարտականություններն ու պատասխանատվությունը» կարևորություն են ստանում, երբ խոսքը գնում է կոնկրետ անձի հեղինակության նկատմամբ ոտնձգությունների և «այլոց իրավունքների» խախտումների մասին: Այսպիսով՝ հատուկ հիմքեր են պահանջվում, որպեսզի լրատվամիջոցներն ազատվեն մասնավոր անձանց հասցեին արված զրպարտչական փաստական տվյալներն ստուգելու սովորական պարտականությունից»:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ այս իրավիճակը թերևս ստեղծվել է այն պարզ պատճառով, որ Դատարանը, օրենսդրության շրջանակներում յուրաքանչյուր գործում առկա փաստական հանգամանքները ՄԻԵԴ-ի նախադեպերի կիրառմամբ օբյեկտիվորեն վերլուծելու փոխարեն՝ ըստ էության փորձել է կանխագուշակել գործի լուծման տարբերակները և դրանց հնարավոր ցանկալի և անցանկալի արձագանքները և ազդեցությունները և, դրանից ելնելով թե օրենսդրությունը և թե ՄԻԵԴ-ի նախադեպերը հարմարեցնել իր պատկերացմամբ բարենպաստ վճիռ կայացնելու նպատակին:

ՀՀ վերաքննիչ դատարանն էլ, հղում կատարելով ՄԻԵԴ-ի թվականի *Կրասկան ընդդեմ Շվեյցարիայի (Kraska v. Switzerland, 19/04/1993, դիմում թիվ 13942/88)* գործով կայացված վճռին և պատճառաբանելով, որ ընդհանուր իրավասության դատարանի վճռում ամրագրված բազմաթիվ եզրահանգումներ պատշաճորեն պատճառաբանված չեն, որոշում է կայացրել ամբողջությամբ բեկանել 27.04.2012թ. վճիռը և գործն ուղարկել նույն Դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

**ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԸՆԴԴԵՄ ԱԴՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆԻ,
ԵՐՐՈՐԴ ԱՆՁ՝ «ՀԵՏՔ» ՇԱԲԱԹ-ԱԹԵՐԹ**

Գործի հանգամանքները

29.06.2012թ. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Վանո Եղիազարյանի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ Ադրինե Թորոսյանի (այսուհետ՝ Պատասխանող), Պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Հետք» շաբաթաթերթ՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, վճռել է հայցը մերժել, իսկ Վանո Եղիազարյանից հոգուտ Ադրինե Թորոսյանի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

05.09.2011թ., այնուհետև 16.09.2011թ. դիմելով Դատարան՝ Վանո Եղիազարյանը խնդրել է զրպարտության համար պարտավորեցնել Պատասխանողին «Հետք» թերթով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստական տվյալները, վիրավորելու համար նույն թերթով ներողություն խնդրել իրենից և Պատասխանողից հոգուտ Վ.Եղիազարյանի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված դատական ծախսերը, «Հետք» թերթում տպագրել տալ հետևյալ տեքստը.

«Ես՝ Ադրինե Վարդանի Թորոսյանս, ներողություն եմ խնդրում Լեռնապատի գյուղապետ Վանո Եղիազարյանից 2011 թվի օգոստոսի 23-ին «Հետք» թերթում՝ «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն» հոդվածի վերնագրով նրա անձն անվանարկելու համար, քանի որ գյուղապետին զրպարտել եմ հետևյալ տեղեկություններով. «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն» վերնագիրը զրպարտություն է, քանի որ գյուղապետը պահանջել է «արածել» բառի համար միայն ներողություն խնդրել, ինչը վճռով բավարարվել է, «Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ.Եղիազարյանը 1 միլիոն դրամ էր պահանջում իր գյուղի բնակչից, իսկ զրպարտության համար՝ 2 միլիոն դրամ, ինչպես նաև դատական ծախսերը: Դատավոր Վ.Հովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով» մեջբերումը լրագրող Ադրինե Թորոսյանի կողմից կատարված զրպարտություն է, քանի որ գյուղապետի պահանջը Գ.Մելքոնյանից եղել է հերքել զրպարտությունները և ներողություն խնդրել վիրավորանքի համար, վճարել միայն դատական ծախսերը, «...չնայած ինքը՝ գյուղապետը, նշված արտահայտությունը հայ-

ցաղիմունում որպես հիմք բերելով, ընդգծել է, որ այն որպես հռետորական հարց է տրված» մեջբերումը զրպարտություն է, քանի որ հայցաղիմումի մեջ նման բան չկա»:

Առաջին ատյանի դատարանի վճռի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Հոդվածի հանրային նշանակությունը

ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ հանրային նշանակության հարցերի բնագավառում ԶԼՄ-ներն ունեն պաշտպանվածության առավել բարձր աստիճան: ՄԻԵԿ-ը բազմիցս ընդգծել է խոսքի ազատության կարևորությունը, եթե խնդրո առարկան ընդհանուր մտահոգության հարցերի շուրջ քննարկմանը մասնակցելն է (*Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի/Hertel v. Switzerland*, 25/08/1998, դիմում թիվ 25181/94): Եվրոպական դատարանը շեշտել է նաև քաղաքական քննարկման և հանրային մտահոգության այլ խնդիրների միջև տարբերակման անհրաժեշտության բացակայությունը (*Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի/ Thorgeir Thorgeirson v. Iceland*, 25/06/1992, դիմում թիվ 13778/88, 64-րդ պարբերություն):

Թեև առաջին ատյանի Դատարանը քննարկման առարկա չի դարձրել վիճարկվող հոդվածում հանրային շահի առկայության հարցը, ինչը զրպարտության գործերով ՄԻԵԿ-ի կողմից իրականացվող՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտման գնահատման կարևոր բաղադրատարրերից է հանդիսանում, պատշաճ կարգով տարբերակելով և գնահատելով վիճարկվող հոդվածի փաստացի տվյալների և գնահատողական դատողությունների բնույթը, Դատարանը կայացրել է վճիռ, որը լիովին համահունչ է ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի պահանջների հետ:

Սույն գործի համատեքստում, նկատի ունենալով լրագրողի կողմից դատական գործի լուսաբանման հանգամանքը, կիրառելի է նաև *Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. UK*, 26/04/1979, դիմում թիվ 6538/74, 65-րդ պարբերություն) գործով ՄԻԵԿ-ի կողմից սահմանված հետևյալ սկզբունքը.

«...Ընդունված փաստ է, որ դատարանները չեն կարող գործել վակուումում: Մինչ նրանք հանդես են գալիս որպես վեճերի կարգավորման ֆորում, սա չի նշանակում որ այլ ձևաչափով վեճերի նախնական քննարկում չի կարող տեղի ունենալ, լինի դա մասնագիտացված ամսագրերում, մամուլում կամ լայն հանրության շրջանում: Ավելին՝ մինչ զանգվածային լրատվամիջոցները չպետք է անցնեն այն սահմանները, որոնք ստեղծված են ի շահ արդարադատության պատշաճ իրականացմանը, նրանք պարտավոր են տարածել տեղեկություններ և գաղափարներ այն հարցերի շուրջ, որոնք քննության են առնում դատարանները, ինչպես և հանրային շահին առնչվող այլ ոլորտներում: Այդպիսի տեղեկություններ եվ գաղափարներ տարածելու խնդիր ունեն լրատվամիջոցները: Հանրությունը, մյուս կողմից, իրավունք ունի ստանալու դրանք»:

Հայցվորի կարգավիճակը

«Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ ... ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41–42–րդ պարբերություններ, *Ինքալն ընդդեմ Թուրքիայի/Incal v. Turkey*, 09/06/1998, դիմում թիվ 22678/93, 46–րդ պարբերություն):

Կառավարության նկատմամբ քննադատության շրջանակները ավելի լայն են, քան մասնավոր անձանց կամ նույնիսկ քաղաքական գործիչների նկատմամբ: Ժողովրդավարական համակարգում կառավարության գործողությունները և բացթողումները պետք է մանրակրկիտ քննարկման առարկա լինեն ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների կողմից, այլև հանրության (*Սեներն ընդդեմ Թուրքիայի/Sener v. Turkey*, 18/07/2000, դիմում թիվ 26680/95, 40–րդ պարբերություն): Տեղական խորհուրդը, լինելով ընտրովի մարմին, պետք է դրսևորի հանդուրժողականության բարձր աստիճան քննադատության նկատմամբ (*Լոմբարտոն և այլք ընդդեմ Մալթայի/Lombardo and others v. Malta*, 24/04/2007, դիմում թիվ 7333/06, 54–րդ պարբերություն):

Հետևաբար, Լեոնապատի համայնքի ղեկավարը, լինելով ընտրովի մարմին տեղական մակարդակով, որը ներկայացնում է համապատասխան համայնքի շահերը, որպես այդպիսին, պետք է դրևորի հանդուրժողականության առավել բարձր աստիճան քննադատության նկատմամբ:

Դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձել Հայցվորի կարգավիճակը, սակայն նկատի ունենալով, որ իրականացվել է գնահատողական դատողությունների և փաստական տվյալների պատշաճ գնահատում և հաշվի առնելով համապատասխան արտահայտություններով արատավորման փաստի բացակայությունը, այդ հանգամանքը չի ազդել գործի ելքի վրա:

Փաստական տվյալներ և գնահատողական դատողություններ

Դատարանը, անդրադառնալով հողվածում կատարված այն արտահայտություններին, որոնք Հայցվորը դիտել է որպես վիրավորանք և զրպարտություն, հանգել է հետևյալ հետևության. ա/ հողվածի «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժեն 1 միլիոն» վերնագիրը դատարանը զրպարտություն չի դիտում, քանի որ նշված արտահայտության մեջ ներկայացված չեն Հայցվորի անձի վերաբերյալ փաստացի տվյալներ, ներկայացվածն իր մեջ չի պարունակում կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն վերացական է: Բացի այդ, նշված հողվածի վերնագիրն իրականում չի արատավորում և չի էլ կարող արատավորել Հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, քանի որ համաձայն դատարանի թիվ ԼԴ/0748/02/10 քաղաքացիական գործով 08.07.2011 թվական

նին հրապարակած վճռի՝ նշված գործով Հայցվորը՝ Վ.Եղիազարյանը, երկու անգամ դիմելով դատարան, պահանջել է վիրավորանք հասցնելու համար պարտավորեցնել Գևորգ Սուլեյմանի Մելքոնյանին հրապարակային ներողություն խնդրել Վ.Եղիազարյանից լրատվության նույն միջոցով և Գ.Մելքոնյանից հոգուտ Վ.Եղիազարյանի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, զրպարտության համար պարտավորեցնել Պատասխանողին նույն թերթի միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և Գևորգ Սուլեյմանի Մելքոնյանից հոգուտ իրեն՝ Վ.Եղիազարյանի բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածով նախատեսված դատական ծախսերը, բռնագանձումը տարածելով նրա գույքի վրա: Այսինքն, անգամ նման հանգամանքից ելնելով Պատասխանողի մոտ կարող էր կարծիք ձևավորվել, որ Հայցվորն ինքը ևս իր հասցեին կատարված արտահայտության համար պատասխանատվության ողջամիտ չափ, ի թիվս այլ միջոցների, համարել է նաև նշված չափով գումարի բռնագանձման հնարավորությունը:

բ/ հողվածում լրագրողի ներառած այն միտքը, որ «Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ.Եղիազարյանը 1 միլիոն դրամ էր պահանջում իր գյուղի բնակչից, իսկ զրպարտության համար՝ 2 միլիոն դրամ, ինչպես նաև դատական ծախսերը: Դատավոր Վ.Հովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով» դատարանը զրպարտություն չի դիտում, քանի որ Հայցվորը նախկինում նման պահանջով երկու անգամ դիմել է դատարան, իսկ այն միտքը, որ դատարանը հայցը բավարարել է մասնակի, չնայած չի համապատասխանում իրականությանը, սակայն նշված արտահայտությունը իրականում չի արատավորում և չի էլ կարող արատավորել Հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

գ/ լրագրողի հողվածից մեջ բերված «Արտահայտություններից մեկն էլ՝ «Մենք ուզում ենք իմանալ՝ ըդտեղ արածողը Սամվելն ա լինելու, գյուղապետը, թեև ավագանին», գյուղապետ Վ.Եղիազարյանը որակել է վիրավորական՝ չնայած ինքը՝ գյուղապետը, նշված արտահայտությունը հայցադիմումում որպես հիմք բերելով, ընդգծել է, որ այն որպես հռետորական հարց է տրված» արտահայտությունից և հատկապես որակել բառից Հայցվորը գտել է, որ լրագրողը համաձայն չէ, որ այն վիրավորանք է, որն ինքնին վիրավորական է: Ավելին՝ հայցադիմումում Վ.Եղիազարյանը չի ընդգծել, որ դա հռետորական հարց է, ուստի նշված արտահայտությունը դիտել է և վիրավորանք, և զրպարտություն: Դատարանը գտնում է, որ նշված միտքը չի կարող համարվել ոչ զրպարտություն, և ոչ էլ վիրավորանք, քանի չի արատավորում և չի էլ կարող արատավորել Հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Լրագրողի չհամաձայնվելը Հայցվորի հետ որևէ հարցի կապակցությամբ չի կարող դիտվել վրավորանք ուղղված հենց Հայցվորի դեմ, քանի որ լրագրողը, իհարկե որոշակի թերություններով, ընդամենը լուսաբանել է դատարանում քննված գործը՝ այդ հարցի վերաբերյալ տեղեկացնելով հասարակությունը, Նաև, լրագրողի միտքը Պատասխանողի «հռետորական» հարցի ձևակերպման հետ կապված չնայած նշված չի եղել հայցադիմումում, սակայն արտահայտվել է Հայցվորի կողմից դա-

տական նիստում տված ցուցմունքում, և նշված միտքը արտահայտվել է դատական ակտի համապատասխան հատվածում՝ որպես Հայցվորի դատական նիստում տված ցուցմունքի բովանդակություն:

Դատարանի կողմից արված վերլուծությունը համահունչ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի պահանջներին: Անկախ այն հանգամանքից, թե վիճարկվող արտահայտությունները հանդիսանում են գնահատողական դատողություն թե փաստական տվյալ, որպես վիրավորանք կամ զրպարտություն որակվելու համար անհրաժեշտ է, որ համապատասխան արտահայտությունները ունենան արատավորող բնույթ: ՄԻԵԴ-ի կողմից մշակված մոտեցումը նշվածի վերաբերյալ հետևյալն է.

«Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան (*Fjølhusen Ørnum og Sunnåsa rúnarlag v. Noreg/Bladet Tromsø and Stensås v. Norway*, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն, *Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria*, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37-րդ պարբերություն):

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ այս ազատության իրականացումը ենթադրում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: Այս պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում էական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը և խախտվում են «այլոց իրավունքները»:

Ակնհայտ է, որ օրենքով սահմանված դատական պաշտպանության միջոցից օգտվելը չի կարող դիտվել որպես անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող քայլ, ընդհակառակը, այս միջոցը օրենքով սահմանված է հենց անձի պատիվն ու արժանապատվությունը դատական կարգով պաշտպանելու համար: Սույն գործով դատարանը կարողացել է պատշաճ կարգով տարբերակել փաստական տվյալը կարծիքից, ըստ այդմ, պայմանավորելով դրանց ապացուցման անհրաժեշտությունը: Դատարանն անդրադարձել է նաև վերնագրում առկա վիճարկվող արտահայտության՝ չակերտների մեջ վերցված լինելու հանգամանքին, ինչի միջոցով լրագրողը պատշաճ հեռավորություն է ապահովել իր և այն կատարած անձի միջև: Դատարանի վճիռը համահունչ է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներին:

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ն ԸՆԴԴԵՄ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ**

Գործի փաստական հանգամանքները

17.10.2011թ. www.hraparak.am էլեկտրոնային էջում հրապարակվել է «Ով արյուն կլափի, թող գա իր երեխու դեմ» վերնագրով Վլադիմիր Գասպարյանի կողմից տրված հարցազրույցը, որում նշված է.

«Ցավացող ծնողը լկտի չի լինի, ցավացող ծնողը կանգնած է, բայց ես տեսնում եմ լկտիություն բանակի նկատմամբ, նախարարի նկատմամբ, ես տեսնում եմ թույն մեջները: 20 տարեկան պոչիկներով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները, ու էդ լակոտների բերանների արտահայտություններն անձնական վիրավորանք են հասցնում: Երբ փսլնքոտ լակոտը երկիր պահած, երկրի համար տուժած մարդուն վիրավորում է լկտի բացականչություններով, ես դա չեմ հանդուրժելու...: Նրանք անպատվում են պաշտպանության նախարարին, ասելով՝ էդ միոտանին: Ես ասում եմ՝ էդ չորստանիններիցդ շատ գործ է անում մեր միոտանին, չէ որ էդ մարդն ինչ որ արել է, ես չեմ պաշտպանում, արել է էս երկրի համար, որ էդ ոտքը կորցրել է»:

15.10.2011թ. «Զինուժ» ծրագրում Վ. Գասպարյանի կողմից տրված հարցազրույցի էլեկտրոնային կրիչում առկա է հետևյալ կարծիքը.

«Ոնց կարող է ցավալ մարդու սիրտ մի երկրի բանակի համար, երբ ֆինանսավորվում ու աշխատավարձ է ստանում ուրիշ երկրից: Ոնց կարող է մարդու սիրտ ցավա, երբ մտածում է՝ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատել: Այդ մարդիկ ովքեր դրանով զբաղվում են անհայրենիք, աներկիր, անշնորք, ուրիշին դուր գալու, ուրիշին ծառայելու, նոքարի, սեփական արժանապատվությունը չունեցող երևույթներ են...»:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայց էր ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող) և խնդրել Դատարանին պարտավորեցնել Պատասխանողին լրատվական նույն միջոցով հերքել իր կողմից զրպարտություն համարվող տեղեկությունները և նրանից հոգուտ Հայցվորի բռնագանձել վերջինիս գործարար համբավին պատճառած վնասի հատուցում 10 դրամի չափով:

Դատարանը 20.07.2012թ. վճռել էր.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի հայցն ընդդեմ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանի՝ գրպարտության միջոցով գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին՝ մերժել: Հայցը «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի պատվին և արժանապատվությանը և ՀՀ կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա կազմակերպած, ՀՀ զինված ուժերում որդիներ կորցրած մայրերին վիրավորանք հասցնելու պահանջների մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Դատարանի վճռի դեմ՝ հայցը մերժելու մասով, վերաքննիչ բողոք է ներկայացրել Հայցվորը, որի պատասխան է ներկայացրել Պատասխանող կողմը:

Վերաքննիչ դատարանը 10.09.2012թ. որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու մասին, իսկ 17.10.2012թ. կայացրել է որոշում՝ վերաքննիչ բողոքը մերժելու, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.07.2012թ. թիվ ԵԿԴ 3047/02/11 քաղաքացիական գործով կայացրած վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանն, առաջին հայացքից, իր վճռում կարծես ճանաչել է արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը՝ հղում կատարելով ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին՝ մանրամասն մեջբերելով դրա 1-ին և 2-րդ մասերը: Այնուհետև ընդգծել է, որ.

«Եվրոպական դատարանն իր մի շարք նախադեպերում արտահայտել է այն դիրքորոշումը, որ ազատ արտահայտվելու իրավունքը հանդիսանում է ժողովրդավարական հասարակարության հիմնաքարերից մեկը, դրա **առաջընթացի** և յուրաքանչյուր անհատի **գարգացման** (անգլերենից թարգմանությամբ՝ ինքնադրստորման) հիմնական նախապայմանն է: Պայմանավորված՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝ այն կիրառելի է ոչ միայն «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով ստացվում են կամ համարվում են ոչ վիրավորական կամ անուշադրության առարկա են հանդիսանում, բայց նաև նրանց նկատմամբ, որոնք կարող են **վիրավորել** (անգլերենից թարգմանությամբ՝ **վրդովեցնել**), ցնցել կամ անհանգստացել պետությանը կամ բնակչության որևէ հատվածի: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չկա «ժողովրդավարական հասարակությունը»: Այս ազատությունից հնարավոր են բացառություններ, որոնք, այնուամենայնիվ, պետք է սահմանվեն հստակ և յուրաքանչյուր սահմանափակում պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին» (*Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության/Handyside v. UK*, 07/12/1976, դիմում թիվ 5493/72, 49-րդ պարբերություն, *Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի/Thorgeir Thorgeirson v. Iceland*, 25/06/1992, դիմում թիվ 13778/88, 63-րդ պարբերություն, *Գուջան ընդդեմ Մոլդովայի/Guja v. Moldova*, 12.02.2008, դիմում թիվ 14277/04, 69 (i) պարբերություն, *Ջերսիլդն ընդդեմ Դանիայի/Jersild v Denmark*, 23/09/1994, դիմում թիվ 15890/89, 31-րդ պարբերություն, *Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի/Hertel v Switzerland*, 25/08/1998, դիմում

թիվ 25181/94, 46-րդ պարբերություն, *Սթիլը և Մորիսն ընդդեմ ՄԹ/Steel and Morris v United Kingdom*, 15/02/2005, դիմում թիվ 68416/01, 87-րդ պարբերություն, *Ֆրեսոզը և Ռուանն ընդդեմ Ֆրանսիայի/Fressoz and Roire v. France*, 21.01.1995, դիմում թիվ 29183/95, (Մեծ պալատ), 45-րդ պարբերություն, *Վոգթն ընդդեմ Գերմանիայի/Vogt v. Germany*, 26.09.1995, դիմում թիվ 17851/91, 52-րդ պարբերություն, *Ֆիլիպովիկն ընդդեմ Սերբիայի/Filipovic v. Serbia*, 20.11.2007, դիմում թիվ 23935/05, 53-րդ պարբերություն):

Բացի այդ, Դատարանը, հղում է կատարել ՄԻԵԴ-ի *Էքսը և Ուայն ընդդեմ Նիդեռլանդների (X and Y v. the Netherlands*, 26.03.1985, դիմում թիվ 8978/80, 91-րդ պարբերություն) նախադեպին՝ նշել է, որ ազատ արտահայտվելու իրավունքը ժողովրդավարության առանցքային նախապայմաններից մեկն է և որ այս իրավունքի իրական և արդյունավետ իրացումը կախված է ոչ միայն պետության չմիջամտելուց, այլ նաև պահանջում է պաշտպանության դրական միջոցներ նույնիսկ անհատների միջև հարաբերությունների ոլորտում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այս նախադեպն ըստ էության անձի մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանության մասին է, որն ամրագրված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով, իսկ Դատարանի մեջբերած պարբերությունը, որը 23-րդն է վճռի տեքստում, այլ ոչ՝ 91-րդը, վերաբերում է հենց այս իրավունքին, այլ ոչ՝ արտահայտվելու ազատությանը:

Դատարանը նշել է նաև, որ.

«որպեսզի խոսքի և կարծիքի ազատ արտահայտվելու իրավունքը լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայությունն արժևորող դատողությունների և այն անձնավորության միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների գրապարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձնավորության հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որպեսզի սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել որպես քննադատության թիրախ (*Դյուլդին և Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության/Dyuldin and Kislov v. Russia*, 31/07/2007, դիմում թիվ 25968/02, 38-րդ պարբերություն)»:

Սակայն Դատարանի կողմից վկայակոչված վերոնշյալ գործով ՄԻԵԴ-ը հստակորեն սահմանել է.

«զնահատելու համար, թե ինչպիսի միջամտություն է անհրաժեշտ «ժողովրդավարական հասարակությունում» գրապարտության գործով, դատարանը պետք է քննության առնի հրապարակված կամ հեռարձակված նյութը որպես միասնական ամբողջություն՝ պարզելու վերջինիս ընդհանուր իմաստը և նպատակը: Բառերը պետք է մատնանշեն Հայցվորին որպես անձ, ում դեմ ուղղված է արատավորող արտահայտությունը: Խիստ էական է որ դատարանը դիտարկի այն համատեքստը, որում արվել է հրապարակումը»:

Ներպետական դատարանը գտել է նաև, որ ՄԻԵԴ-ն իր իրավական դիրքորոշում-

ներով պաշտպանում է բացասական կարծիքի կամ գնահատողական դատողության արտահայտումը այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել՝ գնահատողական դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատողական դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Արտահայտության՝ գնահատող դատողություն որակվելու դեպքում, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա: Եվ վերջապես՝ ՄԻԵԿ-ը հստակ տարանջատում է կատարում փաստերի և գնահատողական դատողությունների միջև, որի վերաբերյալ ձևավորվել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը», ամրագրում է ներպետական Դատարանը՝ հղում կատարելով *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46-րդ պարբերություն)* ՄԻԵԿ-ի որոշմանը:

Սակայն այս գործի առանձնահատկությունից ելնելով՝ խոսքի ազատության կարևորության հետ մեկտեղ, անհրաժեշտ է ուսումնասիրել և քննարկել վեճի առարկան ՄԻԵԿ-ի 10(2)-րդ հոդվածի լույսի ներքո, որը նախատեսում է, որ արտահայտվելու ազատության իրավունքի իրականացումն իր հետ բերում է «պարտականություններ և պատասխանատվություն»: Եվ սա չի նշանակում, որ 10(2)-րդ հոդվածը չի կարող կիրառվել մի գործում, որը վերաբերում է կարծիքի, այլ ոչ՝ փաստական տվյալի: Նույնիսկ կարծիքի պարագայում պետք է գոյություն ունենա որևէ հաստատված կամ ընդունված փաստական հիմք այդ կարծիքն արտահայտելու համար, որը պետք է արտահայտված լինի բարեխղճորեն (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 46-րդ պարբերություն*, տես նաև *Պրազերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager & Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37-րդ պարբերություն*):

ՄԻԵԿ-ը համապատասխան դիրքորոշում է հայտնել նաև *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02, 41-րդ պարբերություն)* գործում, մասնավորապես.

«Դատարանը հիշեցնում է, որ երբ նույնիսկ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց»:

Դատարանը չի վերլուծել, թե արդյոք կարելի է պնդել, որ Պատասխանող կողմը գործել է բարեխղճորեն և ճշգրիտ փաստական հիմքի վրա, ինչպես նաև տրամադրել «արժանահավատ և ճշգրիտ տեղեկատվություն» երբ 17.10.2011թ. www.hraparak.com

am էլեկտրոնային էջում և 15.10.2011թ. «Զինուժ» ծրագրում հրապարակված հարցազրույցներում կատարել է հայցադիմումի հիմք հանդիսացած արտահայտությունները:

Բնականաբար այս ամենն առավել խիստ գնահատման է ենթակա հատկապես այն պարագայում երբ դատական պաշտպանություն է հայցում իրավապաշտպան կազմակերպությունը պաշտոնատար անձի կողմից հնչեցված հայտարարություններից և գնահատականներից: Այս առումով Դատարանի կողմից պետք է հաշվի առնվեր Պատասխանողի զբաղեցրած պաշտոնն ու ազդեցությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատասխանողը հանդիսանում է ՀՀ ոստիկանապետ, ինչը ևս չի կատարվել ներպետական դատարանի կողմից:

Առաջին ատյանի դատարանի վճռի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Առաջին ատյանի Դատարանը ոչ լիարժեք, երբեմն նույնիսկ սխալ հետևության հանգեցնող մեկնաբանությամբ է վերլուծել ՄԻԵԿ-ից բխող մի քանի էական սկզբունքներ, որոնք ուղղակի ազդեցություն են ունեցել սույն գործի վրա և վերոգրյալն անելիս իբրև իր մեկնաբանությունների հիմնավորում վկայակոչել է ՄԻԵԿ-ի նախադեպեր, սակայն ոչ ձիշտ ընտրություն է կատարել մեջբերվող պարբերության տողերի միջև:

Դրանք են՝

- հոդվածի հանրային նշանակության,
- Հայցվորի և Պատասխանողի կարգավիճակի,
- փաստական տվյալների և գնահատողական դատողությունների տարբերակման,
- փոխհատուցման համաչափության հարցերը:

Հաշվի առնելով վիրավորանքի և զրպարտության տարբերակման կարևորությունը յուրաքանչյուր գործով՝ առաջին ատյանի Դատարանի վերլուծությունը պետք է կառուցվեր գնահատողական դատողության և փաստական տվյալի միջև տարբերակում կատարելու և դրանով պայմանավորված՝ ապացուցման պահանջվող աստիճանի շուրջ, քանի որ գնահատողական դատողության և այն պաշտպանող փաստերի միջև կապը կարող է տարբեր լինել կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով (*Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի/Feldek v. Slovakia*, 12/07/2001, դիմում թիվ 29032/95, 75-րդ պարբերություն): Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց (*Դիչանդը և այլքը ընդդեմ Ավստրիայի/Dichand and Others v. Austria*, 26/02/2002, դիմում թիվ 29271/95, 41-րդ պարբերություն):

ՄԻԵԴ-ի վճիռների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ցանկացած վիճարկվող արտահայտություն դիտարկելիս Դատարանը հաշվի է առնում ամբողջական հոդվածի բովանդակությունը և համատեքստը (*Պերնան ընդդեմ Իտալիայի/Perna v. Italy*, 06/05/2003, դիմում թիվ 48898/99, 45-րդ պարբերություն, *Մարոնեքն ընդդեմ Սլովակիայի/Maronek v. Slovakia*, 19/04/2001, դիմում թիվ 32686/96, 53-րդ պարբերություն), որևէ բառակապակցության իմաստ չի բացահայտվում հոդվածի համատեքստից կտրված: Մինչդեռ տվյալ դեպքում առաջին ատյանի Դատարանը, ակնհայտորեն շեղվելով ՄԻԵԴ-ի ձևավորած նախադեպային պրակտիկայից, վարվել է ուղիղ հակառակ կերպ՝ հստակորեն շեշտելով, որ.

«Դատարանը ... «...20 տարեկան պոչիկներով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները...» արտահայտության մեջ **չի տեսնում ո՛չ վիրավորանք և ո՛չ էլ գրպարտություն** որոնք կարատավորեին Կազմակերպության գործարար համբավը, քանի որ դա վերացական, առանց կոնկրետ հասցեատիրոջ, անձանց անորոշ շրջանակի ուղղված գնահատող դատողություններ են»:

Դատարանն, անդրադառնալով «20 տարեկան պոչիկով լակոտներ» և «չորստանիներ» արտահայտություններին, գտնում է, որ դրանք ուղղված են ոչ Հայցվորին, այլ ՀՀ պաշտպանության նախարարին վիրավորանք հասցրած անձանց, ինչը հստակ երևում է այդ հոդվածում:

Ներպետական դատարանը նշում է նաև, որ. ««Հելսինկյան կազմակերպություններ» արտահայտությունը չի հանդիսանում Հայցվոր կազմակերպության անվանումը, քանի որ վերջինս կոչվում է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ»:

Դատարանը 15.10.2011թ. «Զինուժ» ծրագրում Վ. Գասպարյանի կողմից տրված հարցազրույցի էլեկտրոնային կրիչում առկա արտահայտությունների մեջ ևս գրպարտության և վիրավորանքի տարրեր չի տեսնում՝ պատճառաբանելով, որ.

««...Այդ մարդիկ ովքեր դրանով զբաղվում են անհայրենիք, աներկիր, անշնորք, ուրիշին դուր գալու, ուրիշին ծառայելու, նոքարի, սեփական արժանապատվությունը չունեցող երևույթներ են...» արտահայտված կարծիքները նորից ուղղված են մարդկանց անորոշ շրջանակի, այլ ոչ թե կոնկրետ Հայցվոր կազմակերպությանը: Տվյալ պարագայում էլ Պատասխանողի կարծիքը կոնկրետ հասցեատեր չունի, իսկ աներկիր, անշնորք և նմանատիպ այլ որակումները Պատասխանողը ներկայացրել է այն մարդկանց ովքեր ֆինանսավորվում ու աշխատավարձ են ստանում ուրիշ երկրից և մտածում են, որ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատել» շարունակում է բացահայտել դատարանը. «Պատասխանող Վ. Գասպարյանը 15.10.2011թ. «Զինուժ» ծրագրում ընդամենը քննադատել է հասրակության մեջ տեղ գտած բացասական երևույթները և ոչ թե կոնկրետ մարդկանց, դեռ ավելին՝ կոնկրետ Հայցվոր կազմակերպությանը»:

Դատարանն իրավացի է համարում Պատասխանող կողմի պնդումն առ այն, որ անձը չի կարող իր սուբյեկտիվ ընկալումների արդյունքում որևէ տեղեկատվություն

վերագրել կամ չվերագրել իրեն, ինչպես նաև այն, որ տեղեկատվության վերաբերելիությունն անձին պետք է լինի հստակ և որոշակի, հետևաբար, ներկայացված կարծիքը չի վերաբերում Կազմակերպությանը և այդ կապակցությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտություն չկա:

Ավելի հանգամանալից և համալիր ուսումնասիրության ենթարկելով հողվածները, սակայն, ակնհայտ է դառնում թե՛ դեպքերի զարգացման հերթականությունը թե՛ Վ. Գասպարյանի կողմից հնչեցված տարաբնույթ հայտարարությունների իրական հասցեատերերը և թե՛ ըստ Պատասխանողի «գնահատողական դատողությունների» հիմք հանդիսացած իրադարձությունները, և այս ամենը ներպետական Դատարանը պարտավոր էր խոր վերլուծության ենթարկել, ինչը չի կատարել:

Մեկ այլ կարևոր սկզբունք է հանդիսանում ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքում հաստատված հետևյալ սկզբունքը. «Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար» (*Մահմուդովն ընդդեմ Ադրբեյջանի/Mahmudov v. Azerbaijan*, 18/12/2008, դիմում թիվ 35877/04): Այս սկզբունքը հատկապես շեշտադրվել է քրեական բնույթի հայտարարությունների համատեքստում:

Բոլոր վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո Դատարանը պետք է առնվազն քննարկեր վերը թվարկված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման հնարավորությունը՝ հաշվի առնելով հայտարարություններում տեղ գտած «հովանավորման», «ֆինանսավորվում ու աշխատավարձ են ստանում ուրիշ երկիրից» ձևակերպումները, դատարան հայց ներկայացրած սուբյեկտներին, **տեղեկատվության աղբյուրի** (Պատասխանողի անձը և զբաղեցրած պաշտոնը), արված հայտարարությունների արատավորող բնույթի և աստիճանի հարցերը, ինչը չի կատարվել:

Փոխարենը՝ Դատարանը, որդեգրելով Պատասխանողի դիրքորոշումը, որևէ կերպ չի փորձել նույնիսկ գնահատել կամ սահմանազատել «գնահատողական դատողություն» ու «փաստական տվյալ» հասկացությունները, շարունակում է հաստատել Պատասխանողի այն թեզը, որ կատարված արտահայտությունները գնահատողական դատողություններ են, ոչ թե փաստական տվյալներ, ուստի և չունեն ապացուցման անհրաժեշտություն և որ այդ արտահայտություններն իրենց բովանդակությամբ վիրավորանք և զրպարտություն չեն պարունակում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Նախ երկու դեպքում էլ կատարված արտահայտություններն ուղղված են անձանց անորոշ շրջանակի և կոնկրետ Կազմակերպության անվանումը ոչ մի կերպ չի հիշատակվում, այսինքն, երկու դեպքում էլ ընդհանուր արտահայտությունների տրամաբանությունից հետևում է, որ Հայցվոր «Հելիսնկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» Հ/Կ–ն չէ քննադատվում Պատասխանող Վ. Գասպարյանի կողմից, հետևաբար, արված արտահայտությունը չի արատավորում Հայցվոր Կազմակերպության գործարար համբավը»:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ դատարանն ուներ անհրաժեշտ և բավարար հիմքեր, հստակորեն գնահատման ենթարկելով հարցազրույցների համատեքստն իր ամբողջության մեջ, արձանագրելու, որ ՀՀ տարածքում որպես «Հելսինկյան կազմակերպություն» հայտնի է թվով 4 կազմակերպություն և հասարակության լայն շրջանակներին հայտնի չէ դրանց իրական և լրիվ անվանումները, ուստի այս պարագայում առաջնորդվելով, օրինակ, Բրիտանական իրավունքի փորձով³, կարելի է հանգիստ պնդել, որ այդ կազմակերպություններից յուրաքանչյուրն իրավունք ուներ դիմելու դատարան՝ պաշտպանության հայցերով: Բացի այդ, ՄԻԵԴ–ն իր *Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի* (*Thoma v. Luxemburg*, 29/03/2001, դիմում թիվ 38432/97, 56–րդ պարբերություն) վճռով ամրագրել է.

«Դատարանն ի սկզբանե նշել է, որ կար առանձնահատուկ հատկանիշ, որը հարկ էր հաշվի առնել՝ ելնելով երկրի չափերից և Լյուքսեմբուրգում Ջրային և անտառային տնտեսության հանձնաժողովի պաշտոնատար անձանց սահմանափակ թվից: Չնայած դիմումատուի դիտողությունները ծրագրի ընթացքում արվել են առանց որևէ մեկի անունը հիշատակելու, խնդրո առարկա պաշտոնատար անձանց ունկնդիրը կարողացել է հեշտորեն նույնականացնել»:

Այս պարագայում, լծվելով այդ համալիր վերլուծությանը՝ Դատարանը կտեսներ, որ իրավապաշտպան կազմակերպություններից հենց Հայցվորի կազմակերպությունն էր կազմակերպել բողոքի ակցիան, հենց այդ ակցիայի մասնակիցներին էր ուղղված Պատասխանողի՝ ոստիկանապետի, հարցազրույցներում համապատասխան արտահայտությունները:

Բացի այդ Դատարանի կողմից որևէ գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, որ դատավարության ընթացքում Պատասխանողն այդպես էլ չէր հերքել Հայցվորին նկատի ունենալու հանգամանքը՝ չտալով այն հարցի հստակ պատասխանը, թե «Արդյոք Պատասխանողը նկատի էր ունեցել Հայցվորին», իսկ Պատասխանողի պնդումները ոչ այլ ինչ են եղել, քան ընդամենը հնարամիտ պաշտպանության հնարք: Այս ամենը ևս ակնհայտ է դառնում խնդրո առարկա հողվածների, դեպքերի զարգացման համատեքստի համալիր և ընդհանրական վերլուծության արդյունքում, ինչը չի կատարվել:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանին, ապա այն ավելի հեռուն է գնացել և ասել:

«Ինչ վերաբերում է «Հելսինկյան կազմակերպություններ» արտահայտությանը, ապա դա չի նշանակում, որ խոսքը գնում է հենց Հայցվորի մասին, քանի որ վերջինս կոչվում է՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ և նման տրամաբանությամբ կարելի է ենթադրել, որ կազմակերպության անվանումի մեջ ներառած յուրաքանչյուր բառի գործածման դեպքում, կազմակերպությունը պետք է ենթադրեր, որ խոսքը իրենց է վերաբերում:

«Զինուժ» ծրագրում Պատասխանողի կողմից 15.10.2011թ. տրված հարցազրույցում առկա արտահայտությունների մեջ ևս զրպարտության և վիրավորանքի տարրեր առկա չեն, և ար-

³ Geoffrey Robertson, QC and Adrew Nicol, QC, *Media Law*, p. 118

տահայտած կարծիքը կրկին ուղղված է մարդկանց անորոշ շրջանակի, այլ ոչ թե կոնկրետ Հայցվորին:

Վերոնշյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում Պատասխանող կողմը ընդամենը քննադատել է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները և ոչ թե կոնկրետ անձանց, այդ թվում նաև՝ Հայցվորին, նկատի ունենալով նաև այն փաստը, որ Հայցվորը, հանդիսանալով հասարակական կազմակերպություն, նպատակ է հետապնդում աջակցելու ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը, այսինքն՝ ըստ էության կողմ է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթների բացահայտման և քննադատման գործընթացին»:

Մնացած մասով վերաքննիչ դատարանը գրեթե նույնությամբ կրկնել է ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշումը:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «ՀՐԱՊԱՐԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ

Գործի փաստական հանգամանքները

21.04.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 73/684/ համարում հրապարակվել է հողված, որում տեղ է գտել հետևյալ պարբերությունը.

««Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը՝ հայտնի Մարտը, պարբերաբար ստուգայցեր է կատարում ՀՀ զորամասերում: Նա աչքի է ընկնում իր կոպիտ վարքագծով՝ զորամասերում թերություններ, խախտումներ հայտնաբերելիս գերծ չի մնում հայհոյանքներից: Մեր տեղեկություններով, վերջին այցերից մեկի ժամանակ ԼՂՀ զորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Մարգարիտա Խաչատրյանի և հրամանատարական կազմի միջև, և բանը հասել է նույնիսկ քաշքշոցի ու ծեծի: Սակայն տիկին Մարգարիտան հերքեց դա. «Տենց բան չկա, բալես, ինձ գլխի վրա են ընդունել: Ես բալա եմ տվել, ես Տանջոյի մաման եմ, ու հլը չկա տենց մարդ, որ Տանջոյի մամային ասի՝ քամին գա քեզի: Ես 20 հատ մեղալ եմ ստացել, եթե ինձ քաշքշեին, ես մեղալակիր չէի ըլնի»»:

Մարգարիտա Խաչատրյանը (այսուհետ՝ Հայցվոր) հայց է ներկայացրել Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի (այսուհետ՝ Պատասխանող)՝ խնդրելով

1. հարկադրել «Հրապարակ» օրաթերթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տպագրել 2011թ. ապրիլի 21-ին նույն թերթի թիվ 73(684) համարի 1-ին էջում, հրապարակված հողվածի հերքումը,
2. «Հրապարակ» օրաթերթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոխհատուցել իրեն պատճառված բարոյական վնասը՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով,
3. «Հրապարակ» օրաթերթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոխհատուցել՝ սույն հայցի համար վճարված պետական տուրքի գումարը:

Դատարանը կայացրել է վճիռը 2012թ. հուլիսի 30-ին, որով մերժել է հայցն ամբողջությամբ՝ պաշտպանելով հրապարակող ընկերության և լրագրողի արտահայտվե-

լու ազատության իրավունքը: Հայցվորը բողոքարկել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը 27.08.2012թ.: Վերաքննիչ դատարանը ընդունել է այն վարույթ 11.09.2012թ. և նշանակել դատաքննություն 09.11.2012թ.:

Խոսքի ազատության կարևորությունը

Դատարանն իր վճռում չի անդրադարձել արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությանը, ինչի կապակցությամբ կարող էր հղում կատարել ՄԻԵԴ–ի համապատասխան *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72)* նախադեպային վճռին: Այնուամենայնիվ, Դատարանը քննարկել է միջազգային պրակտիկայում ձևավորված՝ **«ողջամիտ հրապարակման»** պաշտպանության սկզբունքը, որի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ առանց տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու դիտավորության՝ հղում կատարելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007թ. հոկտեմբերի 4–ին ընդունված թիվ 1577(2007) բանաձևին զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ, որում ընդգծվել է, որ.

«... Հանրային շահից բխող հայտարարությունները, եթե նույնիսկ ապացուցվում է դրանց ոչ ճշմարիտ լինելը, չպետք է լինեն պատժելի, եթե դրանք կատարվել են առանց դրանց ոչ հավաստի լինելու փաստի իմացության, առանց վնաս պատճառելու դիտավորության և դրանց ճշմարտացիության ստուգման համար համապատասխան ջանքեր են գործադրվել»:

Այս առումով Դատարանը կարող էր վկայակոչել մասնավորապես ՄԻԵԴ–ի *«Ալիթիա հրատարակչական ընկերություն» ՍՊԸ–ն ու Կոնստանտինիդեսն ընդդեմ Կիպրոսի (Alithia Publishing Company LTD and Constantinides v Cyprus, 22/05/2008, դիմում թիվ 17550/03, 49–րդ պարբերությամբ)* ամրագրված է, որ.

«Նախորդ գործերով, երբ Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք թերթին պետք է ազատել մասնավոր անձանց արատավորող փաստական տվյալներն ստուգելու իր սովորական պարտականությունից, Դատարանն իր հայեցողությամբ որոշում է ընդունել՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, այդ թվում՝ արատավորող տեղեկությունների բնույթը և աստիճանը և թե որքանով թերթը ողջամտության սահմաններում կարող էր իր աղբյուրները ողջամիտ համարել մեղադրանքի հետ համեմատ (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 66–րդ պարբերություն*): Այս գործոններն, իրենց հերթին, պահանջում են հաշվի առնել մի շարք տարրեր, ինչպիսիք են աղբյուրի հեղինակավոր լինելու հանգամանքը (*Բլադետ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*), արդյոք թերթը ողջամտության սահմաններում ուսումնասիրել է նյութը հրապարակումից առաջ (*Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն*), արդյոք թերթը ներկայացրել է նյութը ողջամտորեն հավասարակշռված կերպով (*Բերգենս Տիդենդե և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway, 02/05/2000, դիմում թիվ 26132/95, 57–րդ պարբերություն*) և արդյոք թերթը զրպարտության թիրախը հան-

դիսացող անձին տվել է պաշտպանվելու հնարավորություն (*Բերգենս Տիքենդեն և այլոք ընդդեմ Նորվեգիայի/Bergens Tidende and Others v. Norway*, 58-րդ պարբերություն): Այսպիսով, թերթին արատավորող փաստական տվյալները կանխավ ստուգելու պարտականությունից ազատելը Դատարանի նախադեպային իրավունքին համահունչ կիրառելու համար ներպետական դատարանները պետք է դրսևորեն հայեցողություն՝ հաշվի առնելով քննության ենթակա գործի առանձնահատուկ հանգամանքները»:

Եռաստիճան թեսթը

Տվյալ դեպքում Դատարանը վճռի պատճառաբանական մասում չի պահպանել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված եռաստիճան թեսթը: Մասնավորապես՝ Դատարանն իր վճռում պետք է գնահատման ենթարկեր, թե արդյոք տվյալ գործով արտահայտվելու ազատության սահմանափակումը.

7. «սահմանված է օրենքով» և
8. «հետապնդում է իրավաչափ նպատակ» և
9. «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այդուհանդերձ, Դատարանը ճիշտ է վերլուծել այն հարցը, թե արդյոք կարելի է պնդել, որ Պատասխանող կողմը գործել է բարեխղճորեն և ճշգրիտ փաստական հիմքի վրա, ինչպես նաև, թե արդյոք վերջինս տրամադրել է «արժանահավատ և ճշգրիտ տեղեկատվություն»՝ փաստերի ճշմարտացիության ստուգման համար անհրաժեշտ և բավարար ջանքեր գործադրելով և առաջնորդվելով «**ողջամիտ հրապարակման սկզբունքով**: Այդ կապակցությամբ ՄԻԵԴ-ն իր *Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի (Pedersen and Baadsgaard v Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78-րդ պարբերություն)* վճռում ամրագրել էր, որ.

«լրագրողները պետք է գործեն բարեխղճորեն, ճշգրիտ փաստական հիմքի վրա և տրամադրեն «արժանահավատ և ճշգրիտ» տեղեկություններ լրագրողական էթիկային համապատասխան... այս «պարտականություններն ու պատասխանատվությունը» կարևորություն են ստանում, երբ խոսքը գնում է կոնկրետ անձի հեղինակության նկատմամբ ոտնձգությունների և «այլոց իրավունքների» խախտումների մասին: Այսպիսով՝ հատուկ հիմքեր են պահանջվում, որպեսզի լրատվամիջոցներն ազատվեն մասնավոր անձանց հասցեին արված զրպարտչական փաստական տվյալներն ստուգելու սովորական պարտականությունից»:

Դատարանը հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածին, որի 5-րդ մասի 2-րդ կետը նույնպես ամրագրում է ողջամիտ հրապարակման երաշխիքը՝ սահմանելով, որ փաստացի տվյալներ հրապարակելը չի համարվում զրպարտություն, եթե.

«դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները»,

Դատարանն անդրադարձել է նաև միջազգային պրակտիկային, որը նույնպես վկայում է, որ հասարակական գործիչների առնչությամբ «գրպարտություն» պարունակող նյութի հրապարակումը չի կարող դիտարկվել որպես ողջամիտ կամ իրավաչափ, բացառությամբ այն դեպքերի, երբ.

1. ապացուցվում է, որ առկա էին ողջամիտ հիմքեր՝ վստահելու տեղեկատվության իսկությանը,
2. ապացուցվում է, որ ձեռնարկվել են տեղեկատվության իսկությունն ստուգելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները, ներկայացվել են տեղեկատվության ստուգման հնարավորության ամբողջական սահմանները,
3. գրպարտություն պարունակող նյութը հրապարակող անձը հիմք ուներ վստահելու տեղեկատվության իսկությանը: Նման նյութի հրապարակումը չի կարող որակվել որպես ողջամիտ կամ իրավաչափ, եթե նման տեղեկատվություն տարածողը չի ստուգել դրա իսկությունը՝ շահագրգիռ անձին հարցում կատարելու միջոցով, և խուսափել է հրապարակել այդ անձի դիրքորոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհնարին է եղել կամ ակնհայտ է, որ դրա անհրաժեշտությունը չկա:

Հրապարակված հոդվածի տեքստի ուսումնասիրության արդյունքում Դատարանն իրավացիորեն գտել է, որ լրագրողը գործել է բարեխղճորեն, մասնավորապես՝ լսելով և նույն հոդվածում հրապարակելով շահագրգիռ անձի դիրքորոշումը հրապարակվող տեղեկությունների վերաբերյալ ըստ էության հերքել է հոդվածի առաջին մասում ներկայացված տեղեկությունները:

Դրանից, ըստ Դատարանի, հետևում է, որ լրագրողը վիճարկվող նյութն այնպես է հրապարակել, որ ընթերցողի /կողմնակի դիտորդի/ մոտ այն միանաշանակորեն չի ստեղծում այնպիսի համոզմունք կամ տպավորություն, որ հոդվածում նշված միջադեպն իրականում տեղի է ունեցել կամ որ Մարգարիտա Խաչատրյանը հանդես է եկել կոպիտ վարքագծով՝ վիճաբանել է և հայիոյել:

Նշվածի վերլուծության արդյունքում Դատարանը գտել է, որ հոդվածը հրապարակելիս լրագրողն ըստ էության ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու հրապարակված փաստացի տվյալների ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը, այսինքն, նա ի սկզբանե Մարգարիտա Խաչատրյանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու, դրանց վնաս պատճառելու ինչպես նպատակ, այնպես էլ դիտավորություն չի ունեցել, իսկ այն հանգամանքը, որ տվյալ պարագայում Պատասխանողն իր տեղեկատվության տարածման առաքելությունն իրականացրել է բարեխղճորեն՝ հիմնվելով Հայցվորի վերաբերյալ առկա տեղեկատվության վրա, ձեռնարկել է միջոցներ այս կապակցությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու համար և պարտավորվել ներկայացնել Դատարանին, ինչպես նաև համապատասխան հղումներ կատարելով <http://www.armtimes.com/25242> կայքէջի վկայակոչած էլեկտրոնային տեղեկատվության բաժնում 24.04.2011թ. տպագրված «Մի փոքր»

Հ/Կ-ների կյանքից» վերնագրով հոդվածին, www.hra.am/am/events/2010/10/15/soldier կայքէջի վկայակոչված էլեկտրոնային տեղեկատվության բաժնում 15.10.2010թ. տպագրված «Ինչով է զբաղված «Զինվոր» հասարակական խորհուրդը» վերնագրով հոդվածին և www.armtown.com/news/am/zam/20071203/7685/ կայքէջի վկայակոչված էլեկտրոնային տեղեկատվության բաժնում 03.12.2007թ. տպագրված «Բանակում զոհերի թիվը հասել է 40-ի» վերնագրով հոդվածին, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պատասխանողը չի խուսափել տեղեկատվության իսկությունը ստուգելուց՝ շահագրգիռ անձին հարցում կատարելու և այդ անձի դիրքորոշումը հրապարակելու միջոցով, Դատարանը գտել է, որ Պատասխանողը պատշաճ ուսումնասիրել է լուսաբանվող հարցը և բավարար ապացույցներ է ձեռք բերել, որոնց համադրված վերլուծության պարագայում պարզ է դառնում, որ հայցադիմումի հիմք ծառայած հոդվածում առկա տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը կամ առնվազն ունի փաստական համապատասխան հիմք: Հետևաբար, նա ենթակա չէ պատասխանատվության զրպարտություն համարվող տեղեկություններ տարածելու համար: Ուստի Հայցվոր Մարգարիտա Խաչատրյանի կողմից պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու պահանջը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է Պատասխանողի այն պատճառաբանությանը, որ հայցը ենթակա է մերժման հերքման պահանջ ներկայացնելու արտադատարանական կարգը չպահպանելու հիմքով, ապա Դատարանն իրավացիորեն գտել է, որ արտադատարանական կարգով խախտված իրավունքի վերականգնման համար զանգվածային լրատվամիջոցին դիմելը պարտադիր պայման չէ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ԱՐԱ ԳԱԲՈՒԶՅԱՆՆ
ԸՆԴԴԵՄ «ԲԱՆԱՁԵՎ» ՍՊԸ, ԼՐԱԳՐՈՂ ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԵՎ ՍԻՐԵԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ**

Գործի հանգամանքները

Սիրեկան Եղիազարյանը 2010թ. դիմել է ԵՊՀ «Իրավագիտության» ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության քննություն հանձնելու համար: Քրեական իրավունք առարկայից 20 հնարավորից ստացել է 5 միավոր: Անցողիկ միավոր է համարվում 8 միավորը: Քննության արդյունքների վերաբերյալ Սիրեկան Եղիազարյանը բողոք է ներկայացրել ՀՀ կրթության և գիտության նախարարություն, որի արդյունքներով Սիրեկան Եղիազարյանի գրավորը վերանայվել է ԵՊՀ «Իրավագիտության» ֆակուլտետի «Քրեական իրավունքի» ամբիոնի կողմից և հաստատվել գնահատականի հիմնավոր լինելը:

«Բանաձև» ՍՊԸ-ի կողմից պատրաստվող «Ականատես» հաղորդումը հեռարձակվել է 2011թ. մայիսի 28-ին Հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքով, և տեղադրվել համաշխարհային համակարգչային ցանցում: Հաղորդումը հեռարձակվել է «Իրավախախտ իրավագետը» վերնագրով: Հաղորդման ընթացքում հաղորդավարի կողմից թույլ են տրվել հետևյալ արտահայտությունները.

««Մայր բուհում դիմորդի գրավորը անբավարար են գնահատել առանց բովանդակությունը ստուգելու՝ միայն ծավալին նայելով».

«Անատեսը» բացահայտում է համալսարանի պրոռեկտորի սխալը, դասախոսի խաբեությունը...».

«Այսօրվա մեր ականատեսը արդարության ու օրենքի սիրահար է, իր իրական պատմությունը ներկայացնում, բողոքում ու պայքարում է, որովհետև օրենքը խախտել են, թեև լավ է հասկանում, որ այս հաղորդումից հետո Երևանի պետական համալսարանի դռները գուցե ընդմիշտ փակվեն նրա առջև».

«Այն ինչ կլսեք հիմա, ցավոք սրտի, հումոր չէ: Սիրակ Եղիազարյանը գալիս է Երևան, որ սովորի ու մագիստրոսի կոչում ստանա մայր ԲՈՒՀ-ում: Քննությունները հանձնում է ու ստա-

նում անբավարար: Արդյունքների բողոքարկումն ու բացահայտումը, որ գրավորը իրականում բավարարից մի բան էլ ավելիին էր արժանի...: Սիրակը չէր խոսի, եթե մեկ դասախոսի սխալը ուղղեր և օգնության հասներ նախարարությունը...: Մայր բուհը պատուհաս է դառնում».

Քննության արդյունքի մասին բացատրություն ստանալու փոխարեն Սիրակը լսում է. «Կարևորը գրավորի ծավալն է, թե քանի էջ ես լցրել».

«Խնդրի լրջությունը գնահատականից հեռու է գնում. իրավաբաններն ակնհայտ կասկած ունեն, որ գործը կոռուպցիոն ռիսկեր ունի: Դիմում են կրթության գիտության նախարարություն, որ գործն ուսումնասիրեն և հավանական կոռուպցիան կանխեն...: Թաքնված կոռուպցիայի կասկած հայտնում է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ...: Սիրակը այդպես էլ չընդունվեց մայր ԲՈՒՀ, որովհետև պատրաստված չէր, թե որովհետև քննող դասախոսն էր կամայականություն դրսևորել: Սխալներ գտնելու համար նախարարությունը նայեց ամեն տեղ բացի այնտեղից, որտեղ սխալներ հաստատ կգտներ».

«Իրավաբան փորձագետը լուրջ կասկածներ ունի, որ մայրաքաղաքում չապրող ուսանողներին համալսարանի «Քրեական իրավունքի» ամբիոնում խեթ են նայում ու խախտում հավասարության իրավունքը».

«Համալսարանի իրավագետները այլահավաժության մի նոր ալիք են սկսել».

«Ինչ պայքար կոռուպցիայի դեմ, եթե դրա դեմ պայքարելու կոչվածները լռում են».

«Պատմությունը մեկ դասախոսի կամ մեկ ամբիոնի սխալն է. սա դեռ չի նշանակում, որ ապականված է ամբողջ կրթական համակարգը: Բայց որպեսզի մեկ մեղավորը պատժվի, ու նրա վատ օրինակը մոլախոտի պես արագ չտարածվի, պետք է որ գերադաս մարմինը ...».

«Մեր տեսախցիկն... ամեն ինչ որսում է ու գուցե այս պահին հերթական խաբեբային...».

Հաղորդման ընթացքում Սիրեկան Եղիազարյանի կողմից թույլ են տրվել հետևյալ արտահայտությունները.

«Նրանք ասում են. «Մենք աշխատում ենք ծավալի վրա, մեզ բովանդակությունը չի կարևոր».

«Ես ականատես եմ եղել կրթության ոլորտում իրականացված մի գործողության, որն իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկ».

«Եթե մասնագետներն ուսումնասիրեն, կարող են վստահորեն ասել, որ չի համապատասխանում, քննության արդյունքները չի համապատասխանում իրականությանը: ... ըստ մասնագետների իմ գրավոր աշխատանքն ավելի քան հինգ միավոր էր և ավելի քան ութ միավոր էր: Այսինքն մինիմալ գնահատական էր, որն անցողիկ էր Երևանի պետական համալսարանում».

«Զավեշտալին այն է, որ պարոն Գաբրուլյանը և նրա նմանները կարևորում են ոչ թե օրենքի հղումը ճիշտ կատարելը, այլ սպիտակ թուղթը սևացնելը»:

Սոնա Հարությունյանի նկատմամբ Հայցվորները պահանջ են ներկայացրել նոյեմբերի 29-ին 2011թ.-ին:

Դիմելով դատական պաշտպանության՝ ԵՊՀ-ն և նույն ԲՈՒՀ-ի դասախոս Ա. Գաբուզյանը խնդրել էին պարտավորեցնել Պատասխանողներին հրապարակայնորեն բանավոր ներողություն խնդրել ԵՊՀ-ից և հերքել վերջինիս վերաբերյալ զրպարտություն համարվող փաստացի տվյալները, իսկ Սիրեկան Եղիազարյանին և «Բանաձև» ՍՊԸ պարտավորեցնել հրապարակայնորեն բանավոր ներողություն խնդրել նաև Հայցվոր Արա Գաբուզյանից և հերքել վերջինիս վերաբերյալ զրպարտություն համարվող փաստացի տվյալները՝ տեղադրելով այդ տեսանյութը նաև հաղորդաշարի ինտերնետային կայքում և www.youtube.com կայքում, ինչպես նաև հրապարակել դատարանի վճիռը:

30.07.2012թ. ընդհանուր իրավասության Դատարանը բավարարել է հայցադիմումը մասնակիորեն: Պատասխանողներ Սիրեկան Եղիազարյանին և «Բանաձև» ՍՊԸ պարտավորեցվել են հրապարակային բանավոր ներողություն խնդրել Հայցվոր Արա Գաբուզյանից: Սիրակ Եղիազարյանը և «Բանաձև» ՍՊԸ պարտավորեցվել էին նաև հերքել Հայցվոր Ա. Գաբուզյանի վերաբերյալ զրպարտություն համարվող հետևյալ փաստացի տվյալները. Նրանք ասում են. «Մենք աշխատում ենք ծավալի վրա, մեզ բովանդակությունը չի կարևոր», «ըստ մասնագետների իմ գրավոր աշխատանքն ավելի քան հինգ միավոր էր և ավելի քան ութ միավոր էր»:

«Բանաձև» ՍՊԸ-ն պարտավորեցվել էր հերքել Հայցվոր Ա. Գաբուզյանի վերաբերյալ զրպարտություն համարվող հետևյալ փաստացի տվյալները. «Մայր բուհում դիմորդի գրավորը անբավարար են գնահատել առանց բովանդակությունը ստուգելու՝ միայն ծավալին նայելով», «Քննության արդյունքի մասին բացատրություն ստանալու փոխարեն Սիրակը լսում է. «Կարևորը գրավորի ծավալն է, թե քանի էջ ես լցրել», «Խնդրի լրջությունը գնահատականից հեռու է գնում. իրավաբաններն ակնհայտ կասկած ունեն, որ գործը կոռուպցիոն ռիսկեր ունի: Դիմում են կրթության գիտության նախարարություն, որ գործն ուսումնասիրեն և հավանական կոռուպցիան կանխեն...: Թաքնված կոռուպցիայի կասկած հայտնում է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ...: Սխալներ գտնելու համար նախարարությունը նայեց ամեն տեղ բացի այնտեղից, որտեղ սխալներ հաստատ կգտնեն», «Պատմությունը մեկ դասախոսի կամ մեկ ամբիոնի սխալն է»:

«Բանաձև» ՍՊԸ պարտավորեցվել էր հրապարակել դատարանի վճռի ամբողջական տեքստը՝ Հայցվորներից ներողություն խնդրելու մասին ցուցանող համապատասխան նշումով:

Դատարանն իր վճիռը պատաճառաբանել էր նրանով, որ.

1. պետական ոչ առևտրային կազմակերպությունը չի կարող հանդիսանալ պատիվ և արժանապատվություն ոչ գույքային իրավունքներ կրող սուբյեկտ և չի

կարող այդ իրավունքների խախտման պաշտպանության հայց ներկայացնել դատարան: Հետևաբար, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ներկայացված պահանջով պատշաճ Հայցվոր չէր, իսկ հայցն այդ մասով մերժման ենթակա.

2. Պատասխանող Սոնա Հարությունյանի նկատմամբ ներկայացված պահանջը ենթակա էր մերժման՝ նման հայցերով դատարան դիմելու համար օրենքով նախատեսված առավելագույն (6 ամսյա) ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ.
3. Հայցվոր Արա Գաբուզյանի մասով ներկայացված պահանջները հիմնավոր էին և ենթակա բավարարման այն պատճառով, որ Դատարանը գնահատել էր այս Հայցվորի հասցեին կատարված և հայցով մատնանշված արտահայտություններից ոմանց վիրավորական, իսկ մյուս մասի՝ զրպարտչական լինելը.
4. Վերը նշված վիրավորական և զրպարտիչ արտահայտությունները կատարվել էին հրապարակային, քանի որ դրանք հեռարձակվել էին հեռուստատեսությամբ, ինչպես նաև դրա մասին հանրությանը տեղեկացվել է նաև համաշխարհային համակարգչային ցանցով.
5. Դատարանն ուշադրություն էր դարձրել նաև այն հանգամանքի վրա, որ Պատասխանողների կողմից հաղորդման ընթացքում որպես առաջնային նպատակ ընկալման տեսանկյունից փորձ էր կատարվել արտահայտվելու ազատության միջոցով արատավորել Արա Գաբուզյանի պատիվը և արժանապատվությունը: Վկայակոչելով համանման իրավիճակի առնչվող ՄԻԵԴ-ի կողմից (*Շաբանով/ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի/ Shabanov and Tren v. Russia*, 14/12/2006, դիմում թիվ 5433/02) գործով համապատասխան վճռով տրված կարգավորումները՝ Դատարանը նկատել էր, որ սույն դեպքում Պատասխանողներից «Բանաձև» ՍՊԸ-ն գործել էր միայն Սիրեկան Եղիազարյանի կողմից ներկայացված փաստերի հիման վրա, որոնց իրականության համապատասխանելիությունն այդպես էլ չէր ապացուցվել, և բարեխղճության տեսանկյունից փորձ չէր կատարվել բացահայտել դեպքի մյուս մասնակիցների կարծիքը ևս:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Սույն գործի վերլուծության մեջ, ստորև, անդրադարձ է կատարվել արտահայտվելու ազատության այն հիմնարար սկզբունքներին, որոնք առավելապես կարևոր են սույն գործի շրջանակներում և կարող էին ազդել Պատասխանողների արտահայտվելու ազատության սահմանափակման վրա:

Արտահայտությունների հանրային շահի առարկա լինելու հանգամանքը

Խնդրո առարկա արտահայտությունների կատարման համար առկա հանրային գերակա շահի հարցը անտեսվել է ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Մինչդեռ, համաձայն թե միջազգային իրավունքի նորմերի (ՄԻԵԿ–ի 10–րդ հոդված), թե ներպետական իրավունքի նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1087.1–րդ հոդվածի 5–րդ մաս) արատավորող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը կարող էր սահմանափակվել նաև այն դեպքերում, երբ նման տեղեկությունների հրապարակումը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է եղել հանրային գերակա շահով, և դրանք հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցում է, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է համապատասխան միջոցներ պարզելու համար դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվությունն, անշուշտ հանդիսանում է հանրային ուշադրության կենտրոնում գտնվող տեղեկատվություն, ապաև տվյալ հրապարակումը հանրային գերակա շահ լինելու բերումով կարող էր ներգրավել քաղաքացիական օրենսգրքի վերջին նշված նորմով նախատեսված պաշտպանական կառուցակարգը Պատասխանողների համար: Սակայն հանրային գերակա շահի առկայությունն ինքնին չի ընձեռում բացարձակ պաշտպանություն այս հիմքով: Թեկուզև դատարանի կողմից ուշադրության չէր արժանացել հրապարակումների հանրային գերակա շահի շրջանակներում լինելու հանգամանքը, այնուամենայնիվ այդ հրապարակումներում տեղ գտած տեղեկությունների՝ Հայցվոր Ա. Գաբուզյանի պատվի և արժանապատվության համար արատավորող լինելու հանգամանքը և այդ արտահայտություններում տեղ գտած թե փաստերի, թե գնահատողական դատողությունների համար նույնիսկ նվազագույն փաստական տվյալների բացակայությունը բավարար հիմք էր Դատարանի կողմից կատարված եզրահանգման համար:

Միաժամանակ, հարկ է նաև նշել, որ ընդհանուր իրավասության Դատարանի կողմից հրապարակված նյութի միակողմանիության վերաբերյալ բերված հիմնավորումները ամրապնդում են հանրային գերակա շահի շրջանակներում կատարված արտահայտությունների համար Պատասխանողների արտահայտվելու ազատությանը միջամտելու՝ պետության տեսանկյունից թույլատրելիությունը, իսկ Հայցվորի պատվի և արժանապատվության տեսանկյունից՝ անիրաժեշտությունը:

Սույն գործով կայացված դատական ակտով Պատասխանողների արտահայտվելու ազատության պետության կողմից դրսևորված միջամտությունը, հետևաբար, նաև վճռում բերված պատճառաբանությունները հաշվի առնելով, ամբողջությամբ համատեղելի է Սահմանադրությամբ և ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածով նախատեսված միջամտությանն առաջադրվող եռաթև թեսթի պահանջներին:

«ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔ» ԵԿԵՂԵՑԻ» ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ, ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ «ԻՐԱՎՈՒՆՔ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ», «ԱՐԳՈՒՄԵՆՏԻ ՆԵԴԵԼԻ Վ ԱՌՄԵՆԻԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Գործի հանգամանքները

31.07.2012թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության, Արթուր Սիմոնյանի (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ «Իրավունք հետաքննություն», «Արգումենտի նեղելի վ Առմենիի» շաբաթաթերթի, ի դեմս լրատվական գործունեություն իրականացնող «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Պատասխանողներ)՝ պատիվն ու արժանապատվությունը, բարի համբավը արատավորող տեղեկությունները հերքելու և ներողություն խնդրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, վճռեց հայցը մերժել:

Թերթի հողվածներում նյութի հեղինակը գրում է, որ.

«Սենսացիոն բացահայտումներ, բացառիկ հարցազրույցներ և նմանատիպ «գայթակղիչ», այլ վերտառություններով են ողողված այսօրվա որոշ լրատվամիջոցները՝ դերասանուհի Անժելա Սարգսյանի, նրա «տղամարդու» և այդ երկու անձանց ընտանիքի անդամների փոխհարաբերությունները հանրության մանրակրկիտ հետազոտության առակա դարձնելուն: Անշուշտ, մենք առհասարակ չէինք անդրադառնա հայկական շոու-բիզնեսին այդքան բնորոշ անառակաբարո վարքագծի և, մասնավորապես, զագրելի պոռնոկադրերի թեմային, եթե չլինեք երկու հանգամանք: Առաջինը, որ պոռնոսկանդալի «հերոսուհի» Անժելա Սարգսյանը պատկանում է Հայաստանի խոշորագույն աղանդին՝ կյանքի խոսքին... »:

Այնուհետև հողվածագիրը կոնկրետ հղում է կատարում՝ նշելով սկզբնաղբյուրը.

«... Քր.գործով կալանավորված անձի մայրը՝ Մարինա Արայանը, հրապարակավ մեղադրել է աղանդավոր-տաղանդավոր դերասանուհուն՝ սեփական զավակի նկատմամբ անառակաբարո գործողությունների մեջ...»:

Այնուհետև հողվածագիրը գրում է.

«Կյանքի խոսք աղանդավորական միավորումը հայ հասարակության մեջ տարածված է որպես մի կազմակերպություն, որի թաքուն կամ բացահայտ ազդեցությունը տարածվում է նաև որոշ հեռուստաընկերությունների և իշխանական օղակների վրա...»:

Հողվածագիրը, հղում անելով սկզբնաղբյուրին, գրում է.

«Կարենի մայրն ահաբեկված է լրջագոյնս: Ահա նրա խոստովանությունը. «Շատ եմ տանջվում հիմա, որ չէի հավատում տղայիս, շատ եմ վիճել իր հետ: Բայց ինքն ինձ ասում էր. մամա, ինքն ինձ սպառնում է, գլուխ է գոլում, որ ինքն ու ամուսինը մեծ օղակներում ունեն ինչ–որ լավ հովանավորներ, սպառնում էր, որ իր մեջքին կանգնած է ամենաուժեղ, ամենահզոր եկեղեցին, կարծես «կյանքի խոսք», այդպես էր ասում: Եվ որ իրենք այտեղ շատ լավ դիրքերում են, անգամ, որ իր քույրն այնտեղ ավագ է: Ես միշտ հարցնում էի. ինչ ունես դու վախենալու, ինչից ես վախենում, թող իր քույրը լինի ավագ, թող լինի ինքը «կյանքի խոսքում», թող վերին օղակներում ունենան հովանավորներ, ինչ ունես արած, որ վախենում ես: Ասում էր, ես ոչինչ արած չունեմ, բայց իր կողմից ամեն ինչ սպասում եմ, որովհետև նա շատ վտանգավոր մարդ է...»:

Այնուհետև հողվածագիրը շարունակում է.

«Հանրությանը հուզում է նաև մեկ այլ հարց. հանդիսանում է արդյոք Անժելան «կյանքի խոսքի» անդամ վերջին բացահայտումներից հետո: Եթե այո, ապա պարզ է դառնում, թե որ «աստվածներին» նկատի ուներ դերասանուհի Անժելա Սարգսյանը, խոստովանելով «Կո՛վախնձորին», թե հաճախ է աղոթում...»:

Հողվածի վերևի մասում դրվում է կոլաժային (ծաղրանկարային) լուսանկար, որտեղ տեղադրվում է դերասանուհի Անժելա Սարգսյանի լուսանկարը, կողքը՝ Հայցվոր Արթուր Սիմոնյանի կոլաժային լուսանկարը, վրան գրված՝ կյանքի խոսք, ետևի պլանում տղամարդու լուսանկար, վերնագրված կտոր մը «կյանքի խոսք» հետևյալ գրառությամբ. «Ծո Ղազար, ասիգա մեր Անժելան է: Հրեշտակին անառակ մի ըսեր, մեղք է: Աղանդաավետարան՝ ըստ Արթուր Սիմոնյանի»:

Դատարանի վերլուծությունը

Լրատվական միջոցներով հրապարակված նյութերով հաստատվում է, որ լուսանկարները և արտահայտությունները վիրավորանք և զրպարտություն չեն կարող համարվել, քանի որ դրանք կրել են լրագրողի կողմից իր աշխատանքի բնույթի հետ կապված որոշակի չափազանցված բնույթ, որի պարագայում լրագրողը դիմել է որոշակի սադրանքների՝ իրականացնելով առկա տեղեկությունների հիման վրա իր լրագրողական աշխատանքը՝ հիմնական մտքի, խոսքի, ազատության սկզբունքներին և պայմանավորված օրենքի պահանջներով:

Միաժամանակ Դատարանը նշում է, որ վիճահարույց արտահայտություններում չեն օգտագործվել վիրավորական, կամ զրպարտչական բառեր և մտքեր: Թեև դրանք ձևակերպված են որոշ չափազանցություններով, սակայն, ընդհանուր առմամբ, ցուցաբերվել է հավասարակշռված մոտեցում, հղում է կատարվել սկզբնաղբյուրին, որն ամբողջությամբ համապատասխանում է խոսքի մատուցման լրագրողական ազատության թույլատրելի շրջանակներին: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ տվյալ հողվածները և լուսանկարները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ պայմանավորված են գերակա հանրային շահով:

Այս գործում լրագրողների հրապարակած քննադատական խոսքերը կարելի է համարել կարծիք: Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ գործի փաստերից հետևում է, որ վերոհիշյալ արտահայտություններով և լուսանկարներով հրապարակած փաստական տվյալները, չնայած կրել են հրապարակային բնույթ, սակայն անգամ իրականությանը համապատասխանելու փաստից անկախ՝ չեն հանդիսանում Հայցվորների պատիվն ու արժանապատվությունն արատավորող նպատակ, մասնավորապես, վերը հիշատակված հողվածներում Հայցվորների կողմից, որպես վիրավորական և զրպարտչական համարվող արտահայտությունները, թեև արվել են որոշ աստիճանի չափազանցությամբ, նույնիսկ լրագրողի կողմից հիշատակված արտահայտությունների միջոցով դրսևորվել է սադրանք, դրանցում նշված առանձին արտահայտությունների տեսքով, որոնք ձիշտ է, Հայցվորների համար վրդովեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող են, սակայն Դատարանն արձանագրում է, որ տպագրված նյութերում տեղ գտած արտահայտությունների միջոցով լրագրողը գործել է բազմակարծության սկզբունքով, ուստի վերջինիս կողմից կատարած արտահայտությունները, Հայցվորների կողմից որպես կրոնական կազմակերպության և կազմակերպության առաջնորդի կողմից պետք է դիտվեն հատուկ հանդուրժողականությամբ, որովհետև վերջիններիս նկատմամբ քննադատության շրջանակներն ավելի լայն են, քան մասնավոր անձանց և այդ առումով նրանք ավելի հանդուրժող պետք է լինեն իրենց անձի նկատմամբ հնչած քննադատության նկատմամբ (*Պակդեմիրլիին ընդդեմ Թուրքիայի/Pakdemirli v. Turkey*, 22/02/2005, դիմում թիվ 35839/97, 45–րդ պարբերություն): *Ջերուսալեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v Austria*, 27/02/2001, դիմում թիվ 26958/95, 38–րդ պարբերություն) գործում ՄԻԵԴ–ը գտավ, որ ցանկացած անհատ կամ միավորում կարող է լինել քննադատության թիրախ սկսած այն պահից, երբ այն մուտք է գործում հասարակական քննարկումների դաշտ:

Տվյալ դեպքում Դատարանը հաստատված է համարում, որ հողվածները և լուսանկարները տպագրվել են դերասանուհի Անժելա Սարգսյանի հետ կապված սկանդալային դեպքերից հետո միայն, որտեղ վերջինիս անձը կապվել է կրոնական կազմակերպության հետ, իսկ կրոնական կազմակերպությունն էլ դիտվել է որպես աղանդավորական կազմակերպություն և ենթարկվել է քննադատության: Այն պահից սկսած, երբ Հայցվորները մուտք են գործել հասարակական քննարկումների դաշտ, վերջիններս պետք է դրսևորեն որոշակի զսպվածություն քննադատող արտահայտությունների վերաբերյալ, քանի որ դրանք ընդհանուր առմամբ կրում են բաց բանավեճի տարրեր՝ հետապնդող հասարակության մոտ կրոնական որոշ գաղափարներ սերմանելու, կամ Հայ Առաքելական եկեղեցու դավանանքից չլեզվելու նպատակով, այլ ոչ անձնավորված վիրավորանք կամ զրպարտություն հասցնելու: ... Պատասխանող ընկերության և նյութի հեղինակի կողմից մամուլում տպագրված նյութերում պարունակող բառերն ակնհայտ նպատակ են հետապնդել լուսաբանելու, քննադատելու կրոնական կազմակերպության, նրա ղեկավարի գործունեությունը, այդ կերպ առաջացնել արձագանքներ, հետևաբար նյութում տեղ գտած արտահայտությունները չեն կարող դիտվել վիրավորական և զրպարտչական բնույթի:

Հողվածագրի կողմից հողվածում նշված աղանդ բառը դատարանը, դիտում է որպես հողվածագրի գնահատողական դատողության արդյունք: Դատարանն արձանագրում է, որ դատաքննության ընթացքում հայցվորների ներկայացուցիչը ընդունել, որ հայցվորները կապ չունեն Հայ Առաքելական եկեղեցու հետ:

«...Գործով ձեռք բերված ապացույցներով դատարանն արձանագրում է, որ Հայցվորների կողմից ծավալված գործունեությունը շեղված է Հայ Առաքելական եկեղեցու հավատքից, նրա ծեսերը և խորհուրդները չեն համապատասխանում եկեղեցու կրոնական և ավանդական սկզբունքներին: Այն ապացուցվում է նաև Վեհափառ Հայրապետին ուղղված Պատասխանողի ներկայացուցչի փաստաբանական հարցման պատասխանից, ուստի դատարանը գտնում է, որ հողվածի հեղինակի Հայցվոր կազմակերպությանն աղանդ որակելը նպատակ չի հետապնդել վերջինիս վիրավորելու կամ գրպարտելու, այլ եղել է հեղինակի կարծիքն ու գնահատականը տվյալ կրոնական կազմակերպության և կազմակերպության ղեկավարի վերաբերյալ»:

Առաջին ատյանի դատարանի վճռի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Հաշվի առնելով հողվածի շարադրման ոճը, ինչպես նաև այն ուղեկցող կոլաժային պատկերը, հարկ է անդրադառնալ ՄԻԵԿ-ի կողմից սահմանված սկզբունքային մոտեցումներին նմանօրինակ արտահայտությունների վերաբերյալ:

ՄԻԵԿ-ը հետևողականորեն լրացուցիչ պաշտպանություն է տրամադրել արտահայտվելու ազատությանն այն դեպքում, երբ գրպարտչական հայտարարությունն արվել է հումորային կամ երգիծական ոճով, քանի որ հումորային և երգիծական արտահայտությունները, նմանակումները, իրենց բնույթով ներառում են սադրանք և չափազանցություն: Հումորային կամ երգիծական հայտարարության արգելումը կզրկի դիմումատուին արտահայտվելու ազատությունից, մինչդեռ դրա թույլատրումը Հայցվորի հեղինակության վրա կունենա չնչին ազդեցություն՝ հաշվի առնելով հայտարարության պարզորոշ հումորային ոճը (*Նիկովիցն ընդդեմ Ավստրիայի/Nikowitz v. Austria*, 22/02/2007, դիմում թիվ 5266/03, 26-րդ պարբերություն):

Վերեյնիգանգ Բիլդեներ Կանսլերն ընդդեմ Ավստրիայի (Vereinigung Bildener Künstler v. Austria, 25/01/2007, դիմում թիվ 68354/01, 33-րդ պարբերություն) գործով կայացված վճռով ՄԻԵԿ-ը նշել է, որ նկարը ունեցել է երգիծական բնույթ և նպատակ է ունեցել խեղաթյուրելու իրականությունը և սադրելու, հետևաբար նման արտահայտության նկատմամբ միջամտությունը պետք է քննարկվի առանձնակի զգուշությամբ:

Տվյալ գործով հողվածն ուղեկցող նկարի հումորային և երգիծական ոճը ակնհայտ է եղել ընթերցողի համար, հետևաբար, դրա ազդեցությունը Հայցվորների հեղինակության վրա նույնպես փոքր է եղել: Վիճարկվող հողվածները պարունակել են մի շարք արտահայտություններ, որոնք նույնպես շարադրված են եղել հումորային ոճով, առկա են եղել նաև մի շարք գնահատողական դատողություններ: Այնուամենայնիվ,

հարկ է նշել, որ հողվածում առկա որոշ արտահայտություններ ձևակերպված են որպես փաստական տվյալներ (statement of fact), սակայն Դատարանի կողմից որակվել են որպես գնահատողական դատողություն, օրինակ հայցվոր կազմակերպության՝ ադանդ լինելու վերաբերյալ ձևակերպումները:

Խնդրահարույց կարող է համարվել հետևյալ արտահայտությունը. «պոռնոսկանդալի «հերոսուհի» Անժելա Սարգսյանը պատկանում է Հայաստանի խոշորագույն ադանդին՝ կյանքի խոսքին...»: Այս արտահայտության արատավորող բնույթը հենց կայանում է նրանում, որ հանրությունը կարող է Ա. Սարգսյանի՝ նշյալ կրոնական կազմակերպությանը պատկանելության փաստից անել որոշակի հետևություններ կազմակերպության գործունեության վերաբերյալ՝ հաշվի առնելով Ա. Սարգսյանի վարքագիծը: Վերոգրյալ նախադասությունը շարադրված է, որպես փաստացի տվյալ: Այնուհետև հողվածում չակերտներով մեջբերելով այլ անձի /քրեական գործով կալանավորված անձի մոր՝ Մարինա Արայանի/ ուղղակի խոսքը, նշվում է, որ «...իր մեջքին կանգնած է ամենաուժեղ, ամենահզոր եկեղեցին, կարծես «կյանքի խոսք», այդպես էր ասում: Եվ որ իրենք այտեղ շատ լավ դիրքերում են...»:

Վերոնշյալ մեջբերումներից ակնհայտ է, որ հողվածում արված հայտարարությունն առ այն, որ Ա. Սարգսյանը պատկանում է «Կյանքի խոսք»-ին, հիմնված է երրորդ անձի կողմից արված հրապարակային հայտարարության վրա: Այս առնչությամբ քննարկման առարկա պետք է դառնային այլ անձանց խոսքի վերարտադրության պաշտպանության համատեքստում ՄԻԵԴ-ի դիրքորոշումները՝ գնահատելու համար, թե որքանով է լրագրողի կողմից արված հայտարարությունը Ա. Սարգսյանի համապատասխան կազմակերպությանը պատկանելության վերաբերյալ, եղել հիմնավորված, ինչպես նաև որքանով է հաջողվել լրագրողին պատշաճ հեռավորություն ապահովել է իր և համապատասխան հայտարարությունն արած անձի միջև: Այսպես, ՄԻԵԴ-ի նախադեպային դիրքորոշումները երրորդ անձանց խոսքի պաշտպանության վերաբերյալ հետևյալն են.

Հարցազրույցների վրա հիմնված լրատվական ծրագրերը, անկախ նրանից՝ խմբագրված են, թե ոչ, հանդիսանում են ամենակարևոր միջոցները, որոնցով մամուլը կարող է իրականացնել հասարակության «սկիզբի» իր կենսական դերը (տես վերոնշյալ *Օբզերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության/Observer and Guardian v the UK*, 26/11/91, դիմում թիվ 13585/88, 59 (բ) պարբերություն): Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչնդոտի՝ հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ (*Ջերսիլդն ընդդեմ Դանիայի/Jersild v Denmark*, 23/09/1994, դիմում թիվ 15890/89, 35-րդ պարբերություն): Մինևույն ժամանակ, իրավիճակը փոխվում է, երբ լրագրողը փորձում է հաստատել կամ որդեգրել զրպարտչական հայտարարությունը: *Թոմասն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Thoma v. Luxembourg)*, 29/03/2001, դիմում թիվ 38432/97, 64-րդ պարբերություն) գործով կայացված վճռով դատարանը նկատել է, որ լրագրողը հնարավոր է «որդեգ-

րել» է թերթի հոդվածի մի մասը, որ նա մեջ է բերել ռադիոյով: Այնուամենայնիվ, նա մերժել է այն փաստարկը, որ ըստ որի լրագրողների նկատմամբ առկա է ընդհանուր պահանջ, ըստ որի նրանք պարտավոր են սիստեմատիկորեն և ձևականորեն իրենց հեռու պահել այլ անձանց գրպարտող մեջբերման բովանդակությունից:

Վերոգրյալ բոլոր սկզբունքների լույսի ներքո քննարկման էր ենթակա նաև գրպարտչական հայտարարություններն ստուգելու՝ լրագրողի պարտականության խնդիրը: ՄԻԵԴ-ը սահմանել է, որ հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձին արատավորող փաստական տվյալները / statement of fact/ ստուգելու պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «գրպարտության բնույթից և աստիճանից» և նրանից, թե որքանով են ՁԼՄ-ները ողջամտորեն հուսալի համարում իրենց աղբյուրները, որոնց հիման վրա անդումներ են արել (*Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի/Pedersen and Baadsgaard v. Denmark*, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78-րդ պարբերություն, *Բլադետ Թրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի/Bladet Tromsø and Stensaas v. Norway*, 20.03.1999, դիմում թիվ 21980/93, 65-րդ պարբերություն, *Մաքվիքարն ընդդեմ Միացյալ Թագավորության/McVICAR v. the United Kingdom*, 07/05/2002, դիմում թիվ 46311/99, 84-րդ պարբերություն): Վերջնական գնահատականը պայմանավորված կլինի բոլոր վերոգրյալ սկզբունքների համակարգային վերլուծությունից և գործի փաստերի հետ համադրումից:

Հոդվածի հանրային նշանակության համատեքստում հարկ է անդրադառնալ նաև առաջին առյուծի Դատարանի հետևյալ դիրքորոշմանը.

«Վերոհիշյալ լուսանկարում և հոդվածներում պարունակող արտահայտություններից ու հոդվածի ողջ բովանդակությունից հետևում է, որ հեղինակի կողմից հրապարակված նյութը վերաբերվում է **հասարակական հնչեղություն ստացած դերասանուհի Անժելա Սարգսյանին**, ինչպես նաև առնչվում է կրոնական կազմակերպությանը և վերջինիս կողմից իրականացվող գործունեությանը, հետևաբար, դատարանը գտնում է, որ ներկայացված հայցը պետք է դիտարկել հիշատակված էական փաստերի հաշվառմամբ, քանի որ նմանօրինակ անձանց վերաբերյալ մամուլում արտահայտած դիրքորոշումները ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներում կրում է առավել լայն կանոնակարգում, որտեղ խոսքի ազատության իրավունքը դրսևորվում է առավել լայն ծավալով»:

Խնդրահարույց է դատարանի կողմից Անժելա Սարգսյանի, որպես հասարակական հնչեղություն ստացած դերասանուհու, բնորոշումը, որով դատարանը պայմանավորել է խոսքի ազատության իրավունքի առավել լայն ծավալով դրսևորումը: ՄԻԵԴ-ի կողմից հետևողականորեն տարբերակվել են այն դեպքերը, երբ առկա է հասարակության տեղեկացված լինելու իրավունքը և երբ հրապարակումը ծառայում է զուտ որոշ ընթերցողների հետաքրքրասիրությունը բավարարելուն (*Ստանդարտ Վերլագս ԳմբԻ-ն ընդդեմ Ավստրիայի/Standard Verlags GmbH v. Austria*, 04/06/2009, դիմում թիվ 34702/07, 32-րդ պարբերություն):

Խնդրահարույց է նաև գերակա հանրային շահի վերաբերյալ դատարանի կողմից տրված հիմնավորումը, որը բացատրվել է լրագրողի կողմից հավասարակշռված մոտեցման ցուցաբերմամբ և սկզբնաղբյուրին հղում կատարելու հանգամանքներով:

Որոշ ՄԻԵԴ-ի նախադեպեր և սկզբունքներ դատարանի կողմից վկայակոչվել են առանձին սխալ ձևակերպումներով, ինչը գործնականում հանգեցրել է սկզբունքի իմաստային փոփոխությանը:

ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՅՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Գործի փաստական հանգամանքները

Այս գործով Ռուբեն Հայրապետյանը (այսուհետ՝ Պատասխանող) «Լրացուցիչ ժամանակ» 26.05.2012թ. Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված «Լրացուցիչ ժամանակ» սպորտային հաղորդման ժամանակ հրապարակավ ասել է.

«Երբ որ ես Վանաձորում ուզում եմ ֆուտբոլի դպրոցը կառուցեմ, ոչ մի ծառ, ոչ մի թուփ չկա, սարի վրա դպրոց եմ կառուցում, բայց չգիտես ինչի հայտնվեց Հելսինկյան մի հատ ինչ որ անհասկանալի օղերով մի հատ շան ծնունդ ու բռնեց դատի տվեց մեզ, քաղաքապետարանին, ավագանու որոշմանը, այդ թվում ֆեդերացիան էլ որպես երրորդ կողմ, Պատասխանող կողմ»:

Հայցվոր Արթուր Սաքունցը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահն է: «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն մինչ այդ հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի և Վանաձորի համայնքի ավագանու մի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Այս դատավարությանը ներգրավվել էր նաև Պատասխանող Ռուբեն Հայրապետյանի կողմից ղեկավարվող «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը՝ որպես երրորդ անձ:

Պատասխանողի կողմից կատարված արտահայտություններով իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորած լինելու հիմքով Հայցվորը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) էր դիմել ետևյալ պահանջներով.

- Պարտավորեցնել Պատասխանող Ռուբեն Հայրապետյանին՝ Հայցվորից ներողություն խնդրել՝ կից ներկայացնելով նաև ներողության տեքստը, և
- Պատասխանողից բռնագանձել 1 ՀՀ լումա գումար:

Դատարանը 29.08.2012թ. մերժել է հայցն այն պատճառաբանությամբ, որ չէր ապացուցվել, որ Ռ. Հայրապետյանի հրապարակած արտահայտությունները վերաբերում էին Հայցվորին, ինչպիսի դիրքորոշում էր արտահայտել նաև Պատասխանողի ներկայացուցիչը: Վճիռը վերաքննիչ քաղաքացիական դատարան չէր բողոքարկվել և մտել էր օրինական ուժի մեջ:

Դատական ակտի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Ինչպես երևում է այս գործով դատական քննության բովանդակային հատվածը սահմանափակված է եղել միայն Պատասխանող Ռ. Հայրապետյանի կողմից կատարված արտահայտությունների Հայցվոր Ա. Սաքունցին ուղղված լինելու հանգամանքի պարզմանը: Հաստատված համարելով, որ Պատասխանողի արտահայտությունները չեն վերաբերել Հայցվորին՝ ընդհանուր իրավասության Դատարանը դրանով բավարարվելով սահմանափակել է պատճառաբանությունների շարադրանքը, միայն նախապես առավել ընդհանուր բնույթի սկզբունքներ վկայակոչելով:

Այս կապակցությամբ նկատելի է, որ գրապարտության և/կամ վիրավորանքի գործերով հաճախակիանում են պոտենցիալ Պատասխանողների կողմից դատավարական իրավունքների պաշտպանությամբ թույլ տրված վիրավորանքի և/կամ գրապարտության համար պատասխանատվությունից հաջողությամբ խուսափելու փորձերը: Կոնկրետ սույն գործի հանգամանքների կապակցությամբ հարկ է նշել, որ Պատասխանողի կողմից թույլ տրված արտահայտությունները Պատասխանողի հասցեին ուղղված չլինելու հանգամանքը, ի տարբերություն, օրինակ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ–ն ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի գործով Պատասխանողի, ուղղակիորեն հաստատվել էր հենց Պատասխանողի ներկայացուցչի կողմից: Անկախ այն հանգամանքից, թե որքանով են արժևորում (իսկ կոնկրետ գործերի շրջանակներում՝ թե որքանով պակաս են արժևորում) կոնկրետ Պատասխանողները իրենց հրապարակային խոսքը և դրանով պայմանավորված հնարավոր պատասխանատվությունից չխուսափելու ազնիվ կեցվածքը, այնուամենայնիվ՝ նույնիսկ նման խուսափողական դիրքորոշումները դատարաններում ներկայացվելը (թեկուզև այսպիսի Պատասխանողների ներկայացուցիչների կողմից) Հայցվորի պատվին հասցված վնասի հարցով գործերով կարող է լուծում/լուծման միջոց լինել: Նման դեպքերում Պատասխանողների ներկայացուցիչների կողմից դատավարական իրավունքների առավելագույն օգտագործմամբ հրապարակավ արտահայտված դիրքորոշումներից կամ այդ դիրքորոշումների հասցեատերերից խուսափելու մոտեցումը, թեկուզև ամբողջությամբ կարող է տեղավորվել դատավարական և իրավական պաշտպանության տրամաբանության մեջ, սակայն (նամանավանդ) հրապարակային գործիչ Պատասխանողների պարագայում նման դիրքորոշումները կարող են այդ Պատասխանողների հրապարակային հեղինակությանն ավելի վնասել, քան այդպիսին կարող էր լինել նրանց կողմից այլ անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի նկատմամբ վիրավորանքի կամ գրապարտության միջոցով ոտնձգելու փաստի ճանաչումը դատարանի կողմից:

ՖԱՐԱՈՆ ՄԻՐԶՈՅԱՆ ԸՆԴԴԵՄ
«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՉԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻ

Գործի հանգամանքները

02.10.2012թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի Ֆարաոն Միրզոյանի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի հրատարակիչ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի, Սերգեյ Գասպարյանի (այսուհետ՝ Պատասխանողներ)՝ Հայցվորին արատավորող տեղեկությունները հերքելու, Պատասխանողներից համապարտության կարգով զրպարտության համար 2.000.000 ՀՀ դրամ, վիրավորանքի համար 1.000.000 ՀՀ դրամ, փաստաբանին վճարված՝ 300.000 ՀՀ դրամ, նախապես վճարված պետական տուրքի գումարների բռնագանձման պահանջների մասին, վճանեց հայցը մերժել:

Հայցվոր Ֆարաոն Միրզոյանը հանդիսանում է Ազգային պատկերասրահի տնօրենը:

2011թ. ապրիլի 9-ին «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ կողմից հրատարակվող «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի համարում, ինչպես նաև «Չորրորդ ինքնիշխանություն» ինտերնետային կայք էջում, որտեղ նույն թերթը հրապարակվում է էլեկտրոնային տարբերակով, տեղ է գտել Կարինե Աշոտյանի հեղինակությամբ «Ճանաչել Փարավոնին» վերնագրով հրապարակումը ներքոհիշյալ բովանդակությամբ.

«Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը Հայաստանի գեղարվեստական ակադեմիայի 65-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառման ժամանակ վիրավորվել է, որ իրեն պարզևատրում են «ընդամենը» շնորհակալագրով և «Արվեստի վաստակավոր գործչին շնորհակալագիր չեն տալիս» բառերն ասելով՝ ցուցադրաբար հրաժարվել է փարավոնին ոչ վայել պարզև վերցնել կրթության նախարար Արմեն Աշոտյանի ձեռքից: ... Պարզաբանումներ ստանալու համար երեկ զանգահարեցինք շնորհակալագիրը դպրոցական գովասանագրի հետ շփոթած և հանդիսությանն առնվազն Նոբելյան մրցանակի ակնկալիքով գնացած ու հիասթափված Փարավոն Միրզոյանին:

... Այնուամենայնիվ, մենք փորձեցինք հասկանալ՝ պետք էր արդյոք Փարավոն Միրզոյանին հայ արվեստում ունեցած երկարամյա վաստակի համար պարզևատրել շնորհակալագրով,

թե՛ ոչ: ... Բավական է հիշել «Հայապակի» ՓԲԸ-ից ապակեգործ Սերգեյ Գասպարյանի՝ Ազգային պատկերասրահին ի պահ տրված մոտ 800 աշխատանքների յուրացման և վաճառելու պատմությունը: Գասպարյանը բաց նամակով դիմել էր բոլոր հնարավոր ատյաններին՝ Փարավոնին մեղադրելով իր ստեղծագործությունների ցուցադրությունը միտումնավոր ձգձգելու, դրանց կեսը յուրացնելու և «Գլաս Ուորլդ Քամփրնի» ընկերության սեփականատեր Ա.Քոչարյանին վաճառելու մեջ: Բաց նամակներից մեկում Գասպարյանը Փարավոնի մասին գրել է. «Միրզոյանը հոշոտել, թալանել է թանգարանը... Ես նրա պորտետը նկարելու եմ ու վրան գրելու եմ՝ աշխարհի ամենամեծ սրիկան: Նկարիչը ոնց կարող է կենդանի նկարչի գործերը թալանի ու վաճառի»: ... Այս խնդրին պարբերաբար անդրադարձած «Հետք» ներկայացրել էր նաև Գասպարյանի հետևյալ խոսքերը. «Ասում են՝ աշխատանքները վերադարձված են: Սուտ է, նրանք ցույց չեն տալիս իմ աշխատանքները, որովհետև դրանք չկան: Ես պատկերացնում եմ, որ եթե կենդանի նկարչի օրոք այդպիսի ավագակություն է կատարվում, մահացած նկարիչների աշխատանքների հետ ինչ է կատարվում այնտեղ...»:

Հայցվորը հողվածում գետեղված հետևյալ արտահայտությունները՝

1. «Բավական է հիշել «Հայապակի» ՓԲԸ-ից ապակեգործ Սերգեյ Գասպարյանի՝ Ազգային պատկերասրահին ի պահ տրված մոտ 800 աշխատանքների յուրացման և վաճառելու պատմությունը»:
2. «Իսկապես, գուցե կրթության և գիտության նախարարը ծերունագարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու և վաճառելու գործում ունեցած վաստակի և ավանդի համար է որոշել Փարավոնին այսպես շնորհակալագիր տալ»:
3. «Բայց պետք է խոստովանել, որ անգամ ամեն ինչ տեսած հայ հասարակության համար աննախադեպ է արվեստագետի կողմից արվեստագետին օրը ցերեկով անպատիժ կողոպտելը, և Փարավոնը բոլոր հիմքերն ուներ՝ փարավոնավայել պարզև ակնկալելու»: Իսկ նշված հրապարակումներում վկայակոչված Պատասխանող Սերգեյ Գասպարյանի հետևյալ արտահայտությունները 1. «Գասպարյանը բաց նամակով դիմել էր բոլոր հնարավոր ատյաններին՝ Փարավոնին մեղադրելով իր ստեղծագործությունների ցուցադրությունը միտումնավոր ձգձգելու, դրանց կեսը յուրացնելու և «Գլաս Ուորլդ Քամփրնի» ընկերության սեփականատեր Ա.Քոչարյանին վաճառելու մեջ, 2. «Բաց նամակներից մեկում Գասպարյանը Փարավոնի մասին գրել է. «Միրզոյանը հոշոտել, թալանել է թանգարանը... Ես նրա պորտետը նկարելու եմ ու վրան գրելու եմ՝ աշխարհի ամենամեծ սրիկան...» արտահայտությունները համարել է վիրավորական, իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող նպատակ հետապնդող՝ որակելով այն որպես վիրավորանք և զրպարտանք Հայցվորի անձի հանդեպ:

Դատարանի վերլուծությունը

Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող հողվածում Հայցվորի պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները, ինչպես նաև

գրպարտություն և վիրավորանք պարունակող արտահայտությունները հիմնականում պարունակում են «Հետք» ինտերնետային լրատվամիջոցում հրապարակված Սերգեյ Գասպարյանի հարցազրույցների բառացի մեջբերումներ /08.11.2010, 20.12.2010թ. հրապարակված հոդվածներ/: Ըստ էության Հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հրապարակային ներկայացվել է Ս.Գասպարյանի հարցազրույցների հիման վրա «Հետք» լրատվական կայքի միջոցով լրագրող Կ.Աշուղյանի հեղինակությամբ: Տվյալ պարագայում Դատարանը գտել է, որ Հայցվորը բաց է թողել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված հերքման պահանջ ներկայացնելու մեկամյա ժամկետը, քանի որ տվյալ լրատվամիջոցում այդ հոդվածների հրապարակումից հետո չի դիմել հերքում կամ պատասխան հրապարակելու պահանջով:

Դատարանը փաստել է նաև, որ տվյալ պարագայում լրատվական միջոցը սույն գործով պատշաճ Պատասխանող չի հանդիսանում, քանի որ նյութը հրապարակվել է լրագրող Կ.Աշուղյանի կողմից և վիճարկվող հոդվածում վերջինիս արտահայտած կարծիքի կամ «գնահատողական դատողությունների» հիմք է հանդիսացել «Հետք» ինտերնետային լրատվամիջոցում 08.11.2010թ., 20.12.2010թ. հրապարակված Սերգեյ Գասպարյանի հարցազրույցները:

Դատարանն արձանագրել է, որ Հայցվորի կողմից վիճարկվող հոդվածի հեղինակը լրագրողն է և ոչ թե լրատվության միջոցը, կոնկրետ դեպքում լրագրող Կ.Աշուղյանը, որի մասնագիտական գործունեության իրականացման համար չի կարող պատասխանատվություն կրել լրատվության միջոցը: Նման մեկնաբանության հիմքում դրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 9-րդ մասը:

Միաժամանակ դատարանը նշել է, որ վիճահարույց արտահայտությունները թեև ձևակերպված են որոշ չափազանցություններով, սակայն հղում է կատարվել սկզբնաղբյուրին, որն ամբողջությամբ համապատասխանում է խոսքի մատուցման լրագրողական ազատության թույլատրելի շրջանակներին, այն իր բովանդակությամբ կրկնում է նախկինում հրապարակված նյութի եզրահանգումը:

Առաջին ատյանի դատարանի վճռի իրավական վերլուծությունը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Սույն գործով կայացված դատական քննությունն աչքի է ընկել Հայցվոր, Պատասխանող կողմերի և առաջին ատյանի Դատարանի կողմից ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի բավականին բազմակողմանի վերլուծությամբ:

Այսպես, Հայցվորի կողմից վկայակոչվել են *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82)*, *Գալինա Չերնիշևան ընդդեմ ՌԴ-ի* գործերով կայացված վճիռները:

Պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանով մեջ են բերվել ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներ, այդ թվում՝ *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria, 08/07/1986, դիմում թիվ 9815/82)*, *Պրագերն և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի (Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974)*, *Դե Հասը և Գիյսելսն ընդդեմ Բելգիայի (De Haes and Gijssels v. Belgium, 24/02/1997, դիմում թիվ 19983/92)*, *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02)*, *Կարմանն ընդդեմ Ռուսաստանի (Karman v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 29372/02)*, *Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (Grinberg v. Russia, 21/07/2005, դիմում թիվ 23472/03)* գործերով կայացված վճիռները:

Իսկ Դատարանը վճռի պատճառաբանական մասում վկայակոչել է *Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի (Shabanov and Tren v. Russia, 14/12/2006, դիմում թիվ 5433/02)*, *Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK, 07/12/1976, դիմում թիվ 5493/72)*, *Դե Հասը և Գիյսելսն ընդդեմ Բելգիայի (De Haes and Gijssels v. Belgium, 24/02/1997, դիմում թիվ 19983/92)*, *Ջերուսալեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria, 27/02/2001, դիմում թիվ 26958/95)*, *Պրագերն ու Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի (Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90)* գործերով կայացված վճիռները համապատասխան հատվածներով:

Մեծ մասամբ վերը թվարկված բոլոր վճիռները վկայակոչվել են գործին վերաբերող պատշաճ համատեքստերում:

Դատարանի կողմից տեղին է կատարվել հղումը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին՝ լրագրողի կողմից վիճահարույց արտահայտությունների որոշակի չափազանցված բնույթի մասով: Հոդվածն ընդհանուր առմամբ շարադրված է փոքր-ինչ հումորային և չափազանցաձված ոճով, «Հետք» լրատվական կայքում հրապարակված տեղեկությունները և Ս. Գասպարյանի հարցազրույցները Փարավոն Միրզոյանի կողմից Ս. Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու և վաճառելու վերաբերյալ, լրագրողի կողմից մեկնաբանվել և ներկայացվել են որոշակի հումորային երանգավորմամբ և գնահատականներով, որոնք պատշաճ ձևով Դատարանի կողմից որակվել են որպես լրագրողի կարծիք: Մասնավորապես, առաջին ատյանի Դատարանի կողմից արձարծվել է այն սկզբունքը, համաձայն որի՝ լրագրողական ազատությունը ենթադրում է որոշ աստիճանի չափազանցություն, նույնիսկ սադրանքի դրսևորում լրագրողի կողմից:

Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ-ը հետևողականորեն լրացուցիչ պաշտպանություն է տրամադրել արտահայտվելու ազատությանն այն դեպքում, երբ զրպարտչական հայտարարությունն արվել է հումորային կամ երգիծական ոճով, քանի որ հումորային և երգիծական արտահայտություններն իրենց բնույթով ներառում են սադրանք և չափազանցություն:

«Հետք» լրատվական կայքում 08.11.2010թ., 20.12.2010թ. հրապարակված հոդվածների վերլուծությունը վկայում է այն մասին, որ Դատարանի կողմից ձիշտ հետևու-

թյուն է կատարվել առ այն, որ լրագրողի կարծիքի կամ «գնահատողական դատողությունների» հիմք է հանդիսացել «Հետք» ինտերնետային լրատվամիջոցում հրապարակված Սերգեյ Գասպարյանի հարցազրույցները:

Այսպես, «Հետք» լրատվական կայքում Ս. Գասպարյանի հարցազրույցների հիման վրա հրապարակվել են տեղեկություններ Ս. Գասպարյանի կողմից տարիներ շարունակ երկրի Նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին, ՀՀ գլխավոր դատախազին, Վերահսկիչ պալատի նախագահին Ազգային պատկերասրահում իր թանգարանի հավաքածուի ձևակառուցման խնդրով դիմելու, իր գործերը Փ. Միրզոյանի կողմից «Գլաս Ուորլդ Քամփրնի» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Քոչարյանին վաճառելու, Փ. Միրզոյանի կողմից միտումնավոր, տարիներով թանգարանի ցուցադրությունը ձգձգելու, ազգային արժեք ներկայացնող պետական թանգարանի մեծ մասը վաճառելու, Սերգեյ Գասպարյանի ստեղծած թանգարանը փրկելու կոչով Ռուսաստանի երեք նկարիչների կողմից 2008թ. հունիսին ՀՀ Կառավարությանը նամակ ուղարկելու, Սերգեյ Գասպարյանի կողմից Ազգային պատկերասրահ վերադարձված աշխատանքներն իր ստեղծագործությունները լինելը հերքելու, Փ. Միրզոյանի կողմից ազգային մշակութային արժեք ներկայացնող բյուրեղապակյա եզակի գործերի ամբողջական թանգարանը թալանելու, կործանելու վերաբերյալ տեղեկություններ: Բացի այդ, Ս. Գասպարյանի հարցազրույցներից արվել են մի շարք ուղղակի մեջբերումներ, որոնք վկայակոչվել են նաև «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի վիճարկվող հոդվածում: Տեղադրված են եղել նաև հարցազրույցի տեսաձայնագրություններ:

20.12.2010թ. «Հետք» լրատվական կայքում հրապարակված՝ «Ես ցավում եմ, որ այդ մարդը հիվանդ է, ես կարող էի նրան շանտաժի համար դատի էլ տալ» վերտառությամբ հոդվածը վերարտադրել է նույն թեմայի շուրջ Փ. Միրզոյանի հետ ունեցած հարցազրույցը:

Ինչ վերաբերում է լրագրողի կողմից արված վիճահարույց արտահայտություններին, ինչպիսիք են, օրինակ, կրթության և գիտության նախարարի կողմից ծերունազարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու և վաճառելու գործում ունեցած վաստակի և ավանդի համար Փարավոնին շնորհակալագիր տալու, անգամ ամեն ինչ տեսած հայ հասարակության համար արվեստագետի կողմից արվեստագետին օրը ցերեկով անպատիժ կողոպտելու հանգամանքի աննախադեպ բնույթի, փարավոնավայել պարզև ակնկալելու համար Փարավոն Միրզոյանի կողմից հիմքեր ունենալու մասին արտահայտություններին, ապա դրանք պատշաճորեն Դատարանի կողմից գնահատվել են որպես գնահատողական դատողություն՝ հիմնված վերոնշյալ տեղեկությունների վրա:

Տվյալ հարցում ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մոտեցումը հետևյալն է.

«Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ

գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց (*Դիչանդը և այլոք ընդդեմ Ավստրիայի/ Dichand and Others v. Austria/ 26/02/2002, դիմում թիվ 29271/95, 41–րդ պարբերություն*):

Արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն արտահայտված տեղեկությունների և գաղափարների բովանդակությունը, այլև այն ձևը, որով դրանք արտահայտվել են (*Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի/ Feldek v. Slovakia, 12/07/2001, դիմում թիվ 29032/95, 72–րդ պարբերություն*): Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար (*Եվրոպափրես Հոլդինգ Դ.Օ.Օ. ընդդեմ Խորվաթիայի/ Europapress Holding D.O.O. v. Croatia, 22/10/2009, դիմում թիվ 25333/06, 66–րդ պարբերություն*): Հանրային հսկիչի իրենց դերը կատարելիս լրատվամիջոցների լուսաբանումը պատմությունների, ասեկոսենների կամ հանրային կարծիքի լույսի ներքո պետք է պաշտպանված լինի, եթե այն լիովին անհիմն չէ (*Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի/ Thorgeir Thorgeirson v. Iceland, 25/06/1992, դիմում թիվ 13778/88, 63–րդ պարբերություն*): Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչնդոտի՝ հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ (*Ջերսիլդն ընդդեմ Դանիայի/ Jersild v. Denmark, դիմում թիվ 15890/89, 35–րդ պարբերություն*): Լրագրողների նկատմամբ ընդհանուր պահանջը, ըստ որի նրանք պարտավոր են պարբերաբար և ձևականորեն իրենց տարանջատել այլ անձանց վիրավորող, սադրող կամ նրանց հեղինակությանը վնասող մեջբերման բովանդակությունից անհամատեղելի է ընթացիկ դեպքերի, կարծիքների և գաղափարների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու մամուլի դերի հետ (*Թոմանն ընդդեմ Լյուքսեմբուրգի/ Thoma v. Luxembourg, 29/03/2001, դիմում թիվ 38432/97, 64–րդ պարբերություն*):

Ըստ ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի՝ հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձին արատավորող փաստացի տվյալները /statement of fact/ ստուգելու պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «զրպարտության բնույթից և աստիճանից» և տեղեկատվությունը տրամադրող աղբյուրների վստահելիությունից (*Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի/ Pedersen and Baadsgaard v. Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78–րդ պարբերություն, Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20.03.1999, դիմում թիվ 21980/93, 65–րդ պարբերություն*):

Հումորային կամ երգիծական հայտարարության արգելումը կզրկի դիմումատուին արտահայտվելու ազատությունից, մինչդեռ դրա թույլատրումը հայցվորի հեղինակության վրա կունենա չնչին ազդեցություն հաշվի առնելով հայտարարության պարզորոշ հումորային ոճը (*Նիկովիցն ընդդեմ Ավստրիայի/ Nikowitz v. Austria, 22/02/2007, դիմում թիվ 5266/03, 26–րդ պարբերություն*):

Քննարկվող գործով վիճարկվող հոդվածում տեղ գտած զրպարտչական հայտա-

րարություններն արդեն իսկ մինչ այդ հրապարակվել էին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցում, որին էլ հղում էր կատարվել համապատասխան հոդվածում՝ որոշ դեպքերում մեջքերելով նաև Ս. Գասպարյանի ուղղակի խոսքը: Դատարանը քննարկման առարկա չի դարձրել վիճարկվող փաստերը լրագրողի կողմից ստուգելու պարտականության հարցը՝ նկատի ունենալով առաջին հերթին արդեն իսկ նշված տվյալների հրապարակման փաստը այլ լրատվամիջոցում և դրանց վիճարկված չլինելու հանգամանքը:

ԻԶԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ ԸՆԴԴԵՄ
«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գործի հանգամանքները

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի (այսուհետ՝ Պատասխանող) նախաձեռնությամբ «Ազգ» օրաթերթի 20.05.2008թ. ներդիրում տպագրվել է Ռսկան Սարգսյանի «Ում գրպանն են մտնում ավազահանքի փողերը» վերնագրով հոդվածը: Հոդվածում հեղինակը քննարկել է Աղստն գետի վրա «Սպիտակ ջուր» ջրամբարից ավազահանման հարցը: Հոդվածագիրը վկայակոչել է ավազ տեղափոխող վարորդին, ըստ որի «լճից մի մեքենա ավազ վերցնելու համար 8 հազար դրամ են վճարում, իսկ ավելի մեծ տարողությամբ մեքենան ավազ բեռնելու համար մինչև 20 հազար դրամ է պահանջվում»: Այսուհետև հոդվածագիրը նշել է, որ ըստ իրեն հայտնի դարձած տեղեկությունների՝ այդ բիզնեսը գտնվում է Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո: Հոդվածն ուղեկցվել է լուսանկարներով, որոնցում պատկերված են ավազահանման աշխատանքներ: 26.05.2008թ. «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն նույնաբովանդակ տեղեկություններ է հրապարակել իր ինտերնետային կայքում:

Ստորև ներկայացվում են հոդվածի համապատասխան հատվածները.

«Լճի երկայնքով է ձգվում դեպի Երևան տանող մայրուղին, և ամեն օր հազարավոր ուղևորներ ականատես են լինում լճից ավազի արդյունահանմանը: Արդեն մի քանի տարի այստեղ գործում են հզոր էքսկավատորներ և ամբարձիչներ: Իջևանի և Դիլիջանի վարչատարածքներում հիմա շինարարական բում է, և ավազի կարիք շատ է զգացվում: Դիլիջան քաղաքում ընթացող շինարարության համար այստեղից ավազ տեղափոխող վարորդը վկայեց, որ լճից մի մեքենա ավազ վերցնելու համար 8 հազար դրամ են վճարում: Ավելի մեծ տարողությամբ մեքենան ավազով բեռնելու համար մինչև 20 հազար դրամ է պահանջվում: Ովքեր են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք լիճը տիղմից մաքրելու պատճառաբանությամբ անօրինական, չհարկվող մեծ եկամուտներ են ստանում:

Մեր ունեցած տեղեկությամբ՝ այս բիզնեսը գտնվում է Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո: Այն պաշտոնապես ճշտելու համար 2007 թ. հոկտեմբերին լճից ավազի արդյունահանման կապակցությամբ նամակով դիմեցի Տավուշի մարզի դատախազություն»:

Գործի դատավարական նախապատմությունը

2008թ. հունիսին Իջևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Հայցվոր) դիմել է Դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ին նույն լրատվամիջոցներով հերքելու Իջևանի քաղաքապետարանի դեմ հրապարակված անհիմն տեղեկությունները և քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող լուրերը, ինչպես նաև Պատասխանողից հոգուտ Հայցվորի բռնագանձելու որպես վնասի հատուցում 930.000 ՀՀ դրամ գումարի չափով փաստաբանական ծախսերը: 10.07.2009թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հայցը մերժել է:

Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել Իջևանի քաղաքապետարանը և քաղաքապետ Վ. Ներսիսյանը: Վերաքննիչ դատարանն իր 13.11.2009թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել և գործն ուղարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն և «Ազգ» օրաթերթ ՍՊԸ-ն, որը վճռաբեկ դատարանի 20.06.2010 որոշմամբ վերադարձվել է: Դատարանը 09.07.2010թ. վճռով հայցը բավարարել է:

2010թ. հուլիսի 9-ին Դատարանը, քննելով սույն քաղաքացիական գործը, վճռել է հայցը բավարարել: Դատարանը գտել է, որ տվյալ պարագայում, Պատասխանողի գործողություններով արատավորվել են Իջևանի քաղաքապետարանի գործարար համբավը և Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվն ու արժանապատվությունը: Դատարանն անդադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասին՝ ըստ որի քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը:

Դատարանը նշել է նաև, որ դատաքննության ընթացքում Պատասխանող կողմը որևէ պատշաճ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ վերջինիս կողմից հրապարակված տեղեկությունը համապատասխանել է իրականությանը, այսինքն՝ գործի դատաքննությամբ Պատասխանողը չի կատարել իր՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասով իմպերատիվ սահմանված պարտավորությունը, մասնավորապես՝ չի ապացուցել, որ հոդվածով նշված տեղեկությունները համապատասխանում են իրականությանն, ինչը նշանակում է, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը և մտացածին տեղեկություններ են, իսկ քանի որ Դատարանը վերոգրյալ վերլուծություններից կատարել է հետևություն, որ նշված հոդվածում տեղ գտած տեղեկություններն իրականում արատավորում են Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվն ու արժանապատվությունը, ուստի, նման պարագայում, Դատարանը գտել է, որ այդ տեղեկությունները ենթակա են հերքման:

Հայցվոր կողմի հերքման պահանջը համարելով բավարարման ենթակա՝ Դատարանը գտել է, որ բավարարման է ենթակա նաև վնասների հատուցման պահանջը, այսինքն՝ Պատասխանողից որպես Հայցվորի կողմից կատարված, իրավունքների պաշտպանությանն ուղղված ծախսեր 930.000 ՀՀ դրամի չափով գումարի բռնագանձման (որպես հատուցում) պահանջը նույնպես ենթակա է բավարարման, քանի որ Հայցվորի կողմից կատարվել են իր իրավունքների պաշտպանությանն ուղղված ծախսեր: Դատարանը վճռել է հայցը բավարարել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 2010թ. դեկտեմբերի 27-ին քննելով քաղաքացիական գործով «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճռի դեմ, որոշել է այն բավարարել մասնակի, Պատասխանողից հոգուտ Իջևանի քաղաքապետարանի բռնագանձել 450.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի ծախս: Բողոքը մնացած մասով մերժվել է: Դատարանը հիմնավոր է համարել ընդհանուր իրավասության Դատարանի եզրահանգումը Իջևանի քաղաքապետ Վ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորված լինելու մասին: Դատարանը փաստել է, որ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի տարածած տեղեկությունները, վերաբերելով Իջևանի քաղաքապետ Վ. Ներսիսյանին, հավասարապես վերաբերել են և Վ. Ներսիսյանին՝ որպես պաշտոնատար անձի և, հետևաբար, անմիջականորեն Իջևանի քաղաքային համայնքին՝ որպես իրավաբանական անձի: Դրանք նույնպես վերաբերելի են եղել նաև Իջևանի քաղաքապետարանին, քանի որ վերջինս՝ ի դեմս քաղաքապետ Վ. Ներսիսյանի, իրականացնելով տեղական ինքնակառավարում հանդես է եկել համայնքի անունից և գործել ի շահ համայնքի: Դատարանը, անդրադառնալով դատական ծախսի ողջամիտ չափի վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկներին, խելամիտ վարձատրության չափ է համարել 450.000 ՀՀ դրամը:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանն իր 14.04.2011թ. որոշմամբ վերադարձվել է:

Դատական ակտերի իրավական վերլուծությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 10-րդ հոդվածի և արտահայտվելու ազատության ոլորտում ընդունված միջազգային իրավական այլ չափորոշիչների լույսի ներքո

Դատարանների կողմից իրականացված վերլուծություններում որևէ հղում չի կատարվել ՄԻԵԴ-ի նախադեպերին և դրանցից բխող սկզբունքային դիրքորոշումներին խոսքի ազատության իրավունքի պաշտպանության ոլորտում:

Հոդվածի հանրային նշանակությունը

Դատարանների կողմից կայացված ակտերով քննարկման առարկա չի դարձել համապատասխան հրապարակումներում հանրային շահի առկայության հարցը, մինչդեռ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից ակնհայտորեն բխում է զրպար-

տության գործերով հանրային շահի առկայության ազդեցությունը՝ 10-րդ հոդվածի խախտման գնահատման վրա:

«Թեև մամուլը չպետք է անցնի ընդունված սահմանները, որոնց թվում են «ազգային անվտանգության շահերը», «դատարանի հեղինակության պահպանումը», այն պարտավոր է ներկայացնել հանրային շահին առնչվող տեղեկություններ և գաղափարներ: Հասարակությունն էլ իր հերթին իրավունք ունի դրանք ստանալու: Այլ պարագայում մամուլը կգրկվեր «հանրային հսկիչի» իր առաքելությունից» (*Օբզերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության/ Observer and Guardian v the UK*, 26/11/91, դիմում թիվ 13585/88, 59 (բ) պարբերություն):

ՄԻԵԴ-ի կողմից տարբեր գործերով կայացված վճիռներով մոտավոր ուրվագծվել են հանրային շահին առնչվող հիմնահարցերը, որոնց թվում են պետական ռեսուրսների վատ կառավարումը (*Դալբանն ընդդեմ Ռումինիայի/ Dalban v. Romania*, 28/09/1999, դիմում թիվ 28114/95, 48-րդ պարբերություն) տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիայի երևույթները *Կումպանան ընդդեմ Ռումինիայի/Cumpana v. Romania*, 17/12/2004, դիմում թիվ 33348/96, 44 (ա) պարբերություն) և այլն:

Հետևաբար, Հոդվածով քննարկվող՝ Իջևանի համայնքային սեփականություն հանդիսացող «Սպիտակ ջուր» ջրամբարի ապօրինի ավազահանման խնդիրները ակնհայտորեն մտնում են հանրային շահին առնչվող խնդիրների շրջանակի մեջ:

Հայցվորի կարգավիճակը

Հայցվորները տվյալ գործով Իջևանի քաղաքապետարանը և Իջևանի քաղաքապետն են: Անդրադառնալով Իջևանի քաղաքապետի, որպես, համայնքի ղեկավարի, կարգավիճակին, հարկ է անդրադառնալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված հետևյալ սկզբունքներին.

«Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ ... ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան (*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի/Lingens v. Austria*, 08/07/1986, դիմում թիվ 9815/82, 41-42-րդ պարբերություններ, *Ինքալն ընդդեմ Թուրքիայի/Incal v. Turkey*, 09/06/1998, դիմում թիվ 22678/93, 46-րդ պարբերություն):

“Տեղական խորհուրդը, լինելով ընտրովի մարմին, պետք է դրսևորի հանդուրժողականության բարձր աստիճան քննադատության նկատմամբ (*Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալթայի/ Lombardo and others v. Malta*, 24/04/2007, դիմում թիվ 7333/06, 54-րդ պարբերություն):

Դատարանների կողմից, սակայն, Հայցվորի կարգավիճակը և դրանով պայմանավորված՝ նրա նկատմամբ քննադատության հանդեպ առավել բարձր աստիճանի հանդուրժողականության դրսևորման անհրաժեշտությունը քննարկման առարկա չեն

դարձել: Խնդրահարույց է նաև Իջևանի քաղաքապետարանի Հայցվորի կարգավիճակ ունենալու հարցը, ինչպես հողվածի բուն բովանդակության, այնպես էլ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո:

Փաստեր և գնահատողական դատողություններ

Դատարանների կողմից պատշաճ կարգով չեն իրականացվել փաստերի և գնահատողական դատողությունների տարբերակումն ու վերլուծությունը: Գործի քննությունն իրականացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի /նախկին խմբագրությամբ/ կիրառմամբ, որն ուներ հետևյալ շարադրանքը.

«Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկությունները տարածող անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը»:

Այս կարգավորման առնչությամբ հարկ է հիշատակել *Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Grinberg v. Russia, 21/07/2005, դիմում թիվ 23472/03, 28-29-րդ պարբերություններ)* գործով կայացված վճիռը, որով ՄԻԵԴ-ը շեշտել է փաստական տվյալի և գնահատողական դատողության տարբերակման կարևորությունը: Տվյալ գործով ներպետական դատարանները հանգել էին մի հետևության, որի համաձայն՝ դիմումատու էնթակա էր պատասխանատվության, քանի որ չէր կարողացել ապացուցել իր հայտարարության («Պարոն Շամանովը չունի ոչ ամոթ, ոչ պատկառանք») ճշմարտացիությունը: Դատարանը նշել էր, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքը տարբերակում չի կատարում գնահատողական դատողության և փաստական տվյալի միջև, քանի որ այն հղում է կատարում ընդհանուր առմամբ «տեղեկություն» («сведения») արտահայտությանը և ելնում է այն կանխավարկածից, որ ցանկացած նման հայտարարություն ենթակա է ապացուցման քաղաքացիական դատավարության շրջանակներում: Անկախ «տեղեկությունների» բուն բովանդակությունից, անձը, որը տարածել է նման տեղեկություններ (statements), պետք է դատարաններում հիմնավորի դրանց ճշմարտացիությունը (ՌԴ Գերագույն դատարանի պլենումի որոշում): ՄԻԵԴ-ը նշել է, որ հաշվի առնելով վերոգրյալ օրենսդրական դրույթները, ներպետական դատարանները չեն վերլուծել, թե արդյոք դիմումատուի կողմից վիճարկվող արտահայտությունը կարող էր հանդիսանալ գնահատողական դատողություն, որը ենթակա չէ ապացուցման: Գտնելով, որ վիճարկվող արտահայտությունները հանդիսացել են գնահատողական դատողություններ, ինչպես նաև հաշվի առնելով գործի այլ առանձնահատկությունները, ՄԻԵԴ-ը ճանաչել է 10-րդ հոդվածի խախտում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը/նախկին խմբագրությամբ/ նույնպես «տեղեկություններ» ձևակերպումն էր ներառում՝ առանց տարբերակում կատարելու գնահատողական դատողությունների և փաստական տվյալների միջև:

Վիճարկվող հողվածներում առկա են եղել ինչպես գնահատողական դատողություններ, այնպես էլ փաստական տվյալներ:

Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia, 12/07/2001, դիմում թիվ 29032/95, 75–76–րդ պարբերություններ) գործում դատարանը շեշտել է.

«Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10–րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է: Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց»:

Արատավորող բնույթ ունեցող հայտարարություններն ստուգելու լրագրողի պարտականության առնչությամբ ՄԻԵԴ–ի կողմից մշակված մոտեցումները հետևյալն են.

«Կոնվենցիայի 10–րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի պահանջներին համապատասխան» (*Բլադետ Թրոմսոն և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/05/1999, դիմում թիվ 21980/93, 65–րդ պարբերություն, Պրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի/Prager and Oberschlick v. Austria, 26/04/1995, դիմում թիվ 15974/90, 37–րդ պարբերություն: ՄԻԵԿ–ի 10–րդ հոդվածի 2–րդ մասին համապատասխան՝ այս ազատության իրականացումը ենթադրում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: Այս պարտականություններն ու պատասխանատվությունը ձեռք են բերում էական նշանակություն, երբ արատավորվում է անհատի հեղինակությունը և խախտվում են «այլոց իրավունքները»: «Որքան ավելի լուրջ է արված հայտարարությունը, այնքան ավելի ամուր փաստական հիմքեր են անհրաժեշտ այն հիմնավորելու համար» (*Եվրոպայի չորեքուկու Նորվեգիայի Դ.Օ.Օ. ընդդեմ Եվրոպայի/ Europapress Holding D.O.O. v. Croatia, 22/10/2009, դիմում թիվ 25333/06, 66–րդ պարբերություն):* Հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձին արատավորող փաստացի տվյալները /statement of fact/ ստուգելու պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «գրապարտության բնույթից և աստիճանից» և նրանից, թե որքանով են ՋԼՄ–ները ողջամտորեն հուսալի համարում իրենց աղբյուրները, որոնց հիման վրա պնդումներ են արել (*Պեդերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի/ Pedersen and Baadsgaard v. Denmark, 17/12/2004, դիմում թիվ 49017/99, 78–րդ պարբերություն, Բլադետ Թրոմսոն և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի/ Bladet Tromsø and Stensaas v. Norway, 20/03/1999, դիմում թիվ 21980/93, 65–րդ պարբերություն, Մաքվիքարն ընդդեմ Միացյալ Թագավորության/ McVICAR v. the United Kingdom, 07/05/2002, դիմում թիվ 46311/99, 84–րդ պարբերություն): Պետք է նկատի ունենալ նաև ՄԻԵԴ–ի կողմից սահմանված այն սկզբունքը /reasonable publication defence/, որի համաձայն՝ ողջամիտ հրապարակման պաշտպանությունը ենթադրում**

է, որ, երբ լրագրողը կամ հրապարակումն ունի իրավաչափ նպատակ, վերաբերում է հանրային մտահոգության խնդրին և լրագրողի կողմից ողջամիտ ջանքեր են գործադրվել փաստերն ստուգելու ուղղությամբ, լրատվամիջոցը չպետք է պատասխանատվություն կրի, եթե նույնիսկ ապացուցվի, որ համապատասխան փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

Վերոգրյալ սկզբունքների լույսի ներքո դատարանների կողմից պետք է հատկապես քննարկման առարկա դարձվեին հետևյալ հանգամանքները. «Սպիտակ ջուր» ջրամբարից ապօրինի ավազահանման փաստը, որը չէր վիճարկվել Հայցվորի կողմից, դրա հիման վրա հողվածներում արված գնահատողական դատողությունների պաշտպանվածությունը, մինչ հողվածի հրապարակումը հողվածի հեղինակի կողմից արված հարցումները մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ Իջևանի քաղաքապետ Վ. Ներսիսյանին առ այն, թե արդյոք որևէ անձ կամ կազմակերպություն իրավունք ունի օգտագործելու ջրամբարի ավազը և արդյոք ավազահանման արդյունքում պետական բյուջեի օգտին գանձվում են հարկեր, Վ. Ներսիսյանի կողմից սահմանված ժամկետում հարցմանը չպատասխանելու հանգամանքը, ավազահանման շարունակական բնույթը, վարորդի վկայությունը, որը վկայակոչվել էր հողվածում, ջրամբարի ապօրինի ավազահանման խնդրի հանրային մտահոգության խնդիր լինելու, ինչպես նաև համապատասխան գործունեության՝ Վ. Ներսիսյանի հսկողության ներքո գտնվելու հանգամանքի ճշտման ուղղությամբ Պատասխանողի կողմից ողջամիտ ջանքերի գործադրման հանգամանքները, տեղեկատվության՝ երկու լրատվամիջոցների կողմից տարածելու հանգամանքը:

Միջամտության համաչափության հարցը

Որպես փաստաբանի ծախս՝ 450.000 ՀՀ դրամի բռնագանձումը Հայցվորի օգտին իր հերթին խնդրահարույց է վերոգրյալ հանգամանքների լույսի ներքո: ՄԻԵԴ-ի կողմից սահմանված մի շարք նախադեպային վճիռներով ամրագրվել է համաչափության պահանջը վնասների փոխհատուցման չափերի կիրառման բնագավառում և շեշտվել է, որ անհամաչափորեն բարձր փոխհատուցման սահմանումը հանգեցնում է ՄԻԵԿ 10-րդ հողվածի խախտմանը (*Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի/ Romanenko and others v. Russia*, 08/10/2009, դիմում թիվ 11751/03, 48-րդ պարբերություն): Այս պահանջը նույնպես ամրագրվել է ԵԽ Նախարարների կոմիտեի 2004թ.-ի փետրվարի 12-ի՝ Զանգվածային լրատվամիջոցներում քաղաքական բանավեճի ազատության վերաբերյալ հռչակագրում: Թեև տվյալ դեպքում խնդրո առարկան փաստաբանական ծախսերն են հանդիսացել, սակայն դրանք նույնպես անհամաչափ ծանր բեռ են առաջացրել Պատասխանող լրատվամիջոցի համար, նկատի ունենալով վերջինիս խիստ սահմանափակ միջոցները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտությունը՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում արտահայտվելու ազատության իրավունքի ոլորտում միջազգային իրավունքի, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի նախադեպերով սահմանված սկզբունքների և չափորոշիչների իմացությունը և կիրառությունը կատարելագործելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի.

- Լրագրողները, փաստաբանները և դատավորները շարունակեն կատարելագործել իրենց գիտելիքները ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ոլորտում:
- Այդ նախադեպերով սահմանված հիմնարար սկզբունքները և չափորոշիչները կիրառելիս դատարանները կատարեն անհրաժեշտ վերլուծություններ և հետևություններ՝ դրսևորելով այդ սկզբունքները և չափորոշիչներն իրապես ընկալելու և տեղին կիրառելու ցանկություն, այլ ոչ՝ զուտ ձևական մոտեցում:
- Դատարաններն առավել խորքային ուսումնասիրության ենթարկեն ՄԻԵԴ-ի նախադեպային վճիռների փաստական հանգամանքները և ստուգեն, թե արդյոք կողմերի փաստարկումներում տեղ գտած զանազան ձևակերպումներ, իրոք, վերցված են վկայակոչված նախադեպային վճիռներից և արդյոք դրանք համապատասխանում են այդ վճիռների իրական ձևակերպումներին:
- Լրագրողներն իրենց հրապարակումներում կարողանան ճիշտ ձևակերպել փաստական տվյալները և գնահատողական դատողությունները, չներկայացնեն գնահատողական դատողությունները որպես փաստական տվյալներ, քանի որ հետազայում դա խոչընդոտներ կստեղծի դրանք հիմնավորելու գործընթացում:
- Լրագրողներն իրենց հրապարակումներում կարողանան ապահովել պատշաճ հեռավորություն իրենց և աղբյուրների միջև՝ խուսափելով աղբյուրի տեղեկությունները կամ գաղափարները որդեգրելուց:
- Ողջամիտ և բարեխիղճ հրապարակման սկզբունքի պահանջները նույնպես առավել քան էական են լրագրողների համար, որպեսզի լիարժեք չստուգված նյութը հրապարակելիս կարողանան օգտվել ողջամիտ հրապարակման պաշտպանությունից:
- Լրագրողները հստակ պատկերացնեն նաև հանրային շահի խնդիրների շրջանակը, ինչն իրենց պաշտպանության կառուցակարգերի անհրաժեշտ բաղադրատարրն է: Հանրային շահի խնդիրների շրջանակը ճիշտ պատկերացնելը նմանապես կարևոր է նաև փաստաբանների համար, որպեսզի վերջիններս ճիշտ կարողանան հիմնավորել իրենց փաստարկումները, ինչպես նաև դատավորների, որպեսզի կարողանան ճիշտ հիմնավորել դատական ակտերը:
- Լրատվամիջոցների դեմ հայցերի մերժման պարագայում լրատվամիջոցներին ներկայացնող փաստաբանները հետամուտ լինեն արտահայտվելու իրավունքի ազատության պաշտպանությանը մինչև վերջ՝ ընդհուպ մինչև անհիմն հայց հարուցած հայցվորների դեմ պատճառված վնասի փոխհատուցման հայցեր հարուցելը:
- Անգլերենի կամ ֆրանսերենի գերազանց տիրապետող իրավաբանների թիվ

աշխատի ՄԻԵԴ-ի նախադեպային վճիռների կարևորագույն սկզբունքները ճիշտ ձևակերպելու վրա, որպեսզի փաստաբանները և դատավորներն օգտագործեն հենց այդ ձևակերպումները և խուսափեն մի իրավիճակից, երբ տարբեր թարգմանությունների պատճառով նույն նախադեպային սկզբունքը մի տեսքով կարող է հայտնվել երկու անգամ՝ որպես երկու տարբեր սկզբունք:



ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ
Europe In Law Association

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ.

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՅԱՅՐԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ,
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝
ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ